



# ՊԱՏԱՆԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Յարուկ հրապարակություն

Ն.Յ.Դ. պարանեկան միությունների պարանիներու եւ վարիչներու համար



2024

ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ն.Յ.Դ. Բ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԻՒՆ

Ն.Յ.Դ. Բ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՆՈՒՐԴԻ  
ՊԱՏԱՆԵԿԱՆ ՆԱՐՑԵՐՈՒ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ

## ՊԱՏԱՆԻՒՆ ԱՇԽԱՐՀԸ

Յապուկ հրապարակությիւն  
Ն.Յ.Դ. պապանեկան միութիւններու  
պապանիներու եւ վարիչներու համար



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յօդուածագիր ընկերոջ անուն	Վերնագիր	Երկիր	Էջաթիվ
• Մարիա Գաբրիելեան	ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՆ ԱՌԻԹՈՎ... Պատանեկան Յանձնախումբ	<i>Սուրիա</i>	5
• Յօղիկ Աշղգեան	Հ.Յ.Դ. Բ.-ի Երիտասարդական Գրասենեակի խօսքը	<i>Հայաստան</i>	7
• Արամ Դանիէլեան	ԵՍ ՀԱՅ ՊԱՏԱՆԻՍ	<i>Հայաստան</i>	8
• Լիւսի Սուրատեան	ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ	<i>Հայաստան</i>	9
• Մարթա Չիլինգարեան	ԻՆՁ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՄԲՈՂՋ ՀԱՅ ԱԶԳԻ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ	<i>Արցախ</i>	10
• Լիլիթ Յարուբինեան	ՈՉԻՆՉ, ՄԻ ՕՐ ԲԱԽՏԸ ԿԸ ԺՊՏԱՅ	<i>Արցախ</i>	13
• Լինա Եուզպաշեան	* ԲԱՅՅԵՐԸ ԵՐԲ ՇԱՏԱՑԱՆ... * ԱՅՍ ՄԵԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՓՈՔՐԻԿ ԱՆԿԻՒՆՈՒՄ	<i>Արցախ</i>	14
	* ՄԻԹԵ ՍԱ՞ ԷՐ ՄԵՐ ԲԱԽՏՆ ԱՆՇՈՒՔ		15
			16
• Դալար Խայալեան	ԱՆՈՒՇ ՀԱՅՐԵՆԻԷ	<i>ԱՄՆ</i>	17
• Մարթա Չիլինգարեան	* ԵՍ ԶԵՉ ՈՒՉՈՒՄ ԵՄ ՇԱՏ ԱՄՈՒՐ ԳՐԿԵԼ	<i>Արցախ</i>	18
	* ՆՈՐԻՑ		19
	* ԱՅԼ ՉԱՐԸ ԵԿԱԲ		20
	* ԱՆԿԱՏԱՐ ՉԻ ՄԼԱՅ, ԿԱՆԵՆՔ ԼԻՈՎԻՆ		21
	* ԴՈՒՔ ՄԻ ԱՐԾԻՒ ԷՔ		23
• Կարեն Ապուստֆեան	ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԻՆ ՏԻՊԱՐԸ	<i>Լիբանան</i>	24
• Շանթ Միևասեան	ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԻՆ ԻՏԵԱԼՆԵՐԸ	<i>Լիբանան</i>	26
• Աննա Դալար Սրապոնեան	ՆԵՄԵՍԻՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ	<i>Լիբանան</i>	28
• Էմիլի Պօղոսեան	ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄՏԵԻ ԵՒ ՀՈԳՈՒ ԿՐԱՅ	<i>Իրան, Նոր Զուղա</i>	29
• Աննա Պետրոսեան	ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ԼԵՉՈՒՆ	<i>Սուրիա</i>	31
• Արիևա Պօշկեգենեան	ՊԱՏԱՆԻՆԵՐԸ	<i>Սուրիա</i>	32
• Սելա Ասթարճեան	ԿՈՒՄԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՄ ԴԻՏԱՆԿԻՒՆԵՍ	<i>Սուրիա</i>	33
• Լանա Համբարձումեան	ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՐՍ	<i>Սուրիա</i>	34
• Շողեր Տեր Յովհաննեսեան	«ՊԱՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ» ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ԸՆԴՄԵՋԵՆ	<i>Սուրիա</i>	35
• Սարին Սարգիսեան	ՓՈՔՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ	<i>Սուրիա</i>	36
• Առլի Զելլեան	ՄԻՆՉ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱՄԲԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՄ ՀԵՏ	<i>Գանատա</i>	37

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յօդուածագիր ընկերոջ անուն	Վերնագիր	Երկիր	Էջաթիվ
• Աննա Գայապալեան	ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ...	<i>Գանատա</i>	38
• Լիլիթ Ադամեան	ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ	<i>Գանատա</i>	39
• Փօլ Օհանեսեան	ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ	<i>Արեւմտեան Ամերիկա</i>	41
• Վահան Սօսիկեան	WHAT WE NEED TO LIBERATE ARTSAKH AGAIN	<i>Արեւմտեան Ամերիկա</i>	42
• Վրեժ Մովսեսեան	ԿԵԱՆՔՍ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ	<i>Արեւմտեան Ամերիկա</i>	43
• Չաւէն Ճուհարեան	AI	<i>Սուրիա</i>	44
• Յունաստանի Պ.Ս. «Չարթօնք» խումբ	Յ.Յ.Դ. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ Պ. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	<i>Յունաստան</i>	45
• Յ.Ե.Դ. Պատանիներու Կեդրոնական Վարչութիւն Արեւմտեան Ամերիկայի	Յ.Ե.Դ. Պատանիներու Կեդրոնական Վարչութեան գործունեութիւնը	<i>Արեւմտեան Ամերիկա</i>	46
• ՀԱՄԱՈՍ ԶԵԿՈՒՅԱԳԻՐ Յ.Յ.Դ Բ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱՆՁՆԱԿՈՒՄԲԻՆ 2019-2024			47
	<b>ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՅԱԾ ԱՄԱՆԸ</b>		58
• Խաժակ Գուլաճեան	Պատանեկան՝ իմ սեր, իմ կեանք	<i>Գանատա</i>	59
• Հրաչ Վարժապետեան	Անփոխարինելի դպրոցը	<i>Ֆրանսա</i>	61
• Մարի Մերտիսեան	Պատանիներու դաստիարակութեան առնչուած Նիւթերու քննարկումներ	<i>Հայաստան</i>	63
• Գրիգոր Տունկեան	Նիւթեր Սուրիոյ Յ. Յ. Դ. պատանեկան միութեան պատմութենէն	<i>Գանատա</i>	65
• Մակալի Թովմասեան	Բռնածաղրի գաղտնիքները	<i>Լիբանան</i>	72
• Ժան Հալլաճեան	Յ.Յ.Դ. պատանեկան միութիւնները՝ Անսթեթիք երաշխիքը դաշնակցական կուռ կազմակերպութեան	<i>Գանատա</i>	73
• Սեւան Շահպազեան	Մարդը, հայը, դաշնակցականը	<i>Սուրիա</i>	79
• Ֆելիքս Խաչատուրեան	Գծագրութիւն	<i>Ֆրանսա</i>	81
• Արման Դանիէլեան	Գծագրութիւն	<i>Հայաստան</i>	81
• Մելենա Մանուկեան	Գծագրութիւն	<i>Ջաւախք</i>	82
• Ալեքս Բարսեղեան Ալքինոս Մանիատաքիս	Խաչբառ	<i>Յունաստան</i>	83
• Սիլվա Ոսկերիչեան Ռիթա Մահտեսեան	Գտիր բառերը	<i>Յունաստան</i>	84

## ՆՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՆ ԱՌԻԹՈՎ...

*Ընկհ. Մարիա Գաբրիելյան  
Սուրիա*



Իրաւունք չունի մշակը գանգատելու բերքի անընդունելի վիճակէն ու հունձքի տկարութենէն եթէ վարուցանի օրերուն հեղգութեամբ մրափեց ու թերահաւատութեամբ գործեց: Իրաւունք չունի բողոքելու պտղատուններու չբերութենէն կամ հասկերու դատարկութենէն: Խոպան հողերը երբ մեր տրամադրութեան ներքեւ են ապա անոր մշակումն ու պարարտացումը ոչ թէ մեր նախասիրութենէն բխած աշխատանք պիտի ըլլայ, այլեւ նախասիրութեամբ ստանձնուած պատասխանատուութիւն: Ծանր պատասխանատուութիւն է, այո՛, յանձնառութիւն պահանջող գործ է, անտարակո՛յս, հետեւողական ընթացք, չհատնող համբերանք, լայն սիրտ ու լսող ականջ ակնկալող առաքելութիւն է պատանիներուն հետ աշխատիլը, հաստա՛տ: Սակայն ինչ փոյթ, երբ հերկելու, ակօսներ բանալու, արտը արգաւանդ դարձնելու, ցանելու ու տկնելու խղճով ու հոգատարութեամբ կատարուած աշխատանքէն ետք՝ կը քաղես ու կը հնձես աշխատանքիդ արդիւնքը: Ո՛հ, ինչ երանելի է այդ պահը երբ ականատես կը դառնաս ցանած սերմերուդ ու տունկերուդ ծլարձակման, ծակղման ու պտղաբերման:


Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու մէջ մեր վարիչներն ու դաստիարակները այս վսեմ գործով կը զբաղին: Կը պեղեն պատանիներու հոգիներու թաքուն ծալքերը եւ դուրս կը բերեն այնտեղ պահուած ստեղծագործութեան, հնարամտութեան, ազգային գործի նուիրման, ընկերասիրութեան ու մարդասիրութեան գոհարները:

Պատանիներու ներաշխարհի կազմաւորման մէջ մեծ դերակատարութիւն վերապահուած է անոնց հետ անմիջական աշխատանք ունեցողներուն՝ ծնողք, ուսուցիչ, վարիչ, դասընկեր ու միութեանական ընկեր: Յետեւաբար ինչքան լրջութիւն եւ տարբեր օղակներու հետ համագործակցութիւն կը պահանջէ այս աշխատանքը, որովհետեւ այստեղ դոյզն սխալն անգամ կրնայ իր հսկայական հետեւանքները ունենալ:

Մօտաւորապէս վեց տարի է, որ Յ.Յ.Դ. Բ.-ի Երիտասարդական Գրասենեակի պատանեկան հարցերու յանձնախումբը կ'աշխատի Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու վերաբերող օրակարգերով:

Սկզբնապէս մեր ծրագիրները ուղղուած էին վարիչներուն ու ընդհանուր վարիչ մարմիններուն, սակայն յանձնախումբը ընդլայնելով իր ծրագիրներուն շրջագիծը ներառեց նաեւ պատանիներուն յատուկ նախագիծեր, որոնց ընդմեջէն բացայայտուեցան տաղանդաւոր պատանիներ եւ յառաջացաւ անոնց միտքերն ու նորարարութեամբ յատկանշուած գաղափարները թուղթին յանձնելու միտքը եւ ահա ծնաւ այս հրատարակութիւնը պատրաստելու առաջարկը:

Յառաջիկայ էջերուն մէջ կարելի է ծանօթանալ պատանեկան յանձնախումբի կազմութեան օրէն մշակուած եւ իրականացուած աշխատանքներուն եւ գործունէութիւններուն:



Կ'ակնկալենք, որ դաշնակցության անդաստանի հունձքը՝ պատանիները եւ անոր մշակները՝ վարիչները ամենայն բժախնդրութեամբ կը շարունակեն իրենց աշխատանքը եւ համահայկական բնոյթի իրենց առաջարկները, տեսակետերն ու նախատեսումները ամենայն հարազատութեամբ ու համարձակութեամբ կը փոխանցեն պատանեկան յանձնախումբին՝ առ ի քննութիւն եւ համաձայն հնարաւորութեան՝ գործադրութիւն:

Այս հրատարակութիւնը այնքան գեղեցիկ մթնոլորտ ստեղծեց, որ տօնական առիթի վերածուեցաւ, արդ, շնորհաւոր հրատարակութիւն՝ պատանիներուն ու պատանիներուն հետ աշխատողներուն... Ամենամօտիկ առիթին կարելի է տօնախմբել եւ կենաց բարձրացնել:



**Յ.Յ.Դ. Բ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ԽՕՍԲ**

*Ընկի.Յողիկ Աշրգեան*  
**Յ.Յ.Դ. Բ.-ի երիտասարդական Գրասենեակի Նախաստի**




Յ.Յ.Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակին անունով կ'ողջու-  
նենք Յ.Յ.Դ. Պատանեկան Յանձնախումբի «Պատանիին Աշխարհը» թերթին  
հրատարակութիւնը, որուն մէջ ամփոփուած են «Պատանի Ախոյեանը»  
մրցաշարքին տաղանդաւոր պատանիներու ստեղծագործութիւնները եւ  
առհասարակ Յ.Յ.Դ. աշխարհասփիւռ պատանեկան միութիւններու պատա-  
նիներու գրութիւնները:

Այս նախաձեռնութեան նպատակներէն էր Յ.Յ.Դ.-ի յարկին տակ  
հասակ նետող պարմանուհիներուն եւ պատանիներուն ներաշխարհն ու  
ստեղծագործական միտքը զարգացնելն ու անոնց տարբեր արտայայ-  
տութիւններու ներկայացման հարթակ տրամադրել: Զննական եւ կառուցողա-  
կան մտածողութեան հիմքը կարծիքներու կազմումն ու արտայայտութիւնն  
են, միաժամանակ հարցերն ու երեւոյթները համարձակ եւ անկաշկանդ  
քննարկելու եւ եզրակացութեանց հասնելու ունակութիւնը: Ծիշդ այսպէս է,  
որ դեռատի սերունդին մօտ կ'ամրապնդուին համոզումներն ու գաղափար-  
ները:

Կը քաջալերենք ներդրում ունեցած բոլոր պատանիները եւ յարա-  
տելութիւն կը մաղթենք անոնց: Հայ Պատանիներուն մօտ փոքր տարիքէն  
ազգային կարեւոր նիւթերուն նկատմամբ հետաքրքրութիւն արթնցնելը  
Յ.Յ.Դ. Պատանեկան Միութիւններու առաքելութեանց մաս կը կազմէ:  
Առաւել եւս այսօր՝ երբ մեր հայրենիքը կը դիմակայէ գոյութենական վտանգ,  
երբ նոյնիսկ մեր մշակոյթն ու ինքնութիւնը խաթարուած են:

Հայ պատանիները պիտի հանդիսանան նորօրեայ մարտահրաւեր-  
ներուն դէմ դնող ներուժը եւ մեր հաւաքական կեանքի զարթօնքի եւ  
վերականգնման երաշխիքը: Անոնք իրենց հայեցի դաստիարակութեան եւ  
գործունեութեան առաջին քայլերը կը կատարեն իրենց միութիւններէն ներս,  
իսկ ապագային իրենց երկրի եւ գաղութներու զարգացման ճանապարհին:

Մեր կոչն ու յորդորն է, որ Դաշնակցութեան ակումբները եւ պատա-  
նեկան միութիւնները շարունակեն մնալ այն բեղուն միջավայրը, ուր հայ  
պատանիները արդիական եւ նորարար ձեւերով ստանան ազգային  
գաղափարական սերուցքը եւ գործնականապէս ծառայեցնեն զայն անհա-  
տական եւ հաւաքական վերելքին:







## ԵՍ ՆԱՅ ՊԱՏԱՆԻՍ

*Ընկ. Արամ Դանիելյան  
Նայասարան*

Ես պիտի վառեմ ջահը վրեժի,  
Մուժ երկինքներում այս հսկայ դարի,  
Ու բոցավառեմ իմ հայկեան հոգին,  
Որ դողդողայ միշտ սիրտը խաւարի:

Քանի շնչում եմ պիտի ես տամ զա՛րկ,  
Նրանց, որ յամառ բզկտում են դեռ  
Յայրենիքը իմ՝ սիրտը մի պատառ,  
Որոնք ջանում են մեր հոգին մարել:

Ոչ ոք չի խլի իմ ջահը հուր,  
Որ պիտի պարզեմ ու քայլեմ հպարտ  
Դեպի գալիքը պայծառ ու մաքուր՝  
Տանելով ինձ հետ պատգամը նախնեաց:

Լսե՛ք սերունդներ, ձեզ պիտի բերեմ  
Յաղթութեան դրօշ ու ռազմի երգեր  
Ու պիտի կանգնեմ որպէս նոր Նժդեհ  
Որ հայի հոգին ապրի առյաւելտ:



## ԵՐԿԻՐ ՆԱՅՐԵՆԻ

*Ընկհ.Լիւսի Մուրարեան  
Նայաստան*



Երկիր հայրենի սուրբ, անապական  
Իմ սրտի թրթիռ, իմ հոգու տաճար  
Իմ սեր, իմ հաւատ, իմ յոյս անսպառ  
Իմ մայր Հայաստան ու Արցախ աշխարհ:  
Մեր ցաւ ու ամօթ, մեր սեր ու կարօտ,  
Մեր պայքար արդար, յաղթանակ գալիք:





## ԻՆՁ ԱՆՆՐԱԺԵՇՏ Է ԱՄՔՈՂՁ ՆԱՅ ԱՉԳԻ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

*Ընկհ.Սարթա Չիլինգարեան՝  
Արցախի*

Շատերին քաջածանօթ, ոմանց՝ հարազատ, մեկին՝ անծանօթ եւ միւսին՝ խորթ այս գանձերի հանգրուանը՝ Գանձասարը, իմ տունն է... Չէնց այստեղից է սկսում իմ մանկութիւնը, այստեղ է սկիզբն իմ հայրենիքի, այստեղ է պատմութիւնը իմ նախնիների... այստեղ են միաձուլուել սերը, յոյսն ու հաւատը, որոնք իմ ուղեկիցն են մինչ այսօր եւ դեռ պատրաստ են ձեռքս բռնած շարունակել ճանապարհը:

Այստեղ ամեն բան ուրիշ է... Չքնաղագեղ Գանձասարը, որպէս պահապան հրեշտակ դարեր ի վեր լոյս է տուել մեզ, ապրելու եւ արարելու, ծառ տնկելու, տուն շինելու, գաւակ ունենալու, պայքարելու եւ յաղթելու համար... Յոյս է տուել մեզ մեր հերոսներին սպասելու՝ որդու կորստին դիմանալու, որք մեծանալու, հօր ձայնին կարօտ լինելու եւ լուռ արտասուելու համար... Չայ մայրերին ուժ է տուել, գերբնական զօրութիւն՝ դիմադրելու կեանքի դաժան հարուածներին...

Երբ նորահարս կանայք երկունքի ցաւերից ձայները գլուխներն էին զցում, իսկ տղամարդիկ րոպէներն էին հաշուում լսելու արու գաւակի առաջին ճիչը, ոչ ոքի մտքով չէր անցնում, որ մի օր էլ սպասումի ցաւից են գոռալու...

Որքան դժուար է երեխաների համար տեսնել, որ ուրիշները հայր, եղբայր, պապիկ, քեռի ու հօրեղբայր ունեն, իսկ իրենք կարօտ էին հօր ձայնին, մեկ ուրիշը՝ միայն մեկ պապիկ ունի, միւսի եղբայրը դեռ չի վերադարձել, եւ բոլորը՝ որ որոշեցին հայրենիքն ընտրել...

Նրանց մօտ ամեն բան կիսատ է...

Ես այնքան շատ եմ սիրում իմ պապիկներն... Նրանք իմ հզօրութիւնն են... Մեկը ինձ միշտ ծաղիկ է բերում, միւսին ես եմ միշտ ծաղիկ տանում... մեկը ճակատս միշտ համբուրում է, իսկ ես արցունքոտ համբոյր եմ նուիրում այն սառը քարին, որից պապիկս է միշտ ժպտում... Նրա հայեացքը իմ անբաժան ընկերն է, իմ կեանքի մի մասնիկը...

Մեծանալով հասկացայ, որ հայի կեանքն է այդպիսին... Երբեք չլինել լիարժեք, ինչ որ բան միշտ կիսատ է... Եւ երբեք, երբեք կատարեալ չէ...

Չէնց սա է իմ հայրենիքը... Բարձրադիր լեռներով, որոնց կատարները երկինքներ են ճեղքում, ծիլ ու ծաղկով, որ արեւի նրբագոյն ճառագայթների, արիւնտ հողի եւ բարձրադիր լեռներից սկիզբ առնող սառնորակ աղբիւրների մի գարմանալի համադրութիւն է... Չնադարեան բազմաթիւ յուշակոթողներով, որոնք իրենց մէջ ամփոփել են դարերի պատմութիւնը,

<sup>1</sup> **ԸՆԿԻՍԱՐԹԱ ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆԸ** դպիսեկիրը հանդիսացաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅՏԵԱՆԸ» մրցաշարքին: Այս ծրագրին կարելի է ծանօթանալ պատանեկան յանձնախումբի տեղեկագրին մէջ:



տեսել են արիւնալի հերոսամարտեր, պայքարել են ապրելու եւ յաղթելու համար...

Իմ հայրենիքը մի սրտի չափ է...

Այնքան փոքր է, որ ինչքան էլ փնտռես նրան քարտեզների բազմութեան մէջ, դժուար թէ կարողանաս գտնել: Իմ հայրենիքի սահմանները քարտեզի վրայ հարեւան երկրներից բաժանուում են սեւ գծերով, բայց իրականում հայրենիքիս սահմանները կարմիր են, գծուել են մուգ կարմիր՝ արեան գոյնով, շաղախուել բազմադարեան հողի հետ ու սպիացել, որպէս չճշուող մի վերք, որպէս յուշ հերոսի արեան, որպէս սահման՝ վաստակուած կեանքի գնով... Այս հողից արեան հոտ է փչում... Բիւրաւոր հերոսների արեան, որը միաձուլուել է հայրենի հողի հետ հազարամեակների ընթացքում, որի հոտը այդպէս էլ չի հնանում այս հողի մէջ, այլ ընդհակառակն, այն շատ յաճախ է թարմացում, եւ ամէն անգամ յիշեցնում, որ հողը՝ հայրենի հողը, իր մէջ կրում է բիւրաւոր կեանքեր՝ մատաղ կեանքեր....

Հողում արեան, իսկ երկնքում խնկաբոյրն է տարածուել... Իսկ ո՞ր է խաղաղութեան բոյրը, որտե՞ղ է թաքնուել, որ չեմ կարողանում գտնել այսքան երկար փնտռուութեան մէջ... Սխալ տեղ եմ փնտռում... Սովորել ենք, որ խաղաղութիւնը միայն բերում են աղանիները, բայց այսքանից յետոյ պետք է հասկանալ, որ խաղաղութիւնը չեն բերում, ուղարկում են, որովհետեւ չեն կարող բերել, որովհետեւ այդտեղ բաժանուում են նրանց եւ խաղաղութեան ուղիները, որովհետեւ նրանք բարձրանում են երկինք, իսկ խաղաղութիւնը սկսում է ճախրել, հասնել իւրաքանչիւր տուն, իւրաքանչիւր ընտանիք, թակում է իւրաքանչիւրի դուռը եւ հասկացնում, որ խաղաղութիւնը ոչ թէ բերում են աղանիները, այլ ուղարկում են հերոս արծիւները...

Իսկ այսօր մեր դարաւոր թշնամին բնապահպան ձեւանալով փակել է մեր կեանքի ճանապարհը, տատանել մեր խաղաղութիւնը...

138 օր...

Նոյնիսկ այս տողն արտասանելիս զգում ես օրերի ծանրութիւնը:

138 օր առաջ փակեցին մեր կեանքի ճանապարհը, կտրեցին Արցախը սնուցող միակ երակը, մօրն ու որդուն բաժանեցին իրարից...

138 օր է, ինչ պայքարում ենք կեանքի դէմ՝ կեանքի համար, պայքարում ենք խուլ ու համր աշխարհի դէմ՝ ապրելու համար:

Պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր...

Հայ ազգի ճակատին է գրուած պայքար:

Պայքարել աշխարհի դէմ հայրենիքը ամուր պահելու եւ իր տունը չկորցնելու համար, պայքարել թշնամու դէմ նախնիների վրեժը լուծելու համար, պայքարել մեզ տրուած կեանքի դէմ՝ հենց այդ կեանքն ապրելու համար, պայքարել շրջափակման դէմ կեանքի ճանապարհը բացելու համար: Այն կեանքի, որը շրջափակման պատճառով կարծես թէ մի պահ կանգ էր առել:

Այս օրերի ընթացքում շատ ենք հանդիպել դատարկ փողոցներին եւ խիտ հերթերին, դպրոցական մերկ նստարաններին եւ պապիկների բարու-

Թեամբ լեցուն աչքերին, հոսանքի, կազի անջատումներին եւ մանուկների ծնողին սպասող լացակումած աչուկներին:

Եւ այս ամենի հետ մեկտեղ տեսել ենք արցախցու բարի, օգնող սրտացաւ տեսակը, տեսել ենք միասնական եւ բռունցք դարձող տեսակը:

Վշտի ու ցաւի մէջ լոյս ենք գտել ու ապրել, պայքարել, արարել ու ծաղկել:

Խատուտիկի ենք նմանուել:

Այս փխրուն ծաղկի պէս անբարենպաստ պայմաններին դիմակայելու եւ ծաղկելու ունակութիւն ենք ձեռք բերել, որ կարողանանք վեր խոյանալով բոլորին ցոյց տալ ապրելու եւ վերելքների հասնելու մեր բուռն ցանկութիւնը:

Մենք երբեք չպետք է կոտրուենք, որովհետեւ մենք ամուր ենք մեր լեռների պէս...

Անկախ իրավիճակից, անկախ շարունակուող շրջափակումից մենք չենք կարող յանձնուել եւ դադարեցնել մեր պայքարը:

Մեր ճակատին գրուած է պայքար... Մենք պետք է մինչեւ վերջ պայքարենք մեր հայրենին պահելու համար, քանզի հայրենիքը լոկ հող չէ... Այս հողը շաղախուած է մեր պապերի, հայրերի ու եղբայրների սրբազան արեամբ, այս հողի համար կեանքեր ենք կորցրել, որ այսօր պահենք այս հողը մի բուռ, անուրձ՝ Արցախ...

Ես հայ ազգի սերունդն եմ: Նախնիներիս յետնորդն ու ապագայ սերունդների նախնին:

Իմ նախնիները ինձ կտակել են ազատ ու անկախ հայրենիք եւ կեանքի ճանապարհ: Եւ վաղը նոյնն էլ ես պետք է կտակեմ իմ սերունդներին:

Ուստի պետք է պայքարեմ, շատ աշխատեմ, որ կարողանամ ամուր պահել այս մի բուռ հայրենիքը, որը ինձ է վստահուել:

Պետք է քայլելու փոխարէն վազեմ, որ կարողանամ ճիշդ ժամանակին իրականացնել իմ բոլոր նպատակները, եւ վերջում ի կատար ածեմ գլխաւոր եւ ամենակարեւոր նպատակս՝ ազատ անկախ եւ միացեալ տեսնեմ իմ հայրենիքը:


Ես Մեծ Զայքի մի մասնիկն եմ եւ այժմ անում եմ ամեն ինչ կրկին Մեծ Զայք ստեղծելու համար:

Բայց ինձ նաեւ անհրաժեշտ է ամբողջ հայ ազգի ցանկանութիւնը, որ ի կատար ածենք մեր մեծ նպատակը: Մեր ազգի յաղթանակը մեր միասնական ուժի մէջ է:



## ՈՉԻՆՉ, ՄԻ ՕՐ ԲԱՆԻՏԸ ԿԸ ԺՊՏԱՅ


*Ընկի.Ալիլիթ Յարութիւնեան  
Արցախ*



Արցախ աշխարհս կործանման եզրին,  
Յագիւ գոյատեւեց մի ամբողջ տարի,  
Իսկ մեր դիմացկուն ուժեղ արցախցիք՝  
Յամակերպոււմ են այս դաժան կեանքին:  
Բայց ոչինչ մի օր բախտը կը ժպտայ,  
Ու կեանքը նորից իր հունին կը գայ,  
Եւ մարդիկ կ'ապրեն անհոգ ու ուրախ,  
Առանց տանջուելու պարզ ու հասարակ:

Կեանքը շատ է դաժան վարուում  
Առաւօտը դեռ չբացուած  
Պատերազմը սկսեց յանկարծ  
Ու կատաղի մեծ ուժով  
Խուճապ տիրեց ականայ:  
Ճիչեր լսուեց,  
Արիւն թափուեց,  
Չոհեր եղան...  
Չոհուեց տատս երիտասարդ,  
Չոհուեց քոյրս դէ՛ռ շատ մանուկ,  
Կեանքը շատ է դաժան վարուում,  
Եւ չարն է միշտ նրան յաղթում:





## ԲԱՅՅԵՐԸ ԵՐԲ ՇԱՏԱՑԱՆ

*Ընկի. Լինա Եուզպուշեան  
Արցախ*

Արցախիս ջուրը անարատ,  
Եւ մաքուր օդը սարերի,  
Արցախիս քարն եմ կարօտում  
Եւ քայլերը նեղ փողոցի...  
Սրտիս զարկն էիր, Արցա՛խ,  
Հոգուս կանչն էիր արդար,  
Միշտ քո գրկում հպարտ կանգնած,  
Բայց եւ հիմա քեզնից զատուած:

Յիշո՞ւմ ես, երբ դեռ անկախ,  
Յոյս էիր մեզ ներշնչում,  
Եւ երբ յոգնած, սրտաճմլիկ,  
Արցունք էիք ուզում թափել,  
Չէիր թողնում, որ մենք յանկարծ,  
Կորցնենք անգին հաւատ ու սեր...  
Բայց...  
Բայցերն երբ շատացան,  
Սկսուեց աղետ, ողբ, լաց ու կոծ,  
Սկսուեցին ջարդեր...

Անտեր ցեղեր եկա՛ն, մտա՛ն,  
Կոտորեցին մի ողջ ազգի,  
Սրի քաշին դեռ չծնուած  
Որդուն, մօրը՝ ողջ-ողջ թաղին:  
Աւերեցին գիւղեր, տներ,  
Շէներ, շէնքեր բիր-բիրաւոր,  
Եւ քանդեցին էն սեզ ժայռը,  
Որ անպարտ էր, վեհ դարերով...

Հիմա եկայ, հասայ մի տեղ,  
Որտեղ կարծես բոլորն օտար,  
Փողի համար պայքարում են,  
Մինչդեռ, ոմանք՝ հողի համար...



## ԱՅՍ ՄԵԾ ԱՇԽԱՐՀՈՒՄ, ՓՈՔՐԻԿ ԱՆԿԻՒՆՈՒՄ

*Ընկի. Լինա Եուզպաշեան  
Արցախ*

Այս մեծ աշխարհում, փոքրիկ անկիւնում,  
Սուրբ հողակտոր՝ բաժանուած մօրից,  
Երագում է միշտ լինել աննկուն,  
Եւ կանգնել հպարտ դէմ այս աշխարհին:

Սակայն հարուածի խորը վերքի տակ,  
Թաքնուած է լոկ տանջանք ու զրկանք,  
Ցաւոտ է նրա ամէն մի բառը,  
Եւ կծկտուր է՝ ասես անբարբառ:

Երագանքն է նրա՝ դառնալ գեթ անկախ,  
Եւ հպարտութեամբ նայել հզօրին,  
Այլ ոչ թէ մնալ օտար լծի տակ,  
Եւ դիմադրելով կոտորել ամէնքին:

Երագում է միշտ լինել անառիկ,  
Սուրբ Աստուածամօր խաչը իր գրկում,  
Ամէնքին զիջել, ներել է կրկին,  
Բայց եւ մնալով զուրկ իր մասնիկից:

Եղել է ինչպէս բարձր սեգ մի ժայռ,  
Թագը իր գլխին կանգնած անվեհեր,  
Սահմաններ գծուած անպիղծ արիւնով,  
Ծածան դրօշով դէմքն առ վերել:





## ՄԻԹԷ ՍԱՐ ԷՐ ՄԵՐ ԲԱԽՏՆ ԱՆՇՈՒՔ

*Ընկի.Լինա Եուզպաշեան  
Արցախ*

Անվերջ հերթեր, անքուն գիշեր,  
Թե մանուկներ եւ թե ծերեր,  
Դարձան այս ողբ ու ցաւին տեր,  
Երբ գէթ հաց են ուզում գնել,  
Քուն է մտնում մօրը գրկած,  
Մանկիկը փոքրիկ՝ սոված, ծարաւ:

Տարեց, մանուկ խելքը կորցրած,  
Այս շոգ օրին, հացի հերթին,  
Լացակումած մրմնջում են,  
Թե երբ պիտի իրենց կանչեն,  
Եւ կամ գուցէ էլ չկանչեն:

Ինչպէս երէկ, դատարկ ձեռքով,  
Կը հասնեն տուն՝ յոգնած, անքուն:

Միթէ սա՞ր էր մեր բախտն անշուք,  
Որ դարձել ենք կէս բռի չափ մի ժողովուրդ,  
Այս էր միայն հային պակաս,  
Որդին կորցրած, հողը լքած,  
Եւ դեռ այսպէս շարունակուող,  
Ջերթեր, վախեր, թախծոտ ձայներ,  
Ցաւեր անվերջ ու անդադար,  
Եւ բաց վերքեր, որ չունեն դեղ:  
Վախ՝ սրտներիս, ահ՝ տարտերիս,  
Կտրօն՝ կէս հաց, յոյս առ Աստուած:



## ԱՆՈՒՇ ՆԱՅՐԵՆԻՔ

*Ընկի. Դալար Խայալեան<sup>2</sup>  
ԱՄՆ, Արեւմտեան շրջան*



Մարութայ սարի ու Արարատի լեռան լանջերէն,  
Մեզ կը կանչեն մեր նախնեաց հին ու նոր սրբավայրեր,  
Գորիսի առինքող գիւղերուն մէջէն,  
Եւ թանկագին Սեւանայ լիճէն,  
Մեզ կը կանչեն մեր նախնեաց փառքն ու պատիւն անգին:

Մեր հուժկու բազուկով ու ոգեշնչող երգով,  
Պիտ վերագատագրենք Մասիսն ու Կիլիկիան:  
Այնտեղ պիտ պարենք հայոց Եարիուշտան,  
Ու վերականչենք հզօր Յայաստան:

Մեր լեզուով՝ այնքան նուրբ ու քաղցրիկ,  
Մեր պատմութեամբ՝ այնքան հին ու պանծալի,  
Մեր արուեստով՝ այնքան իմաստալի,  
Մեր գործով ու նուիրումով սխրալի,  
Պիտ վերստին բարձրաձայնենք անուշ հայրենիք:



<sup>2</sup> Ընկի. Դալար Խայալեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅՆԱՆԸ» մրցաշարի ասմունքի մրցումին եւ ասմունքեց իր իսկ գրած ոտանաւորը:



## ԵՍ ՔԵՉ ՈՒԶՈՒՄ ԵՄ ՇԱՏ ԱՄՈՒՐ ԳՐԿԵԼ

*Ընկի. Մարթա Չիլինգարեան  
Արցախ*

Ուզում եմ գրել քեզ, իմ գերուած Շուշի.  
Գրել իմ սիրոյ կարօտի մասին  
Պատմել յուշերը քո գրկում անցած  
Ու լուռ արտասուել ինձնից նեղացած:

Ուզում եմ գրկել, մնալ քո գրկում  
Ու չհեռանալ քեզնից ել երբեք  
Ուզում եմ տեսնել քո սեզ բարձրունքից  
Արցախ աշխարհս տխուր, վշտահեր:

Ուզում եմ կրկին գնալ ես անցեալ  
Հասնել այն միակ, երջանիկ օրուան  
Որ եկայ գիրկդ ու տեսայ ես քեզ  
Ապրեցի քեզնով ու քեզ հետ միշտ ես:

Սիրեցի ես քեզ առաջին քայլից  
Առաջին բառից ես քեզ հասկացայ  
Սիրահարուեցի առաջին քամուդ  
Ու առաջինը իմ կեանքում դարձար:

Առաջինն էր այդ, բայց ոչ վերջինը  
Ես դեռ գալու եմ, կրկին քեզ տեսնեմ  
Չէ որ իմ սիրտը թողել եմ այդտեղ  
Ու մի խուրձ կարօտ շալակել եկել:

Ես քեզ ուզում եմ շատ ամուր գրկել  
Պատմել իմ սիրոյ կարօտի մասին  
Ուզում եմ գրկումդ խաղաղ քուն մտնել  
Ու արթնանալ քո մեղմիկ շոյանքից:



### ՆՈՐԻՑ

*Ընկի. Մարթա Չիլինգարեան  
Արցախ*

Նորից պայթեց  
Նորից գոռաց  
Նորից զարկեց ամեն դուռ  
Նորից լսուեց ձայն աղետի  
Ու լաց բերեց ամեն տուն:

Նորից սկսուեց  
Շարունակուեց օր ու շաբաթ  
Ամիս տեւեց  
Ամիս ու կէս  
Երկու ամիս  
Ու գլորուեց տարին նորից:

Չանգեր եկաւ  
Ու չուշացաւ  
Մօր գոռոցը պայթած սրտի  
Յօր արցունքը աղիոզորմ  
Քրոջ լացը կիսատ կեանքի  
Ու նորածին եղբայրը դեռ  
Որ առաջին քայլ չէր առել  
Որ չէր տեսել եղբօրն աւագ  
Որ չէր զգացել զարկերն արագ  
Ու չէր բռնել ամուր ձեռքից  
Որ քիչ առաջ զէնքն էր գրկել  
Ու այդպէս էլ զէնքը գրկած  
Մայր հողին է կեանքը բաշխել:



## ԱՅԼ ՉԱՐԸ ԵԿԱԲ

*Ընկի. Մարթա Չիլինգարեան  
Արցախ*

Անուանականն էր վերջին,  
Ներկայ էին բոլորը.  
Ու յետոյ հանգիստ քուն էր  
Ննջում էր շուրջբոլորը:  
Ու քնից թոպէներ առաջ  
Չանգում է գինուորն իր մօրը  
Որ հանգիստ քնով ընկնի  
Չմտածի զուր տեղը:

Ու կես գիշերին  
Լուռ անուրջներում  
Տեսնի իր որդուն համազգեստ հագած,  
Երկու ժամ քնած,  
Երկու ժամ արթուն.  
Սահման հսկելիս  
Չէնքը պինդ բռնած:

Ու հպարտանայ իր զօրեղ որդով  
Չգայ հայրենասերի շունչը այն ահեղ  
Որ թոյլ քամու հետ հեռուից հեւալով  
Լուռ ու թոյլ ձայնով տան դուռն է թակել:

Բարի գիշերին ոչ թէ յաջորդեց  
Լոյսը այն բարի՝ որ մօրը մաղթեց  
Չհնուորն իր սառած շուրթերով գունատ,  
Այլ չարը եկաւ,  
Խափանեց բարուն,  
Ու փորձեց տիրել  
Խաղաղ աշխարհում:



**ԱՆԿԱՏԱՐ ՉԻ ՄՆԱՅ, Կ՛ԱՆԵՆՔ ԼԻՈՎԻՆ  
(Ընկ.Արարակ Իշխանեանի յիշարակին)**

*Ընկ.Մարթա Չիլինգարեան  
Արցախ*

Յառաջում է հողը հայրենի,  
Որդին է ընկել կռուում քաջարի,  
Չաւակ որբացել լոյս աշխարհի չեկած,  
Այրի է դարձել դեռ չամուսնացած:

Լուռ տանջում է հողը հայրենի,  
Արիւնն է խառնում հերոս գիւնուորի,  
Կեանքեր են մեռնում դեռ կեանք չտեսած,  
Աչքեր են փակում դեռ լաւ չբացուած:

Գոռում է, գոչում հողը հայրենի,  
Չաւակին փնտռում կռուում ամեհի,  
Բայց ուշ էր արդէն հերոսն քաջարի  
Սառած տիրել էր հողին սիրելի:

Ու սեւ ամպերը կորից հեւալով,  
Յեռուից մօտեցան մեր հայրենիքին,  
Ու կես գիշերին՝ բոլորից թաքուն՝  
Կրակ բացեցին հայերի սրտին:

Կրկին Սեպտեմբեր, կրկին պատերազմ,  
Կրկին արցունքներ, սեւազգեստ մայրեր,  
Կրկին մի մեծ վախ մանկան աչքերում,  
Ու կրկին պայքար հայ սրտի խորքում:

Կարմիր երկինքներ սեւ գիշերներում,  
Եւ արկի ձայներ կապոյտ երկնքում,  
Յողի հետ խառնուած հերոսի արիւն,  
Ընկերոջ մահը տեսնող քաջագուն:

Պառակտուած մի ողջ հայութիւն,  
Եւ անմտոր, անգիտակից իշխանութիւն:  
Անտարբեր աշխարհ ու մի ժողովուրդ,  
Եւ հայրենասէր, քաջարի սերունդ:



Ու մի նուիրեալ հրետանաւոր,  
Որ կենացներին միշտ լուռ էր մնում,  
Իսկ այսօր ահա ծանօթ-անծանօթ,  
Նրան յիշելով բաժակ են զարկում:

Աշխոյժ, կենսախիւնդ, սառնասիրտ ու լուրջ,  
Մի տղայ էր նա, հոգում մի անուրջ,  
Ուզում էր տեսնել հայրենիքը այն,  
Որ թողել էին հերոսները հայ...

Ընկերների համար նա օրինակ էր,  
Իւրօրինակ էր ու բարեսիրտ,  
Իր երդմանը միշտ հաւատարիմ էր,  
Ծառայել է Յ.Յ.Դ.-ի գաղափարներին:

Դժուար է քեզ հետ խօսել անցեալով,  
Գաղափարի մեր ընկեր,  
Քո կերպարը դարերով,  
Սերունդների պիտ փոխանցուէ:

Քեզ գովերգելու պատճառներ կան շատ,  
Ափսոս անուրջներդ մնացին կիսատ,  
Անկատար չի մնայ, կ'անենք լիովին,  
Քո փոքրիկ որդի՝ Ռուբենի շնորհիւ:



## ԴՈՒՔ ՄԻ ԱՐԾԻՒ ԷՔ (Ընկ.Նորայր Դանիելեանի յիշատակին)

*Ընկ.Մարթա Չիլինգարեան  
Արցախ*

Արցախի սրտում ճախրում է հզօր,  
Անմահ մի արծիւ ոսկէ թռիչքով,  
Ու մէկ-մէկ կախում գլուխն իր անզօր  
Եւ հայրենիքին է իր լուռ հետեւում:

Ժամանակներ են անցել գնացել,  
Երեսուն տարին այնքան էլ շատ չէ,  
Բայց հայրենիքը այնքան է փոխուել,  
Որ ճանաչելը այնքան էլ հեշտ չէ:

Յայրենի հողս մի բուռ է դարձել,  
Ո՞ր է հայրենիքն իմ անհետացել:  
Միթե՞ այսպէս եմ ես սրան թողել,  
Որտե՞ղ ես Արցախ, դու ո՞ր ես կորել:

Գոռում-գոչում է արծիւն ալեհեր,  
Եւ շարունակում թռիչքն իր ահեղ,  
Ու տեսնում է նա մի խումբ ընկերներ,  
Որ հաւաքուել են ու բռունցք դարձել:

Թէեւ փոքր են, բայց տենչեր ունեն,  
Յայրենասերի մաքուր սիրտ ունեն,  
Յայրենատերի հզօր ուժ ունեն,  
Եւ ոգեշնչող նախնիներ ունեն:

Ունեն գաղափար՝ Դաշնակցութիւնը,  
Եւ միաւորող ընկերութիւնը,  
Ու մի նպատակ ամեն ինչից վեր  
Որ պիտի հասնեն թէկուզ մահն ի վեր:

Դուք մի արծիւ էք Նորայր Դանիելեան,  
Պատիւ է կրել ձեր անունն անմար,  
Որ միշտ մեզ կ'ասի ինչպէս հայ մնալ,  
Ու Ձեզ պէս հայրենատեր դառնալ:







## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԻ ՏԻՊԱՐԸ

*Ընկ. Կարեն Ապուստֆեան<sup>3</sup>  
Լիբանան*

Պատանին իր ազգի ապագան է, այս իսկ պատճառով կը շեշտուի անոր դաստիարակութեան կարելորութիւնը: Հայ ժողովուրդի ապագան իր պատանիներուն մէջ պետք է փնտռել, մանաւանդ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատանեկան միութեան անդամներուն մէջ, երբ կ'ունենանք տիպար պատանիներ, ապագային կ'ունենանք յաջող սերունդներ:

Դաշնակցական տիպար պատանին ան է, որ նախ տիպար հայ է: Տիպար հայ կրնան ըլլալ անոնք, որոնք ծանօթ են իրենց հայրենիքի պատմութեան, աշխարհագրութեան, քայլերգին, հերոսներուն, ֆետայիներուն ու թշնամիներուն: Տիպար հայ պատանին ան է, որ միշտ կը միտի հայ ժողովուրդի իրավիճակի բարելաւման:

Դաշնակցական պատանի ըլլալու համար պետք է անդամակցիլ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատանեկան միութեան, ուր կարելի կը դառնայ ծանօթանալ հայ ժողովուրդի պատմութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հիմնադրութեան, հիմնադրիներուն եւ գործերուն:

Տիպար Դաշնակցական պատանին ան է, որ լիովին կ'ենթարկուի Հ.Յ.Դաշնակցութեան պատանեկան միութեան կանոնադրին եւ կը դառնայ կարգապահ պատանի: Ան կը սիրէ իր ընկերը իր անձին պէս, իր վարքուբարքով լաւ օրինակ կը դառնայ շրջապատին, կը յարգէ տարիքով մեծն ու պզտիկը:

Տիպար պատանին կ'ըլլայ խիզախ եւ զօրաւոր կամքի տեր՝ միութեանական կեանքէն ներս եւ դուրս: Կ'ըլլայ հայերնապաշտ եւ անձնական թէ հաւաքական իրաւունքներու պաշտպան:

Պատմութենէն օրինակներ քաղելը պատանիին համար շատ օգտակար է: Չիս միշտ ալ հետքերած է Լիզպոնի գործողութիւնը: Հայրենիքէն հեռու Լիբանանի հայահոծ թաղերու մէջ ծնած ու մեծցած հինգ հայ երիտասարդներ՝ հայրենիքը չտեսած նահատակուեցան հայրենիքի ազատագրման երազը իրենց սիրտերուն մէջ: Լիզպոնի գործողութեան ընդմէջէն զինեալ պայքարի պահանջած մեծ զոհողութիւնը կրնանք ամրագրել: Լիզպոնի տղաքը գիտէին, որ իրենցմէ առաջ շատեր գացած են եւ վստահ էին, որ իրենցմէ յետոյ շատեր պիտի հետեւին իրենց քայլերուն: Մեր Դատը դեռ լուծուած չէ, այսօր մեր հերթն է ծառայելու մեր Դատին, այսօր հարկաւոր է բոլոր միջոցներով ընդարձակել պայքարը: Լիզպոնի հինգ տղոց գործո-

<sup>3</sup> Ընկ. Կարեն Ապուստֆեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅՏԱՆԸ» մրցաշարքի Դաշնակցական պատանիի տիպարի ներկայացման մրցումին:



դուրսն են կարելի է նաեւ գաղտնապահութեան դասեր քաղել: Անոնցմէ իւրաքանչիւրը տարբեր ձեւով մեկնած էր իր հարազատ ընտանիքէն, գաղտնի պահելով իր մտադրութիւնը: Իւրաքանչիւր տիպար պատանի պէտք է երդուի Լիզպոնի տղոց խօսքով՝ «ընդարձակել հայ ժողովուրդի հայրենասիրութիւնը եւ պայքարը»:

Մեր պատանեկան միութիւնը կը պատկանի «Սողոմոն Թեւիորեան» ակումբին: Միշտ ալ ոգեւորուած եմ Թեւիորեանի օրինակով: Անոր խիզախութիւնը, գաղտնապահութիւնը եւ վրէժխնդրութեան գաղափարը շատ բան սորվեցուցած են իրարայայջորդ սերունդներուն:


Սողոմոն Թեւիորեան Թալաթ փաշան ահաբեկելով լուծեց ամբողջ հայ ժողովուրդին վրէժը: Ան նոյնիսկ ահաբեկումէն ետք մնաց իր վայրին մէջ, որովհետեւ պատրաստ էր ոեւէ դատապարտութեան: Այս մէկը կը ներկայացնէ դաշնակցականի մը խիզախութիւնն ու վրէժխնդրութեան ոգին:

Մեր յաճախած ակումբի անդամներէն է նահատակ ընկեր Միեր Ջուլիհաճեան, որ նահատակուեցաւ Արցախի ազատագրական գործի ժամանակ: Անոր օրինակը միշտ ալ հետաքրքրած է զիս, որովհետեւ ան անդամ եղած էր Զ.Յ.Դ. Նաւասարդեան Պատանեկան Միութեան, ստանձնած վարչական եւ տարբեր պաշտօններ, որմէ ետք դարձած տիպար կուսակցական: Ան ուսանած է Պեյրութի Ամերիկեան Զամալսարանի բնա - գիտութեան եւ երկրաբանութեան բաժանմունքին մէջ, որմէ ետք ստացած է գիտութեան պսակաւոր վկայական եւ դարձած ուսուցիչ: Այսուհանդերձ երբ ահագանգը հնչեց, Միեր ամէն ինչ իր ետին դնելով, իր անձնական «ես»ը միացուց հաւաքական «ես»ին եւ նահատակուեցաւ յանուն հայրենի հողին:

Զ.Յ.Դ. պատանեկան միութիւնները կոչուած են դաշնակցական նշանաւոր գործիչներու անուններով, իւրաքանչիւր պատանի պէտք է ծանօթ ըլլայ անոնց տիպարին: Մեր պատանեկան միութիւնը կոչուած է Վահան Նաւասարդեանի անունով եւ մեր միութեան պատանիները կը յառաջդիմեն անոր իտեալով:

Վահան Նաւասարդեան կը վկայէ. «Ո՞ր է Դաշնակցութեան ուժին գաղտնիքը, հ՛ոն որ կ'ուզէ առնել՝ զոհելով, արիւն կը թափէ՝ հայրենիք ձեռք ձգելու համար»: Այս նշանաբանին պէտք է հետեւի իւրաքանչիւր դաշնակցական տիպար պատանի, այսինքնին՝ անոր համար գերագոյն արժէք պէտք է դառնայ հայրենիքը, որուն բարօրութեան ու բարգաւաճման համար ճիգ չինսայելը անհրաժեշտ է:





## ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԻՒՆ ԻՏԷԱԼՆԵՐԸ

*Ընկ. Շանթ Մինասեան<sup>4</sup>  
Լիբանան*

Տիպար Դաշնակցական պատանի մը ըլլալու համար պետք է ըլլալ տիպար հայ պատանի եւ հետեւիլ դաշնակցական պատանիի բոլոր սկզբունքներուն: Տիպար հայ պատանին ան է, որ կը ճանչնայ իր հայրենիքը, անոր անցեալն ու ներկան, դեմքերն ու դէպքերը: Տիպար հայ պատանին ան է, որ կը յարգէ իր հայրենիքը, եւ հպարտ է իր պատկանելիութեամբ, այսինքն՝ հայ ըլլալուն: Ան այն անձն է, որ շարունակաբար կը հետեւի իր հայրենիքին մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն եւ կը պայքարի ի նպաստ անոր բարելաման:

Դաշնակցական պատանին ծանր պարտաւորութիւններ ունի իր ուսերուն: Տիպար Դաշնակցական պատանին պետք է առնուազն մէկ անգամ կարդացած եւ ծանօթ ըլլայ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պատանեկան միութեան կանոնագրին: Տիպար դաշնակցական պատանին ունի ընկերական ոգի, որուն ընդմէջէն տեր կը դառնայ իր ընկերներուն:

Ան այն անձն է, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն՝ կը պայքարի իր միութեան բարելաման համար: Կը յարգէ Հ.Յ.Դ.-ի քայլերգը, կը յարգէ իր հերթական ժողովները, բաւաւոր պարագաներէ բացի ներկայ է իր միութեան կազմակերպած բոլոր նախաձեռնութիւններուն: Ան կ'ըլլայ յարգանքով, կը յարգէ բոլորը: Տիպար դաշնակցական պատանին կ'ըլլայ աշխոյժ, միշտ արի, պատրաստ միշտ նորութիւններ սորվելու: Հեռու կը մնայ պատանին վնասող բոլոր արարքներէն, չի ստեր, հաւատարիմ կը մնայ իր միութեան, եւ վերջապէս հաւատարիմ կը մնայ Հ.Յ.Դաշնակցութեան եւ իր հեռաւոր նպատակը կ'ըլլայ ծառայել հայութեան եւ Հայաստանին:

Դաշնակցական պատանին իր իտեալը կը դարձնէ հայ ժողովուրդի հերոսները, որոնցմէ Արցախի վերջին պատերազմին նահատակուած ընկեր Գերոգ Աշճեանը, որ իր անուշ ձայնով վառ կը պահէր հայրենասիրական աւանդական եւ յեղափոխական երգերը: Ընկեր Գերոգ Աշճեան ուներ իր ընտանիքը, սակայն ան իր բոլոր նախասիրութիւնները իր ետին ձգելով փութաց հայրենիքի փրկութեան:

Միութենական կեանքի առաջին օրերէն իսկ ուշադրութիւնս գրաւած է Խանասորի արշաւանքը, որուն միտքը յղացած էր Նիկոլ Դուման: Այս պատմութեան օրինակին մէջ ունինք ընկերասիրութեան եւ համեստութեան գերագոյն արժէքը: Նիկոլ Դուման եղած է հայ ազատագրական պայքարին նուիրեալ մը, յանդուգն, քաջ եւ տազնապի արագ ու կտրուկ որոշումներ առնելու կարող: Ան եղած է կարգապահ եւ միշտ պահանջած է կարգա-

<sup>4</sup> Ընկ. Շանթ Մինասեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅՏԱՆԸ» մրցաշարի Դաշնակցական պատանիի տիպարի ներկայացման մրցումին:



պահութիւն: Ենթարկուած է Դաշնակցութեան որոշումներուն, նոյնիսկ երբ անոնց տարակարծիք եղած է: Խանասորի արշաւանքի նախօրեակին երբ ջարդուած են Պետոյի, Մարտիկի եւ Աւետիսեան խումբերը, Նիկոլ Դուման Թիֆլիս երթալով կ'առաջարկէ Խանասորի Արշաւանքին ծրագիրը: Սակայն դաշնակցական կարգ մը ընկերներ կ'առաջարկեն ջարդել թուրք սահմանապահ զօրքերը: Հարցը քուէարկութեան կը դրուի եւ ձայնի մը առաւելութեամբ կ'որոշուի Մագրիկ ցեղի վրայ յարձակում գործել: Գործին ղեկավարութիւնը կը յանձնուի Դումանի, որ հակառակ իր տեսակետին, անմիջապէս կը սկսի պատրաստութիւն տեսնել:

Նիկոլ Դուման ինք յղանալէ ետք արշաւանքին միտքը ստանձնեց միայն յիսնապետի պաշտօնը: Այս մէկը պէտք է օրինակ ըլլայ իւրաքանչիւր դաշնակցական պատանիի, որ առաջնորդուի Նիկոլ Դումաններու ոգիով, ունենայ համեստ հոգի, ըլլայ ընկերասեր եւ ոչ աթոռապաշտ:

Նիկոլ Դուման նշած է. «Եթէ անհաւասար ուժի դեմ կը պայքարիս, պէտք չէ սովորական եւ հաւասար զէնքերով պայքարիլ: Ընտրե՛ գէնք մը, որ հակառակորդիդ յանկարծակիի բերես: Եւ եթէ չունիս այդ գէնքը, պէտք է հնարես»: Այս խօսքը կը նշանակէ թե՛ ա՛յո, այսօր թերեւս Ազրպէյճան զէնքերու իմաստով անելի յառաջդիմած է քան Հայաստանը կամ Արցախը, սակայն մենք ունինք արի եւ կամքով զօրաւոր պատանիներ, որոնք պիտի կերտեն Հայ ժողովուրդի ապագան: Ինչպէս Ռուբէն ըսած է «Պայքարէն յոգնածը պիտի մահանայ, պայքարի եռանդով լեցուածն է, որ պիտի ապրի եւ պիտի տիրէ»: Այդպէս ալ դաշնակցական պատանին միշտ ալ պիտի պայքարի իր հայրենիքին եւ իրաւունքներուն համար, մինչեւ որ հայ ժողովուրդը հասնի իր նպատակներուն:





## ՆԵՄԵՍԻՍ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

*Ընկհ.Աննա Դալար Սրապոնեան<sup>5</sup>  
Լիբանան*

Նեմեսիսը յունական դիացաբանության մեջ վրեժխնդրության չաստուածն է: Նեմեսին գործունեության նպատակն էր.

ա.- Պատժել 1915-ի Հայոց Ցեղասպանությունը կազմակերպած եւ իրագործած երիտասարդ թուրքերու կուսակցության պարագլուխները:

բ.- Պատժել 1918-ին Պաքուի մեջ հայոց ջարդը կազմակերպողները:

գ.- Պատժել թուրքերուն հետ գործակցած հայ դաւաճանները:

1919-ին, Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք, Թուրքիոյ գիւտուորական դատարանի դատավարական Նիստը մահապատիժ սահմանեց Հայոց Ցեղասպանությունը կազմակերպածներ՝ Էնվեր, Ժեմալ, Թալաաթ, Նազիմ եւ այլ ոճրագործ փաշաներուն: Վճիռը արձակուեցաւ ոճրագործներու բացակայութեամբ, որովհետեւ անոնք փախած էին տարբեր երկիրներ՝ այնտեղ իրենց բնականոն կեանքը շարունակելու համար: Այս իսկ պատճառով, Երեւանի մեջ գումարուած Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովը (1919) որոշեց պատժել յանցագործները: Այս գործունեությունը անուանուեցաւ Նեմեսիս:

Նեմեսիսի պատասխանատու մարմինն մաս կազմեցն՝ Արմէն Գարօ, Ահարոն Սաչազլեան, Գրիգոր Մերճանով եւ Շահան Նաթալի:

Նեմեսիսի գործունեությունը իրականացնող հերոսներն էին՝ Արամ Երկանեան, Սողոմոն Թեղիբեան, Շահան Նաթալի, Արշալիր Շիրակեան, Արշակ Եզդանեան, Միսաք Թորլաքեան, Պետրոս Տէր Պողոսեան, Արտաշէս Գեորգեան, Ստեփան Ծաղիկեան եւ Չարեհ Մելիք-Շահնազարեան:

Մեր հերոսներու կողմէ նաեւ պատժուեցան դաւաճաններ՝ Յարութիւն Մկրտիչեան, Վահէ Իսսան (Եսայեան), Արշալիր Յասեան, Հմայեակ Արամեանց, Փոլիս Կարապետ եւ Չէյթունցի Կարապետ:

Կեցցեն մեր վրիժառու բազուկները:



<sup>5</sup> Ընկհ.Աննա Դալար Սրապոնեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԸ» մրցաշարի Դաշնակցական դրուագի մը ներկայացման մրցումին:

## ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄՏՔԻ ԵՒ ՆՈԳՈՒ ՎՐԱՅ

**Պատրաստեց ընկ. Էմիլի Պոդոսեան<sup>6</sup>**  
Նոր Զուղա - Իրան



Երաժշտության ազդեցությունը

Երաժշտությունը մեր կեանքի մեծ մասն է կազմում, այնպես որ եթե մեկը ուրախ երգեր լսի ինքնաբերաբար ուրախ աշխարհ է մտնում, ժպտում եւ աշխուժանում է իր կեանքում: Իսկ եթե տխուր երաժշտություն է լսում, ինքնամեկուսանում եւ մուտք է գործում տխուր աշխարհ, իր առօրեան լցնում անցեալի անհիմն ու ողբալի յուշերով: Այս կախարդական եղանակները միայն մարդ Էակի վրայ չէ որ թողնում են իրենց ազդեցությունը, գիտությունը փաստել է որ նրա դրական ելեւեջների երանգից կենդանիներն էլ ազդարարում են, օրինակ գիտնականները Յեյնստայն Ֆրիսեան (Holstein Friesian) կովերի ցեղախմբի համար կլասիկ երաժշտություն ցրելով նրանց օրական կաթի չափաբաժինը ավելացրել էին: Ենթադրենք եթե մի կաթնատու կով օրուան մեջ 34 լիթր կաթնաբերություն ունի, արդիւնքում դա դարձել էր 36 լիթր, միայն քլասիկ երաժշտության միացման շնորհիւ:


Երաժշտությունը ինչպես մարդկային ճաշակը բազմազան է, պատմության ընթացքում տարբեր ճաշակների համար ստեղծուել են երաժըշտություններ, որոնցից ստեղծուել է նրա խմբաւորումները: Օրինակ՝ ճագը, Մետալը, քլասիկը ու Ֆոլկը, Բլուզը եւ այլն:

Մեր Հայկական երաժշտությունը ինքնին բաժանուում է երկու խմբերի՝ եկեղեցական եւ ժողովրդական կամ Ֆոլք խմբերի:

Երաժշտության հետաքրքիր յատկություններից մեկն այն է, որ անկախ մտքի վրայ նրա ազդեցությունից ան նաեւ ազդելով հոգու վրայ բուժիչ դերակատարություն է ունենում: Դա կոչուում է բուժիչ երաժշտություն: Այս երաժշտությունը օգտագործուում է հոգեդարմասման մեջ, անգլերէնում հենց այդպէս է կոչուում Music therapy, որ օգտագործուում է հոգեբուժական ոլորտում (Psychotherapy):

Արեւելեան ազգերը յատկապէս իրենց հին քաղաքակրթութեան շնորհիւ ճանաչել եւ օգտագործել են բուժիչ երաժշտությունը, յատկապէս իրենց ծիսակատարությունների մեջ: Սկսած հեռու արեւելքից, Տիբեթի Բուդդայիներից, որ ունեն իրենց յատուկ երգող գաւաթ անուանումով երաժշտական սարք, գնանք հասնենք Չինաստան, Միջին Արեւելքի երկրները, սուֆֆիները, իրանցիները, յոյները եւ մենք՝ հայերս ունեցել ենք մեր իւրայատուկ բուժիչ երաժշտությունը: Մեր հայկական մեղեդիները, յատկապէս նրանք, որ պատկանում են եկեղեցական երաժշտութեան խմբին, անբաժան են այդ

<sup>6</sup>Ընկ.Էմիլի Պոդոսեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԸ» մրցաշարի ազատ նիւթի ներկայացման մրցումին:



Լժիջ յատկութիւնից: Եթէ այդ մեղեդին ճիշդ ձեւակերպուած լինի, այսինքն՝ բոլոր համակարգի մէջ լինի, հնչիւնների միջոցով կարող է այդ դրական ճիշտութիւնները մեզի փոխանցել: Կապ չունի, որ լսողը ազգութեամբ հայ է թէ ար, հայ լեզուի ճանաչողութիւն ունի թէ ոչ: Դրա վառ օրինակն մեր օտանի պարսիկ հայրենակիցներն են, որոնց համար մեր եկեղեցական հրաժշտութիւնը այնքան ազդեցիկ է, որ փորձում են մասնակցել մեր երաժշտարագներին եւ ժամերով հաճոյքով լսել մեր շարականները:

Յայկական երաժշտութեան հարցով հիմնականում մենք պարտական ք մեր աշխարհահռչակ երաժիշտ՝ Կոմիտաս վարդապետին: Կոմիտաս ելուն անունով Սողոմոն Սողոմոնեան) իր գործերում օգտուում էր մեր յկական երաժշտութեան երկու հիմքերից՝ եկեղեցական եւ ժողովրդա-հա: Նրա աշխատանքն այնքան կատարեալ էր, որի շնորհիւ մեր կաժշտութիւնը ստացաւ համաշխարհային ճանաչում:


Դժբախտաբար 1915 թուականի Հայոց Ցեղասպանութեան պատճա-վ սա կորցրեց իր հոգեկան անդորրը եւ չկարողացաւ իր համաշխարհային ուժը շարունակել: Աշխարհը մինչ օրս էլ լսում է նրա ժառանգութիւն գոհած երաժշտութիւնը եւ հիանում դրանով:

Սարգիս Սուրատեանը 1956-ին առաջիններից էր, որ երկար դարից յետոյ համարձակուեց խօսել Հայոց Ցեղասպանութեան մասին: Որպէս «Վերջին գիշերը՝ Կոմիտաս» կտաւը՝ խախտեց Հայոց Ն դասպանութեան յիշողութեան երկարատեւ լռութիւնը: Նրա կարմիր եւ Ցե տուկ մթութիւնը նշանակում է այդ ժամանակի վատ եւ ողբալի դրութիւնը: յա միտասի նայուածքը դեպի դուռն է, որովհետեւ այդ ժամանակ թուրք Կո նուորներն արդէն շարդում էին դուռը:

528-հերտզ (hertz)  
Յետաքրքիր է իմանալ, որ երաժշտութիւնը բաղկացած է հնչիւններից հնչիւններն էլ բաժանուած ֆերեկանսներից: Ֆերեկանսի չափանիշն է եւ րտզը (hertz), այսինքն՝ եթէ ֆերեկանսն մէկ անգամ իր շուրջ կլորածեւ հերտզի կը լինի մէկ հերտզ (hertz):

1978-թուին Հանգ Կոստո անունով մի շուէտացի երաժշտագետ եւ թեմաթիկոս, գտել է 528 հերտզը, որ շատ ազդեցիկ է մարդու օրկանիզմի վա: Ասում է, որ 528 հերտզը կարողութիւն ունի վերականգնելու մարդու վր թ-ն (DNA) եւ բուժում է նրա որոշ իւրայատուկ հիւանդութիւնները:

$$f=1 \text{ cycle in } 8 \text{ seconds} = 1/8 \text{ Hz}$$



## ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒՆ

*Ընկի. Աննա Պետրոսեան*  
Սուրիա



«Մենք հայ ենք եւ պետք է հայերէն խօսինք»:  
Կ'ուզեմ գրութիւնս սկսիլ յաճախ կրկնուող այս խօսքով:  
Այո՛, բոլորս ալ հայ ենք, շառաւիղներն ենք Յեղասպանութենէն ճողոպ-  
րած մեր պապերուն եւ դժբախտաբար բոլորս չենք ապրիր Յայաստանի մէջ:

Արեւմտեան ափեր գաղթած հայերու զաւակները սկսած են մոռնալ արեւմտահայերէնը: Կը շեշտեմ յատկապէս արեւմտահայերէնը, որովհետեւ զայն օգտագործողներուն թիւը սկսած է նուազիլ, ուստի արեւմտահայերէնի գոյութիւնը վտանգուած է: Կը հասկնամ, որ երբեմն իմ հասակակիցները կը ստիպուին իրենց ապրած երկրին լեզուով խօսիլ, բնական է, օտարութեան մէջ կ'ապրին եւ իբրեւ ոեւէ երկրի քաղաքացի, պետք է այնտեղ օգտագործուող լեզուին լաւապէս տիրապետեն, բայց ասիկա չի նշանակեր, որ անոնք իրենց տան մէջ հայերէն չխօսին, հայերէն չկարդան: Վերջապէս հայ ընտանիք մը իր ինքնութիւնը պահելու համար պետք է լաւ իմանալ հայերէնը, գործածէ զայն եւ փոխանցէ իր շառաւիղներուն: Արտերկրի մէջ ապրիլ չի նշանակեր օտարանալ:


Սփիւռքացած հայը եթէ հայասեր, ազգասեր եւ եկեղեցասեր ըլլալ, կարելիութիւն կ'ունենայ համակերպելու օտարին հետ, միեւնոյն ատեն հայկական արժէքները եւ մշակոյթը պահպանելու: Սակայն եթէ անոր մէջ հայու ոգին արթուն չէ, կամ ան իր արմատներուն ծանօթ չէ, դիւրաւ կրնայ մոռնալ ամէն բան, որոնց կարգին նաեւ իր մայրենի լեզուն՝ արեւմտահայերէնը:

Ես ալ կ'ապրիմ Յայաստանէն դուրս: Սուրիոյ քաղաքացի եմ, սակայն հոս՝ Յալէպի մէջ, մենք նոյնիսկ ռումբերուն տակ յաճախեցինք հայկական դպրոց, սորվեցանք հայ գրականութիւն ու քերականութիւն: Միւս կողմէ հայկական մշակութային միութիւնները մեզի սորվեցուցին պահել հայկական մշակոյթն ու հայկական աւանդոյթները, իսկ եկեղեցին հաւատքի ամուր կապով միացուց մեզ իր յարկին տակ:

Եթէ միասնաբար փոքր ճիգ թափենք, կրնանք քայլ մը առաջ երթալ:

Արեւմտեան ափեր ապրող ընկերներ, Սփիւռքի մէջ մեր լեզուն կրցած ենք պահել աւելի քան մէկ դար: Ձանանք պահել հայերէնը՝ հայանպաստ ծրագիրներու մաս կազմելով եւ կարեւորութիւն տալով հայ լեզուին, որպէսզի ծանօթանանք մեր գրականութեան եւ մեր ազգի ստեղծագործական տաղանդին:

Անուշ է մեր լեզուն, ինչպէս երգը կ'ըսէ.  
«Յայրորդիք որ կ'ապրիք դուք հեռուն,  
Մի՛ մոռնաք մեր անուշ մայր լեզուն,  
Պատմեցէ՛ք ձեր զաւակներուն,  
Որ գիտնան արժէքը հայերուն»:







## ՊԱՏԱՆԻՆԵՐԸ

*Ընկի Արինա Պոշկեզենեան  
Սուրիա*

Դասարանը նստած էինք, երբ դուռը թակելով ներս մտան, ինծի համար դեմքով ծանօթ, հանգամանքով երեք անձեր:

Նպատակով մը եկած էին: Հայրենասիրության մասին բաւական խօսելէ ետք, վերջապէս փոխանցեցին կեանքիս սպասուած երազային լուրը, որ պիտի առաջնորդէր զիս դէպի Սուրիոյ Պատանեկան Միութիւն:

Փոխանցուած լուրը անսախընթաց ուրախութեամբ պատեց հոգիս: Մանկութեանս օրերուն, երբ քողջս հետ կը գրուցէի, ան յաճախ կը պատմէր, որ պատանիները տարեկան բանակումի կը մասնակցին: Բանակումի գաղափարը շլացուցած էր զիս, սակայն անդամակցելէս ետք հաստատեցի, որ պատանեկան միութիւնը բանակումի գործունեութենէն աւելի վեհ նպատակներ եւ գաղափարներ կը հետապնդէ: Իբրեւ նոր անդամագրուած պատանի, ամէն ինչ մեծ ու անհասանելի կը թուէր ինծի համար: Երբ բարձրագոյն կարգերէն ընկերներ կը դասախօսէին, անոնց գիտելիքներն ու կարողութիւնները կ'ապշեցնէին զիս ու կ'ունենայի աւարտական կարգի պատանի դառնալու, հայոց պատմութիւն, յեղափոխութեան պատմութիւն ու երգեր սորվելու եւ ղեկավար դառնալու ցանկութիւն:

Պատանեկան հնգամեայ թանկագին շրջանը անցաւ ասուպի արագութեամբ եւ արդէն դարձանք այդ ցանկալի աւարտական կարգի պատանիները, իսկ բանակումի մասնակցելու անցեալի մեր փափաքը դարձաւ սովորական, տարիքային փափաք, թէեւ անոր յուշերը, դաստիարակչական դերն ու ընկերային մթնոլորտը մեր սիրտերուն մէջ դրոշմ ձգեցին:

Պատանեկան Միութիւնը մեր մէջ արթնցուց ազգային եւ հայրենասիրական ոգին, զօրացուց նուիրումի եւ զոհողութեան գաղափարը: Մեր նպատակը դարձաւ զօրավիգ ըլլալ մեր Դատին, հաւատալով ԱԶԱՏ, ԱՆԿԱՆ եւ ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆին հասնելու մեր նպատակին:



## ԿՌՈՒԱՐԱՐՈՒԹՒԻՒՆԸ ԻՄ ԴԻՏԱՆԿԻՆԷՍ

*Ընկհ.Սելա Աստարճեան<sup>7</sup>  
Սուրիա*



Մեծ ուրախութեամբ մաս կազմեցի բանավեճի մը եւ պատասխանատուներու օգնութեամբ ընտրեցի կռուարարութեան նիւթը: Նիւթին ծաւալը մեծ էր, բայց համբերութեամբ սերտեցի: Թեման ընտրելու պատճառներէն մեկը միջավայրս էր:

Եթէ ուզենք հասկնալ անհատի մը ներքին իրավիճակը ապա պետք է սերտենք անոր ընտանեկան պայմանները: Արդեօք անոր կարծիքները որքանո՞վ լսող ականջ կը գտնեն իր ընտանիքին մէջ...

Երբ չյարգուիր անհատի կարծիքը ապա ան ինքզինք փաստելու համար կը ստիպուի իր խօսքը կռիւով պարտադրել միջավայրին մէջ: Երբ ծիծաղի առարկայ կը դարձուի անձի մը տեսքը կամ թերութիւններէն մեկը՝ ան կը դիմէ կռուարարութեան, որպէսզի թաքցնէ իր տկարութիւնները:

Կռուարարութեան ենթարկուող անձը կամաց-կամաց ինքզինք կը հեռացնէ իր միջավայրէն եւ կը մեկուսանայ: Կը նկատենք, որ ան երկար ժամանակ կ'անցնէ մինակը, տան մէջ կ'ըմբոստանայ եւ վարուելակերպը կը փոխուի:

Ամենամեծ դերը ծնողքին վերապահուած է: Պետք է հայրն ու մայրը զգոյշ ըլլան եւ հսկեն իրենց գաւակի հոգեվիճակին, հարկ եղած պահուն միջամտեն եւ ճիշդ ճամբայ առաջնորդեն զինք, միաժամանակ քաջալերեն, որ օգնութիւն ստանայ իր վարիչէն կամ պատասխանատուէն:

Շրջանակներուն մէջ պետք է զգոյշ ըլլանք մեր արտայայտութիւններուն մէջ, որովհետեւ կրնանք ենթարկել կամ ենթարկուիլ կռուարարութեան: Ներկայիս կռուարարութեան ամենաավտանգաւոր ձեւերէն մեկը ընկերային ցանցերու վրայ եղածն է, յաճախ դիմատետրի էջերով կը ծաղրուին մարդոց նկարները կամ գրութիւնները:

Սիրելի՛ ընկերներ, ձեր ինքնութիւնը փաստելու համար մի՛ օգտագործէք ձեր ընկերները եւ կռուարարութեան մի՛ դիմէք, եղէ՛ք ինքնավստահ եւ խտելիստ եւ միշտ յիշեցէք, որ ինչ կը ցանք այն կը հնձէք:



<sup>7</sup> Ընկհ.Սելա Աստարճեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆԸ» մրցաշարի ազատ նիւթի ներկայացման մրցումին:





## ՊԱՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՐՍ

*Ընկի.Լանա Համբարձումեան  
Սուրիա*

Օրերը կ'անցնին փամփուշտի արագութեամբ:

Կը յիշեմ երբ 12 տարեկան էի Սուրիոյ Պատանեկան Միութեան անդամակցելու հրաւեր ստացայ: Անտարբեր էի, որովհետեւ գաղափար իսկ չունէի, որ այսպիսի միութիւն մը գոյութիւն ունի: Տուն վերադառնալով ծնողքիս տեղեկացուցի հրաւերին մասին եւ հարցուցի թէ ինչ է Սուրիոյ Պատանեկան Միութիւնը: Ծնողքս սպառնիչ պատասխաններով գոհացում տուաւ հարցումիս:

Հասաւ սպասուած առաջին ժողովին օրը: Երբ ակումբի դռնէն ներս մտայ, վախով չորս կողմ նայեցայ եւ նկատեցի, որ ոչ ոք կը ճանչնամ: Ապա երիտասարդ մը, հետագային պարզուեցաւ որ մեր պատասխանատուն է, մեզի սենեակ հրաւիրեց ու սկսաւ մեր առաջին ժողովը վարել:

Այնքան կ'ամչնայի, որ շշուկ մը իսկ չէի հաներ, բայց յանկարծ ըսուեցաւ, որ պետք է ինքզինքս ծանօթացնեմ: Դողահար անունս եւ մականունս ըսի: Ծանօտ կ'ուզէի, որ այդ վայրկեանին վախս անհետանար եւ ինքնավստահ մեկը ըլլայի, բայց չէի գիտեր ինչպէս կառավարել զգացումներս: Ընկերներուս նայելով հետզհետէ սկսայ քաջալերուիլ, ժողովներու ընթացքին ձայն առնել եւ կարծիք յայտնել:

Օրերու ընթացքին փորձառութիւն շահեցայ, ինքնավստահութիւն ձեռք բերի, նոյնիսկ սկսայ դիւրաւ դասախօսութիւն պատրաստել:

Առաջին տարուրնէ իսկ մասնակցեցայ միութեան բանակումին, որ մեծ ազդեցութիւն ձգեց վրաս եւ որմէ գեղեցիկ յիշատակներով վերադարձայ: Ծանօթացայ Սուրիոյ տարբեր շրջաններէ մասնակցած տարեկիցներուս, որոնց հետ մինչեւ օրս մտերիմ ընկերներ եմք: Անոնց հետ մեկ շաբաթ ապրելու գաղափարը կը մղէր ամէն տարի բանակումի մասնակցիլ:

Այսօր արդէն 5-րդ կարգի պատանի եմ: Թէեւ ուրախ եմ, բայց միեւնոյն ատեն կը տխրիմ, որովհետեւ հինգ տարի այս միութեան անդամ ըլլալէ ետք պիտի դադրիմ անոր շարքերուն մաս կազմելէ: Ափսոս ս, որ օրերս շատ արագ անցան միութեան մէջ:

Սուրիոյ Պատանեկան Միութիւնը շատ բաներ սորվեցուց մեզի: Մեր միտքը զարգացուց, չարքաշութիւն սորվեցուց, բայց մանաւանդ սորվեցուց ինչպէ՛ս հայ մնալ, ինչպէ՛ս տեր դառնալ հայրենիքին, ինչպէ՛ս պաշտպանել մեր իրաւունքները եւ ինչպէ՛ս դառնալ հայրենասէր, որովհետեւ այս միութիւնը ամէն բանէ առաջ կը կերտէ հայ երիտասարդը, որ ապագայի հայ ղեկավարն է:



«ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ» ՄՐՑԱՇԱՐՔԻՆ ԸՆԴՄԵՋԵՆ

Ընկի.Շողեր Տեր Յովհաննեսեան<sup>8</sup>  
Սուրիա



Յ.Յ.Դ. Բ.-ի Երիտասարդական Գրասենեակի կազմակերպած «Պատանի Ախոյեան» մրցաշարքին մասնակցեցանք ես և պատանի ընկերներես ոմանք: Մեզմէ իւրաքանչիւրը բնագաւառ մը ընտրեց: Ես ընտրեցի պատանեկան միութիւններու բարգաւաճման մասին նիւթի պատրաստութիւնը: Իմ նիւթս պատանեկան միութեան մէջ նորարարութիւններ ներառելն էր:

Առաջին գաղափարը, որ մտքիս մէջ արթնցաւ այն հարցադրումն էր, թէ ինչո՞ւ չ'օգտուիմք համացանցի ընձեռած հնարաւորութիւններէն: Մտածեցի, որ կարելի է YouTube-ի մէջ Պ.Միութեան յատուկ էջ պատրաստել եւ անոր մէջ տեղադրել պատանիները հետաքրքրող նիւթերով դասախօսութիւններ, ներառեալ հայոց պատմութիւն եւ Յ.Յ.Դ. պատմութիւն: Այս ճամբով կրնանք նաեւ մաքուր արեւմտահայերէն տարածել:

Ժամանակի ընթացքին մեր էջը կ'ունենայ իր հետեւողները եւ անլի դիւրին կը հասնիմք մեր նպատակին:

Կրնանք օգտուիլ նաեւ wp community բաժնէն եւ յարաբերութիւն մշակելու նպատակով խումբեր կազմել: Իւրաքանչիւր պատանի իր միութեան մէջ մատուցած դասախօսութիւնը կը տեղադրէ այս խումբին մէջ եւ ժամանակ մը ետք կ'ունենանք բազմաթիւ նիւթերով դասախօսութիւններ: Կրնանք նաեւ շաբաթական հերթականութեամբ օր եւ ժամ յատկացնել որպէսզի պատանիները գրուցեն որոշ նիւթի մը մասին:

Որովհետեւ Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն յատուկ երգ չունինք ապա կրնանք երգ յօրինել: Իւրաքանչիւր երկրէ լաւագոյն նուագող եւ երգող պատանիները կը ձայնագրեն ու առաջին անգամ կը ներկայացնենք պատանիներու կատարողութեամբ:

Կրնանք օգտուիլ համացանցէն եւ զանազան նիւթերով դասընթացքներ կազմակերպել:

«Պատանի Ախոյեան» օգտաշատ մրցումը, իր բազմաթիւ բնագաւառներով, կամուրջ հանդիսացաւ տարբեր շրջաններու պատանիներու միջեւ: Մենք կրցանք մեր ձիրքերը զարգացնել ու մեր միութեան բարելաւման համար ոչ միայն միտքեր արտայայտել, ապա այդ միտքերը իրականացնել:



<sup>8</sup> Ընկի.Շողեր Տեր Յովհաննեսեան մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ» մրցաշարքի պատանեկան միութիւններու բարգաւաճման նիւթի ներկայացման մրցումին:



## ՓՈՔԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

*Ընկհ.Սարին Սարգիսեան<sup>9</sup>  
Սուրիա*

Յաճախ մեզի, իբր պատանիներ, հարցուցած են թե ինչպիսի՞ տորութիւններ կը փափաքինք տեսնել պատանեկան միութեան մէջ: Այս մասին մտածելէ ետք եզրակացուցած եմ հետեւեալ միտքերը.

\* Առաջին անգամ երբ պատանի մը միութեան պիտի անդամակցի պէտք է յստակ գաղափար ունենայ միութեան եութեան մասին, այսինքն՝ ծանօթ ըլլայ անոր նպատակներուն ու գաղափարներուն: Այս աշխատանքին մէջ ազգային դպրոցներուն մեծ դեր կը վերապահուի: Պէտք է տարբեր աշխատանքներով միութեան քարոզչութիւնը կատարենք եւ մղենք աշակերտները, որ անդամակցին:

\* Կարելորել ներկայութիւնն ու ժամանակ յարգելու հարցը: Շատ պատահած է, երբ խմբական ժողովներու ներկայութեան պատկերը մտահոգիչ եղած է, որովհետեւ անդամները իրենց ընկերներուն կամ ընտանիքին որոշումներուն համաձայն բացակայած են եւ կամ անտեղի պատճառաբանութիւններ յայտնելով ուշացած են ժողովին: Այս մէկը մեծապէս կ'ազդէ պատանիներուն վրայ եւ զանոնք կ'առաջնորդէ դեպի անտարբերութիւն:

\* Լրջութեամբ հետեւիլ դաստիարակչական ծրագիրներու գործադրման:

Վստահ եմ, որ այս փոքր փոփոխութիւններն անգամ պիտի նպաստեն միութեան յառաջդիմութեան:



<sup>9</sup> Ընկհ.Սարին Սարգիսեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆ» մրցաշարի պատանեկան միութիւններու բարգաւաճման նիւթի ներկայացման մրցումին:

ՄԻՆՉ ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՃԱՄԲԱՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՆՐՈՒՄ ՀԵՏ

*Ընկի Առլի Քելլեան  
Գանատա*



Ողջ պատանեկութեանս ընթացքին նուիրուած եղած եմ Հ.Յ.Դ. Գանատայի Պատանեկան Միութեան, միշտ պատրաստ օգտակար դառնալու վարիչներուս:

Հաճոյքով ներկայ կը գտնուիմ հերթական բոլոր ժողովներուն, վերջերս նաեւ իբր վարչական ստանձնած եմ տարբեր տեսակի պարտականութիւններ, եւ գիտելիքներու շտեմարանս ամբարած թէ՛ ազգային, թէ՛ միութենական գիտելիքներով:

Պատանեկանի անդամ ըլլալուն ամենէն մեծ առաւելութիւններէն մէկը փոքր տարիքէն տարբեր տեսակի փորձառութիւններ ձեռք ձգելն է: Օրինակի համար գործունեայ եւ պարտաճանաչ անդամ ըլլալու շնորհիւ, ինծի հիանալի առիթ ընծայուեցաւ մասնակցելու AYP Camp-ին: Մասնաճիւղէս ընկերներու ներկայութիւնը ա՛լ աւելի հետաքրքրական դարձուց այս ճամբարին ընթացքը: 2023-ի Յուլիսին հինգ ընկերներով ուղղուեցանք դէպի օդակայան՝ Big Pines ճամբորդելու համար, ուր Լոս Անճելոսի միութենական մեր ընկերները մեզ կը սպասէին:

Բանակումի ընթացքին ծանօթացանք բազմաթիւ դասախօսներու, որոնք նոր դասեր քաղելու մեր ծարաւը յագեցուցին հաճելի նիւթերով: Չիս ամենաշատ տպաւորող դասախօսութիւնը տուաւ ընկեր Արիք Գեորգեան, որ մեզ հիացուց երաժշտական բազմաթիւ գործիքներու տիրապետութեամբ եւ մեծ տաղանդով: Ան նուազով եւ ազգային-յեղափոխական երգեր երգելով շատ մտերմիկ եւ ճոխ մթնոլորտ մը ստեղծեց, որ եղաւ այդ շաբթուան նախասիրած պահս:

Ճամբարի միւս պատնիսներուն հետ ալ շուտով ընկերացանք եւ շատ լաւ ժամանակ անցուցինք միասին: Գիշերներ կը լուսցնէինք խօսելով, կատակելով, մտերմանալով եւ զուարճանալով: Բոլորովին տարբեր զգացում մըն էր կապուիլ ինծի չափ ազգս ու հայրենիքս սիրող գաղափարի ընկերներու եւ ընկերուհիներու հետ, որոնք կապրին այլ երկրի մը մէջ: Անմոռանալի օրեր անցուցի նոր ընկերներուս հետ, որոնց հետ մինչեւ օրս կապ կը պահեմ:

Այս բանակումը ինծի համար շատ կարեւոր փորձառութիւն մը եղաւ, որովհետեւ այնտեղ սորված կեանքի դասերս ինծի ամէն օր ուժ կու տան, որ իմ կարգիս պայքարիմ եւ ամէն գնով ծառայեմ ազգիս եւ հայրենիքիս յառաջդիմութեան համար:

Անկասկած, այդ մէկ շաբթուան ընթացքին ապրած յիշատակելի վայրկեաններս եւ անմոռանալի յիշողութիւններս ամենէն մեծ նուէրները եղան, զորս պատանեկան միութիւնը պարգեւած է ինծի: Կը յուսամ, որ բոլոր հայ պատանիները առիթը ունենան ապրելու այսպիսի անմոռանալի օրեր: Անհամբեր կը սպասեմ ուրիշ առիթով մը վերադառնալու եւ միանալու ճամբարական ընկերներուս:





## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ...

*Ընկի. Աննա Գայապալեան  
Գանադա*

Հազիւ եօթը տարեկան բոլորած՝ ընտանեօք տեղափոխուեցանք Լիբանան, փախելով Սուրիոյ դաժան պատերազմէն: Բարեբախտութիւն կը համարեմ, որ մեր բնակած տունը հայկական թաղամասի մը մէջ էր եւ ակումբին կից: Ուստի, առիթը ունեցայ անդամակցելու Ֆանար շրջանի «Արմէն Գարօ» մասնաճիւղի պատանեկան միութեան: 2016 թուականին լքելով Լիբանանը գաղթեցիկը դէպի Գանատա, աւելի ապահով պայմաններու մէջ ապրելու եւ փայլուն ապագայ մը ունենալու յոյսով:

Ահաւասիկ մօտաւորապէս երեք տարի է, որ ես միացած եմ Գանատայի Պատանեկան միութեան շարքերուն: Այս տարին ըլլալով իմ աւարտական տարիս, իբր փորձառու պատանի, մաս կը կազմեմ մեր մասնաճիւղերու վարչական կազմին եւ աւելի մեծ պատասխանատուութեան զգացումով կը շարունակեմ միութենական աշխատանքներս:

Ամէն շաբաթ կը մասնակցիկը հերթական ժողովներու, որոնց օրակարգը կը բովանդակէ դաստիարակչական հարուստ ծրագիր: Հերթական ժողովներէն անկախ, պատանեկան միութիւնը նաեւ կը կազմակերպէ ձեռնարկներ, պտոյտներ եւ սեմինարներ:

2023-ի Հոկտեմբեր ամսուն, երկրորդ անգամ ըլլալով մասնակցեցայ համագանատական տարեկան սեմինարին, որուն մասնակցեցան եւս երեք մասնաճիւղերէ մեծ թիւով պատանիներ: Սեմինարը առիթ մըն էր ծանօթանալու նոր ընկերներու, որոնք եկած էին Գանատայի չորս կողմերէն: Այդ շաբաթավերջը առիթ ընծայեց, որ նորանոր փորձառութիւններ ձեռք ձգեմ, ըլլան անոնք ազգային, ընկերային, գիտական կամ մարմնամարզական ծիրերէն ներս:

Սեմինարը կ'ընդգրկէր զանազան նիւթերու եւ հարցերու մասին դասախօսութիւններ, ինչպէս՝ Հ.Յ.Դ. պատանեկան միութեան հիմնադրութեան 100 ամեակ, Ազգային անմահ հերոսներու կենսագրութիւններ, 5-րդ Շարասեան-ազգավնաս քաղաքականութիւն եւ այլն: Օրակարգը հարուստ էր նաեւ խարոյկի շուրջ երգեցողութեամբ, մարզանքով, զարգացման մրցումով եւ դաստիարակչական խաղերով: Այս բոլորը հեռաւոր քաղաքներէ մէկտեղ ժամանած պատանիներու մէջ ստեղծեցին շատ հաճելի եւ մտերմիկ մթնոլորտ:

Շատ կը սիրեմ պատանեկան միութիւնը եւ անոր պարզեւած տաքուկ յիշատակները: Անհամբեր կը սպասեմ, որ յառաջիկայ տարի փոխանցուիմ մեր երիտասարդական միութեան շարքերը՝ նորանոր փորձառութիւններ ձեռք ձգելու յոյսով:



## ՄԵՐ ԺՈՂՈՎՆԵՐԸ

*Ընկ. Լիլիթ Ադամեան  
Գանադրու*




Հինգ տարի է, որ կանդամակցիմ Հ.Յ.Դ. Գանատայի Պատանեկան Միութեան: Այս հինգ տարիներու ընթացքին շատ բաներ սորված եմ մեր միութեան, մեր պատմութեան, մեր հերոսական անցեալին եւ հայրենիքի պաշտպանութեան սիրոյն մեր նախահայրերուն թափած արեան մասին:

Մեր մասնաճիւղերու ժողովները տեղի կ'ունենան շաբաթական դրութեամբ, որոնց ընթացքին յաճախ կը ծանօթանանք մեր ֆետայիներուն կեանքին ու անոնց հայրենանուէր գործերուն: Այս դասախօսութիւնները շատ կը հետաքրքրեն զիս, որովհետեւ մեր վարիչները իրենց փոխանցելիք գիտելիքները կ'ամփոփեն եւ մեզի կը մատուցեն շատ ազդեցիկ ձեւով: Ներկայացումներէն ետք յաճախ տեղի կ'ունենան կարծիքներու փոխանակումներ ու բանավեճեր մեր սորվածները ամրապնդելու նպատակով:

Անձնապէս շատ տպաւորուած եմ Զրիստափոր Միքայելեանի գործերով: Ան ո՛չ միայն հիմնադիրը եղած է այս աւելի քան 133 տարիներ գործող կուսակցութեան, այլեւ իր վարքով կենդանի օրինակ դարձած է իւրաքանչիւր հայու համար: Ճակատագրական գործողութեան մը նախապատրաստական աշխատանքներու ընթացքին, ղեկավարի մը նման հրահանգներ տալու փոխարէն ան անձնապէս մեկնած է ռումբի փորձարկումներ իրականացնելու համար եւ դժբախտ պատահարի մը որպէս հետեւանք զոհուած ու անմահացած:

Վերադառնալով մեր ժողովներու օրակարգին, իւրաքանչիւր շաբաթավերջ կը գումարենք նաեւ յանձնախումբի ժողովներ: Երկու տարի առաջ մաս կազմեցի դաստիարակչական յանձնախումբին, որուն անդամներուն հիմնական պարտականութիւններէն մէկն էր Հայաստանի եւ Արցախի ամենանոր լուրերը փոխանցել մեր ժողովական ընկերներուն: Անցեալ տարի մաս կազմեցի պատի թերթի յանձնախումբին: Մեզմէ կը պահանջուէր հաւաքել ազատամարտիկներու մասին տեղեկութիւններ, զանոնք ամփոփել ու պատի թերթի վերածել, որպէսզի ցուցադրուին մեր ակումբի ցուցատախտակներուն վրայ եւ պատանեկան միութեան սենեակին դիմաց: Այս տարի մաս կը կազմեմ ընկերային յանձնախումբին, որուն պարտականութիւնն է կազմակերպել տարբեր տեսակի ձեռնարկներ, ըլլան անոնք միայն պատանիներուն կամ ամբողջ գաղութին համար: Կրնամ ինքնավստահօրէն ըսել, թէ այս երեք տարիներուն ընթացքին մեծ փորձառութիւն ձեռք ձգած եմ այս տարբեր յանձնախումբերուն մաս կազմելով: Անոնց տարբեր ծրագիրներէն շատ օգուտներ քաղած եմ եւ վստահ եմ, որ տակաւին շատ բաներ ունիմ սորվելիք:

Վերջապէս, ժողովներու ընթացքին մեր վարիչ պատասխանատուները մեզի կը սորվեցնեն նաեւ հայրենասիրական եւ յեղափոխական երգեր, զորս աշխուժութեամբ կ'երգենք: Երբեմն մեր սորված նոր երգը ամբողջ





Հաբաթ մը միտքիս մէջ կը մնայ ու կ'երգեմ անդադար: Ժողովի աւարտին մեր սիրելի վարիչները աշխոյժ խաղեր կը վարեն, որոնցմէ ետք ժողովը կը փակենք «Մշակ բանուոր» քայլերգով: Այսպիսով ցտեսութիւն կ'ըսենք մեր ընկերներուն՝ յաջորդ շաբաթ կրկին տեսնուելու պայմանով:

Հպարտ եմ, որ պատանեկան միութեան մաս կը կազմեմ եւ պիտի ջանամ ընել կարելիս ըլլալու համար տիպար հայ մը ու պատիւ բերելու ազգիս ու հայրենիքիս:



## ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԿԵԱՆՔԻՍ ՄԷՋ

*Ընկ. Փոլ Օհանեսյան  
Արեւմտեան Ամերիկա*



Պատանի ըլլալը իմ ակնկալածես բոլորովին տարբեր էր: Կը կարծէի, որ պատանեկան միութիւնը աւելի ընկերային կազմակերպութիւն մըն է:

Սակայն երբ անդրադարձայ, որ աւելի լուրջ միութիւն մըն է, այն ժամանակ իմ հետաքրքրութիւնս գրաւեց: Ամէն շաբաթ անհամբեր կը սպասէի պատանեկանի ժողովներու ժամկետը: Պատանեկանը աւելի ընդլայնեց հայրենասիրութեան ոգիս նաեւ սերտ յարաբերութիւն ստեղծեց իմ մայր երկրիս հետ: Պատանի ըլլալովս մասնակցած եմ զանազան ձերնարկներու, օրինակ դասախօսութիւններու, քայլարշաւներու, եւ այլն:

Ապագային կը փափաքիմ մասնակցիլ այլ աշխատանքներու եւ ծրագիրներու: Կը մաղթեմ, որ սփիւռքահայ բոլոր պատանիները միանան այս հրաշալի միութեան:





## WHAT WE NEED TO LIBERATE ARTSAK AGAIN

*Ung. Vahan Sosikian*  
*Crescenta Valley*

About 30 years ago there was a war between Artsakh and Azerbaijan. The war lasted 6 years, but finally and after losing many lives we liberated Artsakh and we won the war. Meanwhile, Azerbaijan was building their power, their army and their population, and when they attacked us in 2020 the situation was different for being by weak having a government like Pashinian's. We lost the war and Pashinian surrendered 75% of Artsakh.

In 2022, Azerbaijan carried out 9 months of an illegal blockade against Artsakh, and just when the people of Artsakh were least able to defend themselves, Azerbaijan attacked and committed genocide forcing all armenians to leave Artsakh in September 2023.

Although the situation is tragic and we are sad, we have to stand strong and stop our mourning, if we want to get our country back then we must love it and start caring. We have to get up and show our enemies that one day we will liberate Artsakh again.

The first steps are that we need a good and well-serving government, money for our army, people to return to our homeland and we need jobs for them to live and survive again.

## ԿԵԱՆՔՍ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՍ

**Ընկ. Վրեժ Մովսեսյան**  
*Արեւմտեան Ամերիկա*




Ծնած եմ «Փոքր Հայաստան»ի մը մեջ եւ մեծցած քաղաքի մը մեջ, որ ունի ամենէն մեծ հայկական գաղութը, այդպիսով, իմ սիրտս եւ հոգիս միշտ մնացած են մշակոյթիս եւ հայրենիքիս հետ:

Անունս Վրեժ Մովսեսյան է: Տասներեք տարեկան եմ եւ կը յաճախեմ Ռոզ եւ Ալեքս Փիլիպպոս ազգային վարժարան: Ես հպարտ պատանի եմ Burbank AYP Juniors (Կայծակ) մասնաճիւղէն: Կը նուիրեմ իմ ամբողջ ժամանակս իմ մասնաճիւղիս աշխատանքներուն: Կը ձգտիմ իմ երկիրս դէպի ազատութիւն եւ խաղաղութիւն առաջնորդել: Ամէն Ուրբաթ կը մասնակցիմ իմ մասնաճիւղի ժողովին եւ շատ բան կը սորվիմ մշակոյթիս եւ հայրենիքիս մասին:

Իբրեւ դիւանի անդամ պարտականութիւն ունիմ կառավարելու եւ հսկելու մեր ժողովները: Ծարունակ կ'օգնեմ իմ ընկերներուս եւ կը վստահեցնեմ, որ ամէն ինչ լաւ է: Հ.Ե.Դ. ժողովներուն մենք կը խօսինք Հայաստանի եւ Արցախի վիճակին մասին եւ կը շեշտենք, որքան կարեւոր է, որ մենք ծառայենք եւ օգնենք մեր ազգին ու հայրենիքին: Իբրեւ հայ պատանի կը մասնակցիմ ուսումնական սեմինարներու, ճամբարներու եւ մաս կը կազմեմ ազգային ցոյցերու եւ դրամահաւաքներու:

Ուսումնական սեմինարները կը սորվեցնեն Հայաստանի եւ Արցախի, Հ.Ե.Դ.-ի եւ Հ.Յ.Դ.-ի մասին: Ծամբարներուն ես նոր ընկերներ կ'ունենամ, որ նոյն հաւատքը ունին մեր հայրենիքին հանդէպ: Մեր հայկական ցոյցերուն կը մասնակցիմ որքան որ կրնամ եւ կը փորձեմ իմ ձայնը լսելի դարձնել:

Հ.Ե.Դ.-ն առիթ ստեղծած է, որ ունենամ մտերիմ բարեկամութիւններ եւ ընկերութիւններ, նաեւ նոր անհատներու ծանօթանամ եւ բացայայտեմ նոր հնարաւորութիւններ: Վերջապէս, երբ մեծնամ ու առաւել հասունամ պիտի շարունակեմ ուղիս եւ նուիրուիմ՝ Հ.Յ.Դ.ի շարքերուն:





# AI (ARTIFICIAL INTELLIGENCE)

Ընկ. Չառէն Ճուհարեան<sup>10</sup>  
Սուրիս



<sup>10</sup> Ընկ.Չառէն Ճուհարեանը մասնակցեցաւ «ՊԱՏԱՆԻ ԱԽՈՅԵԱՆ» մրցաշարի ազատ նիւթի ներկայացման մրցումին:

### 3.3.7. ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

*Յունաստանի պատանեկան միութեան  
«Չարթօնք» խումբ*

3.3.7. Յունաստանի պատանեկան միութեան «Չարթօնք» խումբը որոշեց ամփոփ ներկայացում մը պատրաստել միութեան աշխատանքներուն վերաբերեալ, քանի որ հաւանաբար շատեր ծանօթ չեն, թէ ինչպէս մեր միութիւնը կ'աշխատի տարեշրջանի մը ընթացքին:

3.3.7. Յունաստանի պատանեկան միութիւնը կը բաղկանայ երեք խումբերէ՝ «Լեւոն Շանթ» խումբը՝ Սելանիկի մէջ, «Չարթօնք» եւ «Քրիստափոր Միքայելեան» խումբերը՝ Աթէնքի մէջ:


Մեր տարեշրջանը կը սկսի Սեպտեմբեր ամսուն «Յետբանակումի հաւաք»ով, ուր բոլոր պատանիները կը հաւաքուին, որպէսզի վերոյիշէն ամրան բանակումի յուշերը, համապատասխան պատկերներու հետեւելով: Առաջին ժողովի ընթացքին ամէն խումբ կը գնահատէ անցեալ տարեշրջանը եւ նոր վարչութիւններ կ'ընտրուին:

Աթէնքին մէջ ժողովները տեղի կ'ունենան ամէն Շաբաթ, իսկ Սելանիկի մէջ՝ ամէն Կիրակի: Այս ժողովներու ընթացքին կը հետեւինք վարիչներու, վարչութեան անդամներու կամ երիտասարդականի անդամներու կողմէ ճշդուած օրակարգերուն: Օրակարգերը միշտ շատ հետաքրքրական ու թուային ձեւով կը ներկայացուին եւ կ'ընթանան ընկերներու աշխոյժ մասակցութեամբ: Անցնող ամիսներուն եօթնանդամ վարչութիւնը բնական աղետներու մասին նիւթ պատրաստեց շէտտելով անոնցմէ պաշպանուելու միջոցները:

Սուրբ Ծնունդի առիթով պատանիները խթման գիշերը Աւետիսի շրջագայութեան կը մասնակցին, այցելելով մեր շրջանի հայկական տունները: Երեք պատանիներու համար կը կազմակերպուի եռօրեայ արշաւ: Զոն խումբերու կը բաժնուին եւ հայկական նիւթերու շուրջ projects կը պատրաստեն ու կը ցուցադրեն:

Եռօրեայ արշաւէն բացի կը կազմակերպուին խնճոյքներ, միօրեայ արշաւներ եւ դաստիարակչական այցելութիւններ: Ապրիլ 24-ին կը մասնակցինք համայնքին մէջ ծրագրուած ձեռնարկներուն եւ ցոյցերուն:

Կապոյտ խաչի շուկային կը մասնակցինք ձեռային աշխատանքներով: Մեր տարեշրջանը կ'աւարտի մեր ամենասիրած պահով՝ բանակումով, որուն տասը օրերու ընթացքին կը ստեղծենք անմոռանալի յիշատակներ:



## Արեւմտեան Ամերիկայի Ն.Ե.Դ. Պատրանիներու Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը

Վերջին քակի մը տարիներուն Արեւմտեան Ամերիկայի Ռ.Ե.Դ. պատանիներու կեդրոնական վարչութիւնը բեղուն գործունէութիւն ծաւալեց:

Պատանեկան միութիւնները յաճախ ներկայ գտնուեցան Ռ.Յ.Դաշ-նակցութեան եւ ուղեկից միութիւններու կազմակերպած ձեռնարկներուն եւ ցոյցերուն, ինչպէս նաեւ մասնակցեցան հանգանակութիւններու եւ դասա-խօսութիւններու: Պատանիներէն շատեր փոխանցուեցան Ռ.Ե.Դ.ի շարքերը:

Ձմեռնային եւ գարնանային բանակումներու, ցոյցերու, դասա-խօսութիւններու միջոցով պատանիներու եւ երիտասարդականի անդամներու փոխ յարաբերութիւնները մնացին ջերմ եւ ընկերական: Միջմասնաճիւղային յաճախակի շփումներն ու ժողովներու մեծ թիւով ներկայութիւնը անքակտելի կապ մը ստեղծեցին երիտասարդականի եւ պատանեկանի անդամներուն միջեւ: Այս կապը դրական ազդեցութիւն ունեցաւ շարքերը ամուր պահելու, ինչպէս նաեւ մէկ ընտանիք հասկացողութիւնը զարգացնելու:

Վերջին վեց տարիներուն սփոփիչ էր տեսնել պատանիներու եւ երիտասարդներու այս յարաբերութիւնը: Միասին ժողովներու մասնակցիլը առիթ ստեղծեց ո՛չ միայն մեր կազմակերպութեան կամ ազգային հարցերու շուրջ քննարկումներ կատարելու, այլ նաեւ կիսելու անձնական, դպրո-ցական եւ առհասարակ կեանքի մասին միտքեր ու մտահոգութիւններ: Ժողովներու կամ ժողովներէ դուրս այս փոխյարաբերութիւնը կարելոր է պատանեկանէն երիտասարդական փոխանցման համար:

Ռ.Ե.Դ. պատանիներու կեդրոնական վարչութիւնը կ'արժեւորէ եւ խիստ կարելոր կը նկատէ այս փոխկապակցութիւնը Ռ.Ե.Դ.-եան պատա-նեկան եւ երիտասարդական թելերու միջեւ, որպէս մեր կազմակերպութեան յարատեւման անհրաժեշտ եւ կենսական գրաւական:



**ՀԱՄԱՌՕՏ ՁԵԿՈՒՑԱԳԻՐ  
Հ.Յ.Դ. Բ.-Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ  
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՆ  
2019-2024**

**Ա.-ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

ա.-Դաստիարակչական բնագաւառէն ներս սատարել Հ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն:

բ.-Կազմակերպել պատանեկան միութիւններու յատուկ տարբեր բնոյթի համահայկական ծրագիրներ եւ կամուրջներ յառաջացնել զանազան շրջաններու միութիւններու եւ անդամներու միջեւ: Յարաբերական գործի ուժեղացման կողքին նպաստել նաեւ փորձառութիւններու փոխանակման:

գ.-Նպաստել Հ.Յ.Դ. մարդուժի պատրաստութեան:



**Բ.-ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԾՐԱԳԻՐՆԵՐ**

**ա «Պատանեկան միութիւններու «Ուղեցոյց»**

Մշակուեցաւ եւ Հ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն տրամադրուեցաւ Հ.Յ.Դ. Պատանեկան միութիւններու յատուկ ՈՒՂԵՑՈՅՑԸ:

Այս աշխատանքը յոյժ կարեւոր էր այն նկատառումով, որ Հ.Յ.Դ. աշակերտներու համար հիմնական նշանակութիւն ունին Հ.Յ.Դ. պատանեկան միութիւնները: Անոնք կը հանդիսանան ազգին հիմնախնդիրներով հետա-





քրքրուող եւ դաշնակցական գաղափարախօսութեամբ թրծուած մարդուծի գլխաւոր հնոցը:

Ուղեցոյցը կը բովանդակէ երեք բաժին՝ պատանեկան միութիւններու առաքելութիւն, դաստիարակութիւն եւ կազմակերպական-քարոզչական ուղեգիծ:

Յ.Յ.Դ. Պատանեկան միութիւններու նպատակասլաց գործունեութիւնը կարելի է ապահովել վերոնշեալ ուղեցոյցի հիման վրայ աշխատանքային նախագիծ մշակելով եւ այս մէկը իրականացնելով մասնագետ մանկավարժներու եւ փորձառու ընկերներու օժանդակութեամբ՝ միաժամանակ իւրաքանչիւր շրջանի առանձնայատկութիւններուն պատշաճող ընթացակարգով:

**բ.-Վարիչներու պատրաստութեան տարածաշրջանային դասընթացքներ**

Յ.Յ.Դ. մարդուծի դարբնոց հանդիսացող պատանեկան միութիւններու արդիւնաբեր աշխատանքի կարելորութիւնը առաջնային դասելով, 24 Սեպտեմբեր 2020 - 24 Նոյեմբեր 2021 ժամանակաշրջանին կազմակերպուեցան երեք տարածաշրջաններու (Եւրոպա, Ամերիկաներ ու Գանատա, Միջին Արեւելք) Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու վարիչներու պատրաստութեան առցանց դասընթացքներ:

Դասընթացքի նիւթերու ներկայացման աւարտին տեղի ունեցան քննարկումներու նիստեր: Վերջին երկու նիստերը յատկացուեցաւ մասնակցող միութիւններու ներկայացուցիչներու կողմէ պատրաստուած համապատասխան սերտողութիւններու ներկայացման, ուր յստակ կ'արտացոլար անոնց քաղած կամ թարմացուցած գիտելիքները:

Այնքան էր դասընթացքին մասնակցող ընկերներու լուրջ մօտեցումը, հարցերու քննարկման ողջունելի եղանակն ու առարկայական մօտեցումը, ներկայացուցած գործնական առաջարկները եւ Նոր գիտելիքներ ամբարելու ցանկութիւնը:

Այս ծրագրի յաջող փորձէն մեկնելով 2022-2023-ին կազմակերպուեցաւ վարիչներու պատրաստութեան տարածաշրջանին առցանց Բ. դասընթացքը:

**գ.-Պատանեկան միութիւններու յատուկ սերտողութիւն**

Պատրաստուեցաւ պատանեկան միութիւններու կազմակերպչական եւ դաստիարակչական իրավիճակին, անոնց դիմագրաւած դժուարութիւններուն եւ գրասենեակէն ակնկալութիւններուն մասին հարցարան:

Յարցարաններու լրացումներու հիման վրայ պատրաստուեցաւ պատասխաններու ամփոփումի ու եզրակացութեան շրջաբերական: Սերտելով ներկայացուած պատասխանները կարելի եղաւ ծանօթանալ Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու կազմակերպական եւ դաստիարակչական աշխատանքներու իրավիճակին, անոնց նախաձեռնած գործունեութիւններուն, դիմագրաւած դժուարութիւններուն, դժուարութիւնները փարատելու միջոցներուն եւ երիտասարդական գրասենեակէն ակնկալիքներուն:



## դ.-Պ.Մ.-ներու յատուկ դաստիարակչական թերթիկներու պատրաստութիւն

Այս աշխատանքին մասին տարբեր տեսակետեր հնչեցին: Շրջաններէն ոմանք մեծապէս օգտակար համարեցին այս նախաձեռնութիւնը հետեւեալ հիմնաւորումներով.

1- Թերթիկները մեծապէս օգտակար կը դառնան վարիչին՝ պատրաստ, համադրուած եւ պատանհին համար մատչելի ոճով նիւթեր հայթայթելով:

2- Յ.Յ.Դ. բոլոր պատանեկան միութիւնները միեւնոյն շաբաթը, միեւնոյն դաստիարակչական նիւթերը կը ստանան եւ կը քննարկեն:

3- Պատանին դիւրութեամբ կրնայ իր մօտ պահել նիւթը, արխիւացնել եւ ցանկացած ժամանակ գանհկա օգտագործել:

Շրջաններէն ոմանք թերթիկներու այս ձեւը նախնական, նոյնիսկ ժամանակավրէպ համարեցին, ակնարկելով, որ շուրջ 20-30 տարի առաջ եւս կային նմանօրինակ թերթիկներ:

Սակայն համարեա՛ր բոլոր շրջանները առաջարկեցին, որ դաստիարակչական թերթիկները միայն յեղափոխական պատմութիւնը չ՛ընդգրկեն, այլ նաեւ ընդհանուր հայկականութեան վերաբերող նիւթեր (ազգային, պատմական, աշխարհագրական, մշակութային, եւ այլն): Մեծամասնութիւնը կը բաժնէր այն տեսակետը, որ նախ պետք է պատրաստել մարդը, ապա՝ հայ մարդը, ապա՝ դաշնակցականը:

**ՆՅՂ. Բ.Ն.ԵՏԱՆԱԿՆԻՊԻՆ ԳՐԱՆՆԵԱԿ**  
**ՊԱՏԱՆԻՆԸ ՅԵՆՂԱՆՈՒՄԸ**  
**ՊԱՏԱՆԻՆԸ ՄՈՒԹՅԱՆՆԵՐԻ ՍԱՏՈՎ ԳԱՏՏԱՄԱՂՄԱՐՆ ԹԵՐԹԻԿ**  
 ԹԻՎ-2  
 Մայիս 2021

**ՇՈՒՇԻ**  
**Ս. ՄԱՍ ԱՎԱՏԱԳՐՈՒՄ**

Փայտափայտի գիւնծ թշնամի իր ետին ձգած էր ստափէն գիծապաշար: Միայն գիծապանօտք էրկու տարի կը բաւէր Արցախը պաշտպանելու համար:

Եռօշին ազատագրելու գործողութիւնը ստանալուէտ: **Հնարանքը (տեղեկան մը** որովհետեւ կըր գործողութիւնը զկատարող երաստակատարները կը ներգրայածեն բարագի ազատագրման մտադրման նախագիծը, արեւտն համարման եւ վտանգատք կը թողի այդ որ Հնարանանք պաշտպանութեան օրտան նախարար Վազգէն Մարգարեանը կը յայտարարէ, որ էրկ նիւտեղիկը իրականանալու, սպաւ բարագի ազատագրումէն ետք ինք ստապարման կ'անուանանալ:

**Միջին Տնտարար**  
 1992-1994 ազատագրուելու Տարգնանար (Քիլոպարք) Տրոխականք Շտակականք) եւ Անտարար (Մարտարան) որով Արցախը Հնարանանքն մարտնոք Լաչինի միջանցքը ընդլայնեցան: Մայիս 1994 հայազնուեցան: Տնտարար:

**Շարանակիչ...**

**Հնարարումներ**  
 1-Ի՛նչ պատանեկներ կը սիբիւն Արցախի մէջ նաեւան Շո՛ւշի ազատագրումը:  
 2- Ի՛նչ կրնանք Շո՛ւշին ազատագրելու գործողութիւնը Ինչո՛ւ:  
 3-Հարկեցան մանուկն մը Արցախի սեղանակներու նախագրանքը եւ ներառ թիւրտան ստանկներու կը նաեւարիւնք:

**Սիրելի պատանեկներ,**  
 Արցախեան Արցախը նախկան է իր հողով ու ջուրով, պատմութեամբ ու աշխարհագրութեամբ, մշակութով ու բարքերով, պետք է ընդմիշտ Արցախի ստապանները իրենց նախկան ստանկներով կրկնէր: Ուրեմն յանք:

**Արցախ, ոչ թէ՛ Ղարաբաղ**  
**Շո՛ւշի, ոչ թէ՛ Շուշու**  
**Քիլոպար, ոչ թէ՛ Լաչին**  
**Քարվաճառ, ոչ թէ՛ Քիլոպար**  
**Մարտանք, ոչ թէ՛ Քաշտանկ**  
**Տրոխան, ոչ թէ՛ Տարաղի**  
**Վառանդու, ոչ թէ՛ Տնտար**

## Ե.- Հանդիպում Ը.Վ.Մ.-ներու հետ

Նախօրօք մշակուած օրակարգերով՝ յանձնախումբը հանդիպումներ ունեցաւ Յ.Յ.Դ. 18 պատանեկան միութիւններու ընդհանուր վարիչ մարմիններու հետ (Հայաստան, Արցախ, Ջաւախք, Սուրիա, Լիբանան,

Հարաւային Իրան, Հիւսիսային Իրան, Զուէյթ, Գանատա, Արեւմտեան Ամերիկա, Արեւելեան Ամերիկա, Հարաւային Ամերիկա, Աւստրալիա, Հոլանտա, Շուէտ, Յունաստան, Ֆրանսա եւ Կիպրոս):

Հանդիպումներուն հիմնականօրէն քննարկուեցան իւրաքանչիւր շըրջանի դիմագրաւած դժուարութիւնները եւ Հ.Յ.Դ. Բ.-ի Երիտասարդական Գրասենեակէն ու խորհուրդէն ակնկալուած ներդրումը:

**գ.- Հ.Յ.Դ. Պատանեկան համահայկական առցանց խորհրդաժողով**

22 Դեկտեմբեր 2021-ին տեղի ունեցաւ Հ.Յ.Դ. պատանիներու առցանց խորհրդաժողովը, որ առաջինն էր իր տեսակին մէջ: 16 երկիրներէ 33 պատանիներ իրենց վարիչներուն հետ համախմբուեցան, ծանօթութիւն հաստատեցին, լսեցին Դաշնակցութեան Պատանեկան Միութիւններու ստեղծման եւ նպատակին մասին: Պատանիները արտայայտուեցան իրենց անդամակցութեան եւ փորձառութեան մասին եւ հաստատեցին, որ պատանեկան միութիւնները հայ պատանիին հայեցի դաստիարակութեան, ընկերային կեանքին եւ գաղափարական մտաշխարհի զարգացման կեդրոններ են թե՛ հայրենիքի, թե՛ Սփիւռքի մէջ:

Խորհրդաժողովի աւարտին ընկերները առաջարկներ ներկայացուցին միասնաբար աշխատելու հայրենիքին համար (Հայաստան եւ Արցախ), սերտացնելու միութիւններու միջեւ յարաբերութիւնները եւ ձեռք բերելու նոր գիտելիքներ ու ընկերներ:

**Է.-Խորհրդաժողով**

Յետ սերտողութիւններու եւ քննարկումներու մշակուեցաւ պատանեկան միութիւններու Ը.Վ.Մ.ի ներկայացուցիչներու խորհրդաժողովի օրակարգը եւ այս մասին համապատասխան շրջաբերական յղուեցաւ միութիւններուն: Համավարակի պատճառով խորհրդաժողովը յետաձգուեցաւ: Յառաջիկային՝ Փետրուար 2023-ին, նշեալ խորհրդաժողովի հիմնական օրակարգերը մաս կազմեցին Հ.Յ.Դ. Ուսանողական, Երիտասարդական եւ պատանեկան համագումարին, որ տեղի ունեցաւ Կապանի մէջ:



ԲԱՅՄԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

## ը.- Արցախ-Սուրիա Ը.Վ.Մ.-ներու համագործակցութիւն

Համագործակցաբար Սուրիոյ եւ Արցախի Պ.Ս.Ը.Վ.Մ.-ներուն հետ Արցախէն (Մարտունի եւ Ստեփանակերտ) երկու ընկերներու (Վահագն Խաչատրեան եւ Բենօ Պապայեան) Սուրիա գործուղման համապատասխան ծրագիր մշակուեցաւ եւ գործադրուեցաւ: Ծրագիրը մեծապէս օգտաշատ էր յարաբերական, փորձառութիւններու փոխանակման եւ պատանիներուն մօտ ստեղծուած մթնոլորին առումով:



## թ.- Պատանի Ախոյեանը

Մրցակցութիւնն ու իրախուսանքը դաստիարակութեան մարզէն ներս լաւագոյն արդիւնքները ապահովելու յարմարագոյն միջոցներէն կը համարուին: Դաստիարակչական սիւթերով մրցաշարքերու փորձը ապացուցած է իր արդիւնաւետութիւնը, հետեւաբար նման ծրագրեր Զ.Յ.Դ. պատանեկան միութիւններու մակարդակին կազմակերպելը օգտաշատ գործ է: Այս մեկնակէտով յանձնախումբը կազմակերպեց «ՊԱՏԱՆԻ ԱԾԽԱՐՀԸ» մրցաշարքը, որ կը տեղադրուի մարդու թի պատրաստութեան ծրագրերու շրջագիծէն ներս:

Մրցումները ընդգրկեցին հետեւեալ բնագաւառները.

\*Ճառախօսութիւն:

\*Ասմունք:

\*Հայոց կամ յեղափոխական պատմութենէն դրուագի պատմում եւ եզրայանգում:

\*Ազատ սիւթ (Ընկերային, բնապահպանական, ազգային, գաղափարական թէ այլ հարցի մը ներկայացում եւ լուծումներու առաջարկում):

\*Պատանեկան միութեան բարգաւաճման առնչութեամբ թեզի մը ներկայացում:


Ծրագրին մասնակցեցան Հայաստանի, Արցախի, Սուրիոյ, Լիբանանի, Նոր Զուլայի, Թեհրանի, Յունաստանի, Ֆրանսայի, Հոլանտայի, Արեւ-



մտեան ԱՄՆ-ի Յ.Յ.Դ. պատանեկան միութիւնները: Մրցումներուն մասնակցող պատանիներու ընդհանուր թիւը 53 էր:

Առաջին մրցումը տեղի ունեցաւ 13 Յունուար 2023-ին, իսկ վերջինը՝ 28 Ապրիլ 2023-ին:

Մասնակցող բոլոր ընկերները գրասենեակին կողմէ ստացան ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏԱԳԻՐ եւ դաստիարակչական օգտաշատ Լուերներ, առաջին եւ երկրորդ դիրքեր գրաւողները ստացան խելացի ժամացոյց (smart watch), իսկ ԱԽՈՅԵԱՆ հանդիսացող ընկերը որակաւոր ընկալուչ (headset):



**Ժ.- «ՊԱՏԱՆԻՆ ԱՇԽԱՐՀԸ» հրատարակութիւն**

Մարդու թի պատրաստութեան բնագաւառէն ներս ստեղծագործական ունակութիւններու զարգացումը յորդորելը թէեւ ամէն տարիքի համար աշխատանքային կարելուր սկզբունք է, սակայն պատանեկան տարիքին այս մարտավարութիւնը ի գործ դնելը առաւել արդիւնաբեր կը դառնայ նկատառելով, որ ատակութիւններու բացայայտումը խոչընդոտող գործօնները այս տարիքին նուազ ազդեցութիւն կ'ունենան (կենցաղային, տնտեսական եւ նմանօրինակ հարցեր): Հետեւաբար նման աշխատանք պարարտ հող կրնայ ստեղծել ապագայ ծլարձակումներու համար:

21-րդ դարէն սկսեալ ճարտարարուեստի սրընթաց զարգացումը հաղորդակցութեան ոլորտէն ներս անծայրածիր հնարաւորութիւններ ստեղծեց: Այն ինչ որ տասնամեակներ առաջ երեւակայութեան թռիչքին կարելի էր վերագրել՝ դարձաւ շօշափելի իրականութիւն: Այս բոլորէն օգտուեցան նաեւ



Յ.Յ.Դ. պատանեկան միութիւնները եւ տեղական մակարդակներու վրայ ստեղծեցին հարթակներ կամ կազմակերպեցին առցանց միջոցառումներ: Գիտութեան մէջ նմանօրինակ յառաջացումներու իւրացման ամենէն աւելի փորձառուները բնականաբար փոքր սերունդի ներկայացուցիչները եղան, որոնք երբ թեւակոխեցին իրենց կեանքի գիտակցական մակարդակը՝ այս բոլորը սովորական աշխատանքներ դարձան անոնց համար:

Նշեալ դարաշրջանի առաւելութիւններուն կողքին յաճախ կը հնչեն ստեղծագործական միտքի արտադրութեան դանդաղութեան կամ նոյնիսկ բացակայութեան մտահոգութիւններ: Երբեմն այսպէսով կը բեռնուի պատանիները արտայայտութեան կամ նորարարութեան համապատասխան ամպիոններ չունենալու իրողութեան վրայ: Դժգոհանքը երբեմն կը հասցեագրուի դպրոցներուն, ուրիշ տեղ միութիւններուն: Իւրաքանչիւրը կը ներկայացնէ մեղադրանքը մեղմացնելու իր պատճառները, գուցէ՝ պատճառաբանութիւնները:

Արդ, հաստատելով պատանիներուն ստեղծագործական կարողութիւններու խրախուսման, գրականութեան թէ արուեստի զանազան ոլորտներու մէջ արտայայտութեան զարգացման եւ ազատ խօսքի քաջալերման կարեւորութիւնը, ինչպէս նաեւ ընդհանուր վարիչ մարմիններու եւ վարիչներու մակարդակին միտքերու ու փորձառութիւններու փոխանակման անհրաժեշտութիւնը՝ յանձնախումբը նախաձեռնեց Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու յատուկ «Պատանիին Աշխարհը» հրատարակութեան (PDF ձեւաչափով):

### **Ժա.- Անդամարշաւի նախագիծ**

Սերտելով վերջին քառամեակին հայրենի թէ սփիւռքի Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններու անդամական թիւերը, ակներեւ դարձաւ այնտեղ արձանագրուած թուաքանակի նուազումը: Մինչ մենք տարբեր ծրագրերով, միջոցառումներով ու նախաձեռնութիւններով կը ջանանք մեր գաղափարներուն ու նպատակներուն շուրջ համախմբել հայ պատանիները, կը փորձենք նպաստել հայրենասիրական մօտեցումներով տողորուած պատանիներու կերտման աշխատանքին, կը միտինք նոր սերունդները ջամբել ազգասիրութեան սկզբունքներով, նոյն ժամանակահատուածին մեր անդամներու թիւի մտահոգիչ նուազումի պատկերը կը պարզուի մեր ընդառաջ: Այս բնականաբար ցուցանիշ է տեղ մը մեր ունեցած բացթողումին: Այդ բացթողումը կրնայ ըլլալ քարոզչական, դաստիարակչական կամ այլ բնագաւառներու մէջ, սակայն ամեն պարագայի դարմանումի կամ սրբագրութեան կարիքն ունի:

Առ այդ, անհրաժեշտ համարուեցաւ համարեա՛ր բոլոր շրջաններուն մէջ պատանեկան միութիւններու անդամարշաւներ կազմակերպել:

Այս նպատակով մշակուեցաւ պատանեկան միութիւններու յատուկ ԱՆԴԱՄԱՐՇԱՎԻ ՆԱԽԱԳԻԾ, որ բովանդակեց հետեւեալ գլուխները՝ ՆԱԽԱԲԱՆ, ՆՊԱՏԱԿ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱՌՈՅԹՆԵՐ, Յ.Յ.Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ ԱՆԴԱՄԱՐՇԱՎ, ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆԴԱՄԱՐՇԱՎՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:



**ժբ.- Պատանիները կը դասախօսեն**

Յանձնախումբը իր կազմակերպած զանազան նախաձեռնություններուն ընդմէջէն ծանօթանալով տարբեր երկիրներու պատանեկան միութիւններու անդամ պատանիներու հմտութիւններուն ու ունակութիւններուն, նպատակայարմար համարեց այդ շնորհքները յորդորելու եւ դէպ յառաջ մղելու մարդուժի պատրաստութեան ծրագիրներ իրականացնել: Այս պարունակէն ներս առաջին աշխատանքը եղաւ «Արհեստական Բանականութեան» մասին դասախօսութեան մը ներկայացումը՝ Սուրիոյ պատանեկան միութեան անդամ ընկ. Չաւեն Ճուհարեանի եւ Ֆրանսայի պատանեկան միութեան անդամ ընկ. Արի Տէր Գեորգեանի կողմէ: Նշեալ ընկերներու կարողութիւններուն կարելի եղաւ ծանօթանալ «Պատանի Ախոյեան»ը մրցաշարքի ընթացքին:



**ժգ. Պատանիներու յատուկ խորհրդածողով**

Անցնող քառամեակին յանձնախումբը իր իրականացուցած ծրագիրներուն աւարտին կատարած քննարկումներուն եւ վերլուծումներուն լոյսին ներքեւ արդիւնաբեր համարեց ոչ միայն վարիչներու այլեւ պատանիներու մասնակցութեամբ եւս գործունեութիւններ իրականացնելը: Այս ուղղութեամբ առնուած որպէս առաջին քայլ նախատեսեց կազմակերպել Հ.Յ.Դ. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐ, որ գէթ վերջին քսանամեակի ընթացքին իր տեսակին մէջ առաջինը պիտի ըլլայ:

Այս նախաձեռնութեան գլխաւոր նպատակները ամփոփուեցան հետեւեալ կէտերուն մէջ.

- Պատանիներու ներկազմակերպական տեղեկութիւններու, գիտելիքներու ու հմտութիւններու տարածքը ընդարձակել՝ ընդգրկելով տարածա-



շրջանի Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն վերաբերող կազմակերպական քննարկումներ ու սերտողութիւններ:

-Ծանօթանալ տարածաշրջանի պատանիներու մտահոգութիւններուն, ազգային ու միութենական հարցերու մօտեցումներուն, մտահորիզոնին եւ հեռանկարներուն:

- Նպաստել պատանիներու կազմակերպական փորձառութեան ձեռքբերման:

-Նպաստել տարածաշրջանի պատանեկան միութիւններու եւ պատանիներու միջեւ ընկերական յարաբերութիւններու սերտացման:

-Խորացնել Յ.Յ.Դ. պատանեկան միութիւնները մէկ ընտանիքի պատկանելու գաղափարը եւ մեր գաղափարական դաստիարակութիւնն ու տեսլականը ներթափանցելի դարձնել պատանիներու կրթութեան մէջ:

-Պատրաստել ապագայ մարդուժի տուեալներու անձնադարան (database):

Տարածաշրջանային առաջին խորհրդաժողովը տեղի ունեցաւ 12-14 Ապրիլ 2024-ին, Թեհրանի մէջ, Միջին Արեւելքի Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն մասնակցութեամբ, իսկ երկրորդը՝ 1-3 Նոյեմբեր 2024-ին, Մոնթրէալի մէջ, տեղւոյն Յ.Յ.Դ. Պ.Մ.Ը.Վ.Մ.-ի կազմակերպութեամբ եւ Գանատայի, ԱՄՆ-ի եւ Աւստրալիոյ պատանեկան միութիւններու մասնակցութեամբ:







**Ժդ.-Լրատու**

Պատրաստուեցաւ Պ.Մ.Ը.Վ.Մ.-ներու յատուկ տեղեկատուական լրատու (whatsapp-ի խումբ):

**Ժե.- Իրագործելի ծրագիր**

Ժամանակակից դաստիարակչական միջոցներուն համահունչ ընթացալու միտումով՝ յանձնախումբը իր նիստերուն յաճախ սերտեց պատանեկանի դաստիարակչական նիւթերու մատուցման նորարար ծրագիրներ իրականացնելու հնարաւորութիւնները (օրինակ animation (կենդանի-շնչողական) ձեւաչափով ներկայացումներ): Թէեւ որոշ պատկերացումներ ձեւակերպուած են, սակայն գործի մասնագէտին անհրաժեշտ կարիքը կը զգացուի: Այս ծրագիրը կը մնայ գործադրելի:

Այս շրջագծէն ներս յանձնախումբը սերտած է նաեւ 3.3.7. պատանեկան միութիւններու յատուկ APP պատրաստելու ծրագիրը, ուր կարելի պիտի ըլլար տեղադրել գիտելիքներ եւ տեղեկութիւններ:



**ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՓՈԽԱՆՑԱԾ ԱԲԱՆԴԸ**

Յարափոփոխ պայմաններով եւ սրընթաց զարգացումներով յատկա-  
նշուած այս ժամանակաշրջանին՝ պատանեկան միութիւնները մեծապէս  
կարիքն ունին հաղորդակից դառնալու տարիներու ընթացքին վաստակուած  
փորձառութիւններուն: Փորձառու ընկերներու ամենադոյզն թելադրանքն  
անգամ կրնայ ներդում ունենալ աշխատանքներու յաջողութիւնը ապահո-  
վելու գործին մէջ:

Այս մտադրութեամբ դիմեցինք երեք ընկերներու եւ խնդրեցինք, որ  
իրենց յօդուածներով հարստացնեն այս հրատարակութիւնը: Ընկերներէն  
ոմանք անմիջապէս ընդառաջեցին եւ ճշդուած ժամկետին յղեցին  
պահանջուածը:

Արդ, գրիչը անսպառ բոլոր ընկերներուն, որոնք նախանձախնդիր  
ըլլալով մեր կազմակերպութեան համար այնքան կարեւոր՝ պատանեկան  
կառոյցին օգտակար դառնալու ջանքերու ի գործ դրման՝ իրենց միութենա-  
կան կեանքի պատումները, տպաւորապաշտ էջերը, անցեալի փորձառ-  
ութիւնը, պատմական տեղեկութիւնները եւ թանկարժէք այլ յիշատակները  
թուղթին յանձնելով յղեցին մեզի:

- Ձեր վարձքը կատար՝
- Ընկ.Խաժակ Գուլաճեան
- Ընկ.Յրաչ Վարժապետեան
- Ընկհ.Մարի Մերտիանեան
- Ընկ.Գրիգոր Տունկեան
- Ընկ.Ժան Յալլաճեան
- Ընկհ.Մակալի Թովմասեան
- Ընկհ.Սեւան Շահպազեան



## Պատանեկան՝ Իմ Մեր, Իմ Կեանք

*Ընկ. Խոսժակ Գուլամեան  
Գանադա*



*«Դաշնակցական անուշ պատանիներ, Դաշնակցության դպրոցին մեջ թրծուեցէ՛ք, թրծեցէ՛ք ձեր հոգին՝ ծանօթանալով մեր պանթեոնի հարստությունը կազմող անուններու կեանքին, անսահման նուիրումին: Մոռցէ՛ք վայրկեան մը առօրեան, նայեցէ՛ք ապագային, որովհետեւ ապագան դուք էք: Իսկ Դաշնակցության ապագային ուժը կախում ունի ձեր հզորութենէն»:*

### **Բարգէն Փափագեան**

Վեց տարեկան էի: Ռմբակոծումներու պատճառով տունը ձանձրացած. մայրս ձեռքս տուաւ քասեթ մը եւ յեղափոխական երգարան մը ու ըսաւ. «Մտիկ ըրէ՛ եւ երգէ՛»: Քասեթը Լիբանանի պատանեկան միություններու երգչախումբինն էր: Մօրս հարցուցի.- «Մա՛մ, ի՞նչ է պատանեկան միություն», ըսաւ. «դպրոց մըն է, շուտով դուն ալ պիտի երթաս հոն»:

Այսօր՝ եօթը տարեկան դասերս նոյնը կ'ըսեմ. «Աշնան, պատանեկանի պիտի անդամակցիս»:

Ինչո՞ւ դպրոց մըն է պատանեկան միությունը եւ ինչո՞ւ այս դպրոցը յաճախողը տարբեր փայլք ու հմայք ունի:

**Որովհետեւ**, Կարօ Սասունիի խօսքերով՝ «Վաղուան հայությունն է, որ կը մեծնայ պատանեկան համախմբումին մէջ: Զոն է, որ կը կազմաւորուի նոր հայությունը, այդ խանդավառ սրտերուն մէջն է, որ կը մակարդուի հայ ժողովուրդին նուիրուելու ազնուագոյն գաղափարը: Ու այդ բոցավառ սրտերուն մէջ, այդ հրդեհուած հոգիներուն մէջ կը ծնի վաղուան մտաւորականը, ղեկավարը, գրագետը, քաղաքական գործիչը, ու ամենէն առաւել հերոսը, որ իր կեանքը պիտի դնէ հայկական ազատամարտի ճանապարհին վրայ»:

**Որովհետեւ** մեր ֆետայական սխրագործությունները հոն կը ջամբուին ու կը վերածուին ոչ միայն դաշնակցական այլ նաեւ մարդկային արժեքներու.

- Ընկերասիրություն
- Պահանջատիրություն
- Անվիատ պայքար
- Գաղտնապահություն
- Հրահանգի ենթարկում եւ արժեւորում
- Հնազանդություն
- Չոհաբերություն
- Հնարամտություն
- Պատուախնդրություն
- Պատասխանատվություն



Ղեկավարություն  
Չարքաշություն  
Յարգանք:

**Որովհետև** յստակ գաղափարախօսություն ունեցող միջազգային կառույցի մը անդամները ըլլալով՝ Յ.Յ.Դ. պատանեկան միութիւններուն կը փոխանցուի միշտ կառչած մնալ ժողովրդավարական եւ ընկերվարական արժէքներուն, հիմնուելով ազատութեան, արդարութեան եւ համերաշխութեան սկզբունքներուն վրայ:

**Որովհետև** պատանեկան միութիւններու շարքերուն միացած բոլոր պատանիները ունին դաշնակցական պատանի ըլլալու առաւելութիւնը:

Ես այսպէս թրծուեցայ այս դպրոցին մէջ: Չաւակներս ալ տոյնապէս պիտի թրծուին այդ հնոցին մէջ, որովհետև պատանեկան միութիւններու դաստիարակութիւնը իր այժմեականութիւնը պահած է: Մուշեղ Իշխանի բառերով՝ «Պատանեկան միութիւնները չեն աւարտած իրենց դերն ու առաքելութիւնը: Որքան ալ պայմանները փոխուած ըլլան, որքան ալ տոր սերունդը դաստիարակութեան աւելի լայն դաշտեր ունենայ, այսօր պատանեկան միութեան ակումբները պետք է մնան ազգային ապրումի ներշնչարաններ եւ մաքուր ու գաղափարական նկարագիրներու կերտիչները»:

Վկայ՝ այս հրատարակութիւնը:

**Ձեր մշտական պատանի-երեց ընկերը  
Ընկ.Խաժակ Գուլաճեան**



**Ընկ. Խաժակ Գուլաճեան**

*Ծնած է Պէյրութ, Լիբանան, դաշնակցական ընտանիքի մէջ:*

*Մանկութիւնն ու պատանեկութիւնը անցուցած է Էշրեֆիէի հայահոծ թաղամասի «Ազատամարտ» ակումբէն ներս: Եղած է պատանի, ԼԵՄական, երկար տարիներ պատանեկան վարիչ-դաստիարակ եւ ԼԵՄի Կեդրոնական Վարչութեան անդամ: Հաստատուելով Թորոնթօ կը շարունակէ ծառայել Գանատայի Պատանեկան Միութիւններուն: Կը գործէ Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակի Պատանեկան հարցերու յանձնախումբին մէջ: Հաղորդավար է Թորոնթօյի «Սողոմոն Թեհլիրեան» Կոմիտեութեան «Նոր Հայ Հորիզոն» հեռուստաժամին եւ պատասխանատուն՝ Թորոնթօյի Հայ Կեդրոնի հաղորդակցութիւններուն:*

*Մասնագիտութեամբ մանկավարժ է եւ հետազօտող-դասախօս՝ վարակիչ հիւանդութիւններու եւ Կազմաբնախօսութեան:*

## Անփոխարինելի դպրոցը

*Ընկ. Զրաջ Վարժապետեան  
Ֆրանսա*



Յ.Յ.Դ. Պատանեկան Միութիւններ: Իմ պարագայիս՝ ԼՊՄ: Եւ ահա այստեղէն, անզուգական այս դպրոցէն, այո՛, անփոխարինելի այս դպրոցէն սկիզբ առաւ ընդհանրապէս իմ սերունդիս եւ յատկապէս իմ ազգային-գաղափարական դաստիարակութիւնս եւ ապա կազմաւորման ամբողջ հողովոյթս՝ Ճեմարան-Յայագիտական, ԼԵՄ, «Ազդակ», կուսակցական շարքեր ու յարակից գրասենեակներ...

Հպարտ եմ ու երախտապարտ՝ Յ.Յ.Դ. պատանեկան միութեան անդամ ըլլալուն: Շնորհակալ եմ սքանչելի վարիչներուն եւ պատասխանատուներուն: ԴՅՈՆ, «Ազատամարտ» ակումբին մէջ ստացայ ու ժառանգեցի հարստութիւն մը, զոր կը կրեմ մինչ օրս, եւ որ ոչ միայն յաւերժական է, այլեւ՝ անփոխարինելի:

Բարի ու յաղթական շարունակութիւն՝ խրոխտ երթիդ, սիրելի ու երախտաշատ պատանեկան միութիւն: Երախտագիտութեան զգացումս անգամ մը եւս կը բարձրաձայնեմ՝ կազմաւորմանս առաջին սերմերը ստացած ըլլալուս համար եւ նոյնպէս ու միեւնոյն զգացումս կ'արտայայտեմ նաեւ Յ.Յ.Դ. երիտասարդական միութեան, իմ պարագայիս՝ ԼԵՄ-ին, որ հարագատ ու բնական շարունակութիւնն է պատանեկան միութեան դպրոցին, աւելի հասուն, աւելի կուռ դասարաններով:

ԼԵՄ-ը ամէն բանէ առաջ գաղափարական հնոց է: Այնտեղ խորապէս ազգային հենքով ու շունչով դաստիարակուած, կազմաւորուած ու թրծուած են յանձնառու սերունդներ, որոնք երդուած են անշահախնդիր ծառայել ազգին, հայրենիքին ու Հայ Դատին եւ պատուով կատարած են իրենց երդումը:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի ամբողջ ընթացքին, ԼԵՄ-ական տղաքը տիւ ու գիշեր, բառին ամբողջական առումով, պատիւով ծառայեցին մեր ժողովուրդին: Մեր թաղերուն մէջ, ակումբներուն ու կեդրոններուն առջեւ զինուած պահակութիւն չըրին միայն, ռումբերուն տակ հայ ընտանիքներուն կարիքներուն չհասան միայն, հաց, ջուր ու դեղորայք չբաժնեցին միայն, վիրաւորները հիւանդանոց չհասցուցին միայն, այլեւ մասնակցեցան զինեալ տարբեր բախումներու, միջադէպերու, նոյնիսկ ճակատամարտերու՝ յանուն ԱՄԲՈՂՁ համայնքի արժանապատուութեան, ֆիզիքական ու բարոյական պաշտպանութեան՝ արեւմտեան Պէյրութէն մինչեւ Էշրեֆիէ, Պուրճ Յամուտէն մինչեւ Անթիլիաս, Թրիփոլիէն մինչեւ Այնճար, առանց որեւէ հատուածական, յարանուանական կամ գաղափարական խտրութեան:

Ապա՝ Հայ Դատի գինեալ պայքարի տասնամեակ: ԼԵՄ-ը՝ պատմեչի առաջին գիծ, Արդարության Մարտիկներ, Հայ Յեղափոխական բանակ, Վիեննայի արձակուած առաջին փամփուշտէն մինչէի Լիզպոն: Յետոյ՝ արցախեան գոյամարտ, որմէ անմասն չմնաց ԼԵՄ-ը, Շուշիի ազատագրումէն մինչէի քառօրեան ու Նաեի քառասունչորսօրեան...

Բայց միայն դժնդակ պայմաններու, օրհասական օրերու, զէնքի ու կռիւի մարտական հոյակապ կարգապահութեամբ միութիւնը չէղաւ ԼԵՄ-ը:

Ան Նաեի յարաբերաբար խաղաղ օրերուն գրաւեց հրապարակը, Դաշնակցութեան Հայ Դատի կառոյցներուն կողմէ աշխարհով մէկ ծաւալած հակաթուրք պայքարի քաղաքական-քարոզչական ծով աշխատանքներուն անխոնջ մասնակիցներէն մէկը հանդիսանալով: Ու տակաւին Դպրոց եղաւ ԼԵՄ-ը, գաղափարական հնոց դարձաւ, թերթ հիմնեց, հրատարակչական աշխատանք ունեցաւ, մարդուժ պատրաստեց, եւ մասամբ Նորին: Ու այսօր տարբեր չէ երեկէն: Երթը կը շարունակուի միեւնոյն ոգիով, միեւնոյն կամքով, Նորերը կու գան ու պիտի շարունակեն գալ, Նոյնքան փայլուն, Նոյնքան պայծառ դէմքերով, ծառայութեան միեւնոյն պատրաստակա - մութեամբ, գլխագիր Գործին հանդէպ միեւնոյն հաւատքով ու համոզումով:

Եւ հարկաւ հեշտ ու հեզասահ չէղաւ այս երթը: Եղաւ բեղուն, սակայն պահանջեց մեր լաւագոյններուն արիւնը, Պետիկ Ինճեանէն մինչէի Լիզպոնի Հինգը, Պարոյր Տուտազլեանէն մինչէի Միեր Ջուլիհաճեան, Եղիկ Գայայեանէն մինչէի Վիգէն Չաքարեան, ինչպէ՛ ս վերջակէտ դնել...

Եւ այստեղ անխուսափելի կամուրջը՝ պատանեկանէն երիտասարդական: Նշուած անխտիր բոլոր Նուիրեալները իրենց դաստիարակութեան առաջին սրսկումը ստացած են պատանեկան միութեան մէջ: Ահաւասիկ 2024-ի ապացոյցը՝ պատանեկան միութիւններու դպրոցին փայլուն արդիւնքին, Էական դերակատարութեան, անժամանցելի անհրաժեշտութեան:

Այո՛, հպարտ ու երախտապարտ եմ այս երկու հնոցներուն՝ պատանեկան եւ երիտասարդական: Անոնք երկուքը անքակտելիօրէն շաղկապուած են իրարու, գիրար ամբողջացնող մէկութիւն են անոնք, եւ առանց մէկուն թերի է միւսը:

Պատի՛ւ անոնց եւ անխափան երթ, մինչէի մեր վախճանական Նպատակին՝ Ամբողջական Հայաստանի կերտման յաղթական պսակումը, որ Նոյնիքն երդումն ու առաքելութիւնն է Հ.Յ.Դ. պատանեկան եւ երիտասարդական միութիւններուն:



**Ընկ.Հրաչ Վարժապետեան**

Ազգային հասարակական-քաղաքական գործիչ:

Հ.Յ.Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէի Ներկայացուցիչ:

Երկար տարիներ մաս կազմած է «Ազդակ» օրաթերթի խմբագրական կազմին իբրեւ խմբագիր ապա՝ պատասխանատու խմբագիր:

Շրջանաւարտ է Պէյրութի Համազգայինի Հայագիտական Հիմնարկէն եւ Երեւանի Պետական Համալսարանի քաղաքական գիտութիւններու բաժանմունքէն:

Եղած է Հ.Յ.Դ. պատանեկան եւ երիտասարդական Միութեանց աշխոյժ անդամ:

## ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԻԹԵՐՈՒ ԱՌՆՉՈՒԱԾ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

*Ընկ.Մարի Մերտիանեան  
Յայաստան*



Յ.Յ.Դ. պատանեկան միութիւնները այն վայրն են, ուր կը սկսի գիտակից նուիրեալներու պատրաստութիւնը: Ասոր համար պատանին պէտք է գինուի ազգային եւ մարդակային բարձր արժէքներով ու խոր գիտելիքներով:

Իմ կարծիքով այստեղ «խոր գիտելիք»ը չափազանց կարելոր է: Ճիշդ է, նորեկ պատանին (12 տարեկան) տակաւին պատրաստ չէ բազմաթիւ իրողութիւնները ճիշդ ըմբռնելու, բայց նաեւ պէտք չէ չափազանցուած «ազգային հպարտութեամբ» տոգորել զայն: Մեր քով ընդունուած է «Առաջին այսինչը հայ է», «այսինչ բանի գիտարարը հայ է», «այսինչ երկրի վարչապետը հայկական ծագում ունի» ըսելով հպարտանալ: Յամոզուած եմ, որ այս մօտեցումը պահանջուած գիտելիքն ու հպարտութիւնը չի ջամբեր:

Ընդհակառակն, աւելի գիտակից տարիքին, երեկուան պատանին կրնայ զգալ եւ անդրադառնալ, որ այդ գիտարարը կամ պետական այրը ոչ հայութեամբ սնած է, ոչ ալ հայութեան ծառայած...

Պատանեկանի առաջին տարիներուն պէտք է զարկ տալ ազգի պատմութեան ամենակարելոր հանգրուաններուն: Օրինակ, վեր առնել Յայկի կերպարը, զայն համեմատելով նոյն պատմական շրջանի այլ կերպարներու եւ ինչո՞ւ չէ նաեւ այսօրուան կերպարներուն հետ:

Միւս կէտը աւելի կարելոր է. պատմական շրջաններու եւ դէպքերու ներկայացման ատեն չբաւարարուիլ միայն հայկականով, դաշնակցականով: Ի հարկէ հայկականը, մանաւանդ դաշնակցականը, պէտք է ընդգծել, սակայն զանոնք պէտք է դնել ժամանակի եւ տարածքի ճիշդ եւ համապարակ շրջանակին մէջ: Ու ասիկա անպայման պէտք է սկսիլ պատանեկանի բարձր կարգերէն եւ շարունակել երիտասարդականի շաքերուն մէջ:

Երեք կարելոր օրինակներ նշեմ.

1- 1908-ի Օսմանեան սահմանադրութեան նախորդող եւ յաջորդող իրադարձութիւնները: Մեր պատանին եւ երիտասարդը կը կարծէ, որ միայն հայերուն կը վերաբերին ատոնք, մինչ շատ-շատ աւելի տարողունակ եւ խոր իրադարձութիւններ են:

2- Տեղասպանութեան նախորդող տարիները... Յարկ է քիչ մը աւելի ուշադրութիւն դարձնել այդ տարիներու Պալքասեան եւ Արաբական երկիրներու մէջ տիրող իրավիճակին: Սուրիական դպրոցներուն մէջ կը խօսուէր բռնի թրջացման քաղաքականութեան մասին: Այդ թեման ամբողջութեամբ կարելի է առանձին նիւթով ներկայացնել: Այսօր մեզի ուղղուած գլխաւոր





ամբաստանություններու մէկ մասը կը վերաբերի այս երկու իրադարձութիւններուն, այն թիւր կարծիքը ստեղծելով, որ իբր թէ միայն Դաշնակցութիւնը «հաշտութիւն կը խաղար» թուրքերուն հետ: Իրականութիւնը բոլորովին այլ է: Ամբողջ Օսմանեան կայսրութեան տարածքին ընթացք առած զարգացումներուն մասնակից էր Դաշնակցութիւնը եւ ուրիշ բան չէր կրնար ըլլալ:

3- ժամանակն է շեշտը դնել այն իրականութեան վրայ, որ Յեղասպանութեան զոհերը միայն հայեր չէին: Մենք կը սիրենք մերը bold գիրերով տալ, իսկ շուրջիները regular ձգել: Այս ոճով չենք կրնար ցեղասպանին ամբողջական պատկերը ներկայացնել:

Ժամանակն է, որ նախ վարիչները նման գիտելիքներով օժտուին: Պատմութեան «մանրուք»ներն իմանալը ամուր նկարագրի եւ արդար հպարտութեան անբաժանելի մասն է:

Սխալ չհասկցուելու համար ընդգծեմ, որ ֆետայական շարժումը, ֆետայիներու արիութեան ու զոհաբերութեան անսահման օրինակները կը մնան ոգելորդ եւ դաստիարակող: Սակայն միայն ոգեղէնով ամուր եւ հաստատուն կերպար չի կերտուիր: Գիտելիքն ու պատմութիւնն են զօրաւոր եւ գաղափարական անհատականութեան երաշխիքները:



**Ընկի.Մարի Մերտիանեան**

*Ծնած է Զալէպ: Ա.Բ.Ե.Ճեմարանէն շրջանաւարտ դառնալէ ետք յաճախած է Զալէպի պետական համալսարանի իրաւաբանական բաժինը:*

*Յետեւած է Մխիթարեաններու հայագիտական հնգամեայ դասընթացքին: Անցած է Բ.Յ.Դ. պատանեկանի, երիտասարդականի եւ ուսանողականի շարքերէն: Կազմակերպական եւ ազգային շարք մը մարմիններու անդամ եղած է: Զալէպի «Գանձասար» շաբաթաթերթի անձնակազմի անդամ ու խմբագիրը եւ «Դրօշակ»ի յօդուածագիր եղած է: Կրթութեամբ իրաւաբան, աշխատանքի փորձով՝ ուսուցիչ, լրագրող-խմբագիր, թարգմանիչ, իրաւաբանի օգնական (վերջին երկուքը՝ Նիւ Եորք): 2003-ին Զալէպէն փոխադրուած է Նիւ Եորք եւ 2017-ին հաստատուած՝ Զայաստան:*

*ՅՈՒՇԵՐ, ՈՐՈՆՔ ՊԱՏՄՈՒԹԵՆԵՆ ԱԻՎԱՆԴՈՒԱԾ ԴԱՍԵՐՈՒ ԱՐԺԵՆ ՈՒՆԻՆ*

## Նիւթեր Սուրիոյ Ղ.Յ.Դ. պատանեկան միութեան պապմութենէն

*Ընկ. Գրիգոր Տունկեան  
Գանատա*



Յետ Յեղասպանութեան իր հայ ազգաբնակչութեան բարձր համեմատութեամբ, բազմաբնոյթ միութիւններով եւ ազգային կառոյցներով հայատրոփ դարձած եւ շրջան մը, արդարօրէն, սփիւռքի քաղաքամայրը նկատուած Հայկաի մէջ պատանեկան տարիքի միութեան մը առաջին յիշատակութիւնը մեզի հասած բանաւոր պատումներու հիմամբ կու գայ 1919 թուականէն: Ան կոչուած է «Հայ» պատանեկան միութիւն, որուն գրադարանին հետքերը ուսումնասերներու կողմէ նկատուած են Քրիստափոր գրադարանի մէջ:

Համաձայն բանաւոր փոխանցուած պատումներուն «Հայ» պատանեկան միութիւնը կազմութենէն քանի մը տարիներ ետք՝ 1925-ին կապուած է Ղ.Յ.Դ.-ին, վայելած անոր հովանաւորութիւնը եւ կոչուած՝ Ղ.Յ.Դ. Քրիստափոր Պատանեկան Միութիւն: Այս տեղեկութիւնը կը համընկնի Ղ.Յ.Դ.-10-րդ ընհանուր ժողովի որոշումներէն մեզի հասած հետեւեալ արձանագրութեան, «Ընհանուր ժողովը 1925 թուականը կը հռչակէ ներքին աշխատանքի եւ վերակազմութեան տարի, ան կ'որոշէ առանձին ճիգ թափել նորակազմ գաղութներու ցիրուցան աշխատաւորութեան եւ չափահաս որբերու սերունդին վրայ», մասնաւոր ուշադրութեան առարկայ դարձնելով Յունաստանը, Սուրիան եւ Ֆրանսան (Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհանուր ժողով, Հրաչ Տասնապետեան, էջ168):

Սուրիոյ տարածքին կազմուած դաշնակցական իւրաքանչիւր կոմիտե, համաձայն Ղ.Յ.Դ. կանոնագրով ճշդուած իր պարտաւորութիւններուն, տարբեր թուականներու յառաջացուցած է իր շրջանի պատանեկան միութիւնը:

Պատանեկան միութեան կենսունակութիւնն ու իրավիճակը, ինչպէս բոլոր միութիւններուն, սերտօրէն առնչուած է սեփական ժողովուրդի կացութեան հետ, որ մեծ դժուարութիւններու դէմ յանդիման կը գտնուէր Առաջին Համաշխարհային արհաւիրքներէն հազիւ դուրս եկած թէեւ հիւրընկալ, բայց վերջապէս նոր եւ օտար երկրի մը մէջ, գոյատեւման եւ վերականգնումի կենսական կարիքները ապահովելու մարտահրաւերը դիմագրաւելով, թէ՛ ազգային եւ թէ՛ քաղաքացիական խնդիրներու նկատմամբ պարտաւորութիւններով ծանրաբեռնուած, գաղթականական հիւղաւանները արժանավայել կացարաններու վերածելու, դպրոց, եկեղեցի, ակումբ եւ հաւաքական կեանքի այլ կառոյցներ հաստատելու: Ազգային ինքնութիւն եւ իտեալ պահելու անթույլ աշխատանք եւ զգօնութիւն պահանջող հալեպեան այս մթնոլորտին մէջ հասակ առած բոլոր միութիւններուն հետ՝ Յեղասպանութենէն վերապրում ուսում արձանագրած ժող-



վուրդի հերոսական գոյերթի արարման համեստ մասնակիցն եղած է նաև պատանեկան միութիւնը, որուն անդամական շարքերը հակառակ դժուարութիւններուն կամաց-կամաց խտացած են, առաւել շեշտաւորուիլ սկսած են ազգային ինքնութեան պահպանման ճիգերը:

Կոմիտէներու հոգածութեան ներքեւ գործող միութիւններուն նպատակը եղած է հայեցի եւ կուսակցական դաստիարակութիւն ջամբել պատանիներուն եւ չափահասներէն պատրաստել շարքային դաշնակցականը: Պատանեկան միութեան դաստիարակչական մթնոլորտը շեշտաւորուած է խստապահանջ կարգապահութեամբ: «Չինուորական» գործելաժողով ունեցող այդ մթնոլորտը թերեւս կարելի ըլլայ ներկայացնել պատանեկանի անուան աղերսուած հետեւեալ վարքային սահմանումներու յիշատակութեամբ՝ երկաթեայ կարգապահութիւն, հրահանգ, գաղտնապահութիւն, թէեւ գործունեութեան մէջ ոչինչ եղած է գաղտնի: Աւելի յառաջացած ժամանակներուն արդէն սկսած է գործել ծնողք-միութիւն հերթական յարաբերութեան դրոյթներ, ուր յստակօրէն ներկայացուած է միութեան գործունեութեան առանցքը: Շատ բնական է, որ ծնողներու օրհնութեամբ եւ յարատեւ զօրակցութեամբ է, որ արդիւնաւորուած է միութեան աշխատանքը:

Գործելու իր ինքնուրոյն եղանակով եւ գաղափարական մթնոլորտով պատանեկան միութիւնը դրոշմած է իր անդամները: Հայրենագուրկ, արմատախիլ, գաղթական ընտանիքներու շառաւիղներէն ծնած են նուիրեալներ, գաղափարական մարտիկներ, որոնք հաւատքով ու հաւատարմութեամբ խտացուցած են Յ. Յ. Դ. շարքերը, կամ մուտք գործած ազգանուէր ծառայութեան անդաստանները, երբեմն ալ արժանացած նահատակութեան լուսեպսակին:

Պատանեկան միութիւնը ունեցած է իր յատուկ կանոնագիրը, որ կուսակցական կանոնագրի պարզեցուած մանրապատկերը եղած է:

Անկախաբար Քրիստափոր Պատանեկան Միութենէն, 1934-ին Հալէպի Նոր գիւղ հայաւանին մէջ հիմնուած է Վարանդեան Պատանեկան Միութիւնը, որ ունեցած է նաև հանրային գրադարան:

Սակայն 1970-ականներու սկզբնաւորութեան երկու միութիւնները միացուած են մօտաւորապէս 150 անդամներով (13-18տարեկան), ապա համատեղուած են նաև գրադարանները՝ Քրիստափոր կեդրոնով:

Հայաստան ներգաղթի հոգեփոխիչ ազդեցութեամբ եւ անոր յաջորդած 1960-ականներուն սկզբնաւորութեան՝ Սուրիոյ քաղաքական ներքին պայմաններու որպէս հետեւանք՝ սահմանափակուած ազատութիւններու պատճառով, շրջան մը կազմալուծուած է միութիւնը, փակուած հանրային գրադարանը եւ դադարած թերթիկներու եւ գրքոյկներու հրատարակութիւնը:

Պատանեկան միութիւնը վերսկսած է գործել 1967-ին:

Դպրոցներէն ներս պետական կրթական ծրագիրներու գործադրութեան պարտադրման հետեւանքով՝ հայ դպրոցի նկատմամբ բանեցուած սե-



ղմումները մղած են, որ 1967-ին, յետվերակազմութեան, պատանեկան միութիւնը ինքնակամօրէն յանձնառութիւն վերցնէ իր դաստիարակչական ծրագիրով ամբողջացնելու հայ դպրոցի ուսումնական ծրագիրին մէջ ազգային ինքնութեան վերաբերող կրճատուած սիւթերու լրացումը կատարելու գործը, իր անդամներուն աւանդելով հայոց պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային ազատագրական շարժման պատմութիւն եւ յեղափոխական երգերու ուսուցում: Այդ ցոյց կու տան այդ ժամանակի գործադրուած դաստիարակչական ծրագիրէն մեզի հասած պատահիկները:

### **Ներակնարկ Զրիստափոր Պատանեկան Միութեան**

1970-ական թուականներու կեսերուն Զալէպի մէջ պատանեկան միութիւնը կը գտնենք վերակազմակերպուած եւ բարուք վիճակի մէջ: Արձանագրուած է անդամական թուային աճ եւ որդեգրուած իւրաքանչիւր ուսումնական տարեշրջանի տարեմուտին անդամահաւաքի դրոյթ, նախակրթարաններու 6-րդ կարգի տարիքայիններու անդամագրութեան հրաւերներով եւ արհեստներու հետեւող անոնց տարեկիցներու երբեմն արհեստանոցները շրջելով անդամագրութեան խրախուսելով, նոյնինքն միութեան անդամ պատանիներուն ճամբով:

Նորակազմ խումբերը սկզբնական շրջանին եղած են ստուարաթիւ եւ ղեկավարուած են խումբի անդամներէն աւելի երեք տարիքով նշանակովի պատասխանատուով մը (խմբապետով), որուն պարտականութիւնը եղած է միութեանական առողջ կեանքի անհրաժեշտ հիմնադրոյթներուն ծանօթացնել նորագիրները եւ ժողովականութեան կենսական գիտելիքներ փոխանցել անոնց: Սկզբնական այս կարճ հանգրուանէն ետք խումբերը վերածուած են 7-15 անդամներէ բաղկացած խումբերու եւ խումբը ինք իր անդամներէն ընտրած է իր դիւանը՝ խմբապետ, որ կը վարէր ժողովները, քարտուղար, որ կը գրէր ժողովներու ատենագրութիւնները եւ կը պահէր ներկայութեան ցանկը, նաեւ գանձապահ, որուն պարտականութիւնն էր անդամներուն միութեան նուիրած ամսավճարները հաւաքելով փոխանցել վարչութեան: Ինչպէս նկատելի է միութեանական միութեան հանդէպ ունեցած բարոյական պարտաւորութեան կողքին ունէր, թէկուզ աննշան, սիւթական պարտաւորութիւն մը: Խումբին մաս կը կազմէր վարչական ընկեր մը, որ կը կոչուէր խումբի վարչական ներկայացուցիչը, ան մաս չէր կազմէր դիւանին եւ չունէր մասնաւոր լիազօրութիւն, այլ՝ խմբապետին կողքին խումբ-վարչութիւն յարաբերութեան զօրացման կը նպաստէր: Խումբերը կը կրէին յեղափոխական դէմքի մը (սիկլո Դուման) կամ դէպքի մը (Խանասոր) անունը:

Անկախաբար շաբաթական հերթականութեամբ գումարուող ժողովներէն՝ խումբերը ունեցած են նաեւ արտաժողովական ծրագիրներ, ինչպիսիքն են՝ արշաւներ, մրցումներ, մարզական խաղեր, տարեկան բանակում, եւ այլն: Միութեան բոլոր անդամներու մասնակցութեամբ գումարուող միութեան տարեկան ընդհանուր ժողովը կը քննէր շրջանաւարտ վարչութեան աշխատանքը եւ համապատասխան արժեւորում կը կատարէր, ինչպէս նաեւ նոր տարեշրջանին իրագործելի առաջարկներ եւ պարտաւորութիւններ ճշդելէ ետք մեծամասնութեան ձայնով կ'ընտրէր միութեան միամետայ վարչութիւնը՝ բաղկացած 5-7 անդամներէ:

Վարչությունը վարիչի և երբեմն փոխ վարիչներու ղեկավարությամբ կը վարեր միութեան ընթացիկ գործերը, շաբաթական հերթականությամբ գումարուած վարչութեան նիստերով հետամուտ կ'ըլլար ընդհանուր ժողովի որոշումներու և առաջարկներու գործադրութեան, խմբական ժողովներու ըստ օրինի գումարումին, ժողովներուն համար ճշուած օրակարգերու լուծումներուն, դաստիարակչական ծրագրի գործադրութեան, կը պատասխանէր խումբերու ատենագրութիւններով ներկայացուած անդամներու հարցումներուն, կը քննէր ներկայացուած առաջարկներու իրականացման շահեկանութիւնը և վարիչի տեսակետի ստացումով իր անդամներու մեծամասնութեան որոշումով կը վաւերացներ կամ կը մերժէր զանոնք, կը հետապնդէր անդամներու հետեւողականութիւնը, պարտաճանաչութիւնն ու վարքը, ի հարկին, յետ զգուշացման, կանոնագրով նշուած տնօրինումին կ'ենթարկէր թերացած անդամը: Կը քննէր և կը վճռէր միութեան անդամակցութեան համար ներկայացուած դիմումները: Վարչութեան բոլոր տնօրինումները շաբաթական գրաւոր զեկուցումով կը փոխանցուէին խումբերուն:

Տարիներու ընթացքին երկրի զանազան քաղաքներուն մէջ գործող միութիւնները նշանակալից առիթներով ներդաշնակուած, երբեմն ալ միացեալ գործունէութիւններ իրականացուցած են Զալէպ կեդրոնով: 1977-ի Յուլիսին, Զեսապ, Էքիզուլուի Կասիոս բանակավայրին մէջ կայացած Զալէպի Զրիստափոր Պատանեկան Միութեան տարեկան բանակումին իրենց մասնակցութիւնը բերած են Գամիշիի՝ Չաւարեան, Լաթաքիոյ՝ Աւետիս Ինճեճիկեան Պատանեկան Միութիւնները: Շուրջ 200 պատանիներու մասնակցութեամբ այս բանակումը ունեցած է լիազօր վարիչ մը և օգնական վարիչ կազմ՝ բաղկացած չորս ընկերներէ, որոնց միացած են մասնակցող միութիւններու կողմէ նշանակեալ մեկական պատասխանատու ընկերներ: Նշենք, որ այս եղած է երկրի մակարդակով համատեղ կայացած բանակումներուն առաջինը:

Պատանեկան միութիւնը իր որոշիչ դերակատարութիւնը ունեցած է իրերայաջորդ նորահաս սերունդներու հայ ինքնութեան պահպանման գործին սատարելու մէջ, իր սիրողական, համեստ կարողութիւններով, բայց վստահ մեծ հաւատքով և աներեր կամքով: Անոր շարքերէն անցած սերունդները յաճախ ինքնակերտման դժուարին ուղին յաղթահարելով ընթացած են անվիատ, հաւատարմութեամբ և պայծառատեսութեամբ, սեփական վարքով կենսագործելով Զ. Յ. Դ. պատանեկան միութեան առաքելութիւնը:

Սուրիոյ տարածքին գործող իւրաքանչիւր կոմիտէի շրջանին մէջ գործած է պատանեկան միութիւն մը:

Պատմութեան համար պէտք յիշել բացառիկ եղելոյթ մը, որ Սուրիոյ Զրիստափոր Ուսանողական Միութիւնը (Զ. Ո. Մ.) 1978-ին յառաջացուցած է Գ. Նժդեհ Պատանեկան Միութիւնը, որ գործած է շուրջ մէկ տարի:

Ապրիլ 1979-ին Զ. Յ. Դ. Սուրիոյ Երիտասարդական Միութեան (ՍԵՄ) ստեղծման հետ վերակազմակերպուած է պատանեկան միութիւնն ալ:

Գործադրության դրուած Է Յ. Յ. Դ. պատանեկան միութիւններու նոր կառոյցն ու կանոնագիրը: Համալրուած Է դաստիարակչական ծրագիրը, հիմնական նորարարութիւնը այն եղած Է, որ Յ. Յ. Դ. կոմիտէներու շրջագծին մէջ մնալով հանդերձ, որպէս աշխարհագրական տարածք, բոլոր պատանեկան միութիւնները ներառուած են մէկ կառոյցի մէջ եւ շարունակած են գործել որպէս մէկ միութեան գանազան մասնաճիւղեր:

ՍԵՄ-ի Կ. Վ. -ի կազմութենէն մէկ տարի վերջ յառաջացած Է Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինը (Ը. Վ. Մ), որ գլխաւորած Է պատանեկան միութիւնները: Բնական Է, որ իւրաքանչիւր մասնաճիւղ ունեցած Է իր վարիչն ու օգնական վարիչ ընկերները, անոնց կողքին մղում տալու համար խումբերու դաստիարակչական աշխատանքներուն՝ իւրաքանչիւր խումբի տրամադրուած Է դաստիարակ մը, որուն պարտականութիւնը ճշդուած Է կանոնագրով:

Յատուկէն կանոնակարգուած են պատանեկան եւ երիտասարդական միութիւններու եւ պատասխանատու մարմիններու յարաբերութիւնները, իրաւասութիւններն ու համարատուութեան կարգը: Արդիականացուած ու բարեգարդուած են կեդրոնները, արհեստագիտական միջոցներ տրամադրուած են գործին: Ձեւին կողքին որակական յառաջընթաց իրականացած Է, արդիականացուած են դաստիարակչական դրոյթները: Երիտասարդականի պարագային խրախուսուած Է ինքնադեկավարումը թէ՛ որոշում գոյացնող, թէ՛ գործադիր օղակներուն մէջ: Օրէնքով ապահովուած Է երիտասարդութեան ներկայութիւնը, երիտասարդականէն կազմակերպութիւն պատրաստուած մարդուժի անխափան հոսք ապահովելով, որպէս կենսաւիշ երիտասարդ ներուժ ներարկուած Է խորարմատ կադրինին զարգացման եւ յարատեւման ապահովումին համար, այսպիսով ո՛չ միայն կայուն սերընդափոխութեան երաշխաւորումով բոլոր օղակները ժամանակակից պահած ըլլալու հիմնական առաջադրանքը իրագործուած Է, այլ՝ ժամանակակից համակարգ եւ տրամաբանութիւն ապահովուած Է խորարմատ կադրինին:

Որպէս դաշնակցութեան դպրոցը զոյգ կառոյցներու դաստիարակչական ծրագիրներու նշածողը եղած Է Յ. Յ. Դ. գաղափարաբանութիւնն ու քաղաքական ուղեգիծը:

Յ. Յ. Դ. Սուրիոյ Պատանեկան Միութիւնը տարբեր երկիրներու մէջ գործող բոլոր պատանեկան միութիւններէն գատորոշողը հաւանաբար անոր անդամական շարքերուն երկսեռացման ընթացքն Է, որ սկսած Է Հալէպի Քրիստափոր Պատանեկան Միութենէն:

### **Հալէպի Քրիստափոր Պատանեկան Միութեան երկսեռացման խնդիրները.**

Միութիւնը երկսեռացնելու առաջարկը հնչած Է պատանիներուն կողմէ 1973-ի տարեկան ընդհանուր ժողովին եւ արժանանալով մեծամասնութեան համաձայնութեան փոխանցուած Է նորընտիր վարչութեան՝ առ ի գործադրութիւն, մանաւանդ, որ չէր հակասեր կանոնագրի տրամադրութիւն-



ներուն: Միութեան վարիչը թելադրած է գործադրութեան համար սպասել հովանաւորող կոմիտէի վաւերացումին:

- Երկսեռացման գաղափարը դիւրաւ չէ ընկալուած միութեան հովանաւոր կոմիտէին կողմէ, որ օրին որպէս տարբերակ ցուցմունք տուած է, որ միութեանական դառնալու փափաք ունեցող պարմանուհիները անդամագրուին Ս.Օ.Խ.-ին եւ Համազգայինին, որովհետեւ մեր շրջանի աւանդոյթին մէջ նման բան գոյութիւն չունի:

- Բնականաբար այս մօտեցումը չէ բաւարարած պատանիները եւ ճիշդ չհասկցուած ըլլալու տպաւորութիւն յառաջացուցած է բոլորին մօտ:

- Մանաւանդ կարճ ժամանակ անց նոյն քաղաքին մէջ գրեթէ տարիքային նոյն սահմանները ունեցող Համազգայինի ուսանողական երկսեռ միութեան յառաջացումը պատճառ հանդիսացած է պատանեկանի մէջ տրամադրութիւններու շիկացումին եւ պատանեկանի երկսեռացումը արգելակող մտայնութեան դեմ հակատրամադրութիւններու գոյաւորումին:

Շուրջ մէկ տարի սպասումէ ետք՝ 1974-ի վերջին ամիսներուն երկսեռացման առաջադրանքը խորքային լրջութեամբ ընկալուած չըլլալուն պատճառով, սպառած համբերութեամբ, երեց (աւարտական տարիքի) պատանիներու ինքնագործութեամբ ծնունդ առած է պատանեկան գաղտնի միութիւն մը: Տղաքը պատանեկանի անդամներ եղած են, իսկ պարմանուհիները՝ գլխաւորաբար համադասարանականներ: Գաղտնի միութիւնը ղեկավարած 7 պատանիները իրենք զիրենք կոչած են պատասխանատու կազմ, որոնք նախընտրած են կազմի ինքնութիւնը չբացայայտել: Միութիւնը անուանուած է Սօսէ Մայրիկ երկսեռ պատանեկան միութիւն: Ամիս անց կազմակերպուիլ սկսած են 10-րդ դասարանային կարգի պատանիներն ալ, կորիզը բաղկացած է հինգ ընկերներէ, որոնք իրենք զիրենք կոչած են «Վրէժ» ղեկավար մարմին:

Համատարեկիցներու առաջին հանդիպումը կայացած է 1974-ի Դեկտեմբերի սկիզբը, Զ.Պ.Մ. -ի սենեակը: Երեցներուն փորձէն օգտուելով այս ընկերներն ալ որոշած են գործել գաղտնի, առ այդ սկզբնական շրջանէն իսկ ծրագրած են բազմանդամ եւ սովորական պատանեկանին նմանող, սակայն գաղտնաբար գործելու յարմարեցուած համակարգ մը, որ կը բաղկանայ զանազան խումբերէ, ունեցած են յատուկէն մշակուած կանոնագիր:

1975-ի աւարտին Զրիստափոր Պատանեկան Միութեան անդամակցութեան տարիքը ամբողջացնելով՝ անդամակցութենէ դադրած են երեց պատանիները, մինչ՝ աւելի կրտսերները «Վրէժ» ղեկավար կազմով շարունակած են մինչեւ երկսեռացման իրականացումը:

Յեղափոխական գաղափարաբանութեամբ սնող պատանիներուն համար՝ իրենց արարքը առաւելաբար կարծրատիպերը շրջանցելու վճռակալութեան արտայայտութիւն եղած է, քան՝ անհնազանդութիւն:

Երկամեակ մը դանդաղելէ ետք, գործող պատասխանատու մարմինը ի տես պատանիներու հաստատկամութեան նաեւ ստեղծուած անել կացութիւն:



եան աւարտման անհրաժեշտութիւնը նկատի ունենալով՝ վերջապէս որոշ վերանայումներ կատարած է եւ ընթացք տուած երկսեռացման:

Արդարեւ, նկատի ունենալով հանրային հնչեղութիւնը, կազմակերպուած է հանրային հանդիսութիւն մը, որ անուանուած է **Պատանեկան Միութեան Օր**: 1977-ին, հաւանաբար Նոյեմբերին, տօնախմբական հանդիսութեամբ վերջակէտուած է Զրիստափոր Պատանեկան Միութեան երկսեռացման ձգտող գաղտնի միութեան վերածուած պատանեկան շարժումը:

Իրենց պաշտելի Դաշնակցութեան եւ եռագոյն դրօշներուն առաջնորդութեամբ բեմահարթակ բարձրացած են 62 պատանիներ-պարմանուիիներ եւ պատանեկան միութեան կանոնագրով նախատեսուած դաշնակցական պատանիի իրենց խոստումը տուած:

Նորագիրներուն կողմէ այդ օր հնչած է «Մենք անկեղծ զինուոր ենք» ռազմաշունչ երգը, սակայն երեք համարի փոխարէն չորս համարով: Զորորդ համարը յատուկ այդ օրուան համար յօրինուած է, որպէս յուշարար Զրիստափոր Պատանեկան Միութեան անդամներուն քառամեայ տուայտանքին եւ անդով կամքին:

Գաղափարի զինուորներ ենք մենք հիմա  
Ունինք մէկ նպատակ եւ կամք երկաթեայ,  
Յանուն մեր ազգութեան եւ արդար դատին,  
Ուխտեցինք ըլլալ գաղափարական  
զինուորներ արի ԶՐԻՍՏԱՓՈՐԱԿԱՆ,  
Կեցցե՛՛ Զ. Յ. Դ.-ան:

Բեմահարթակի վարագոյրի փակումով Զալեպի պատմութեան մէջ անօրինակ իրադարձութիւն մը աւարտած է:



### **Ընկ. Գրիգոր Տունկեան**

*Վաստակաշատ գործունէութիւն ծաւալած է Սուրիոյ ազգային թէ կուսակցական կազմակերպական, դաստիարակչական եւ քարոզչական բնագաւառներէն ներս: Մեծ ներդրում ունեցած է կուսակցական եւ ուղեկից միութիւններու կանոնագրերու մշակումներու գործին մէջ: Աշխատակցած է տարբեր թերթերու: Ողջունելի աշխատանք ունեցած է երիտասարդական եւ ուսանողական բազմաբնոյթ աշխատանքներու մէջ: Ծանօթ է իր բժախնայի գործունէութեամբ եւ կազմակերպական աշխատանքի հմտութեամբ: 1992-2019 եղած է Բերիոյ Զայոց Թեմի դիւանապետ:*





## Բռնաճաղրի գաղտնիքները

*Ընկի. Մակայի Թովմասեան  
Լիբանան*

Բռնաճաղրը հանդարտ փոթորիկ է, որ յաճախ կը թափառի մարդոց ընկերային յարաբերութիւններուն մէջ: Ո՛չ, այդ մէկը պարզուկ կեցուածք մը կամ արտայայտութիւն մը չէ, այլ պար մըն է ուժին եւ ատելութեան միջեւ, որուն ազդեցութեան կ'արժէ անդրադառնալ:

Բռնաճաղրը երկու տարբեր մակարդակի ուժերու միջեւ պարզ կամ սովորական հակամարտ մը չէ միայն, այլ ան կը նմամի նուագախումբի մը ելոյթի մեկնարկը յայտարարելու վայրկեանին՝ երբ ղեկավարը կը յանձնարարէ հետեւիլ չափերուն՝ առանց ոչ մէկ շփոթի:

Այս մութ ու պղտոր բեմադրութեան մէջ բռնաճաղրը կը ներկայացուի գանազան ձեւերով՝ վայրագ ֆիզիքական բռնաճաղրութիւն, շշուկով բռնաճաղրութիւն, առցանց բռնաճաղրութիւն:

Դժբախտաբար բռնաճաղրը տարիք չի ճանչնար: Ան կրնայ սկսիլ մանկութենէն եւ տարբեր ձեւերով ու չափանիշերով անցնիլ անհատի ամբողջ կեանքի հանգրուաններէն:

Ուրեմն ո՞վ է բռնաճաղրողը: Ան հոգեկան բարդ վիճակով անհատ մըն է, որ կը փորձէ թաքցնել իր թերութիւնները՝ իշխող վերաբերմունքի ուժին տակ: Ան անդադար կը փորձէ պայքար մղել իր հոգեկան վիճակին դէմ եւ իր ճշունդը ուրիշին վրայ բանեցնելով կը ձգտի հոգեկան հանգստութեան:

Գլխաւորաբար դպրոցներու, սկսնական շարժումներու կամ պատանեկան կազմակերպութիւններու մէջ շատ յաճախ նման դեպքեր կը պատահին:

Բռնաճաղրին ազդեցութիւնը վերացնելը հեշտ բան չէ, որովհետեւ անհատին հոգւոյն մէջ վտանգաւոր հետք կը ձգէ, նոյնիսկ եթէ քմծիծաղը ժամանակ մը ետք վերջ գտնէ, որովհետեւ ինքնավստահութեան նուագումը եւ անապահովութեան զգացումը երկար ժամանակի վրայ բարդոյթներ կը յառաջացնեն:

Բռնաճաղրը հասկնալը անոր դէմ դնելու առաջին քայլն է եւ այս մէկը կը պահանջէ ուժերու համախմբում նաեւ պատանիներու դիմադրութիւն:



### **Ընկի. Մակայի Թովմասեան**

*Եղած է Լիբանանի Երիտասարդական Միութեան անդամ, Կեդր. Վարչութեան տարբեր յանձնախումբերու, պատանեկան միութեան վարիչ ապա Ընդհանուր Վարիչ Մարմինի անդամ նաեւ մաս կազմած է Չաւարեան Ուսանողական Միութեան գանազան յանձնախումբերու:*

### Ն.Յ.Դ. պատանեկան միությունները՝ անսերենթ երաշխիքը դաշնակցական կուռ կազմակերպության



Ընկ. Ժան Նալլանեան  
Գանատա

*«Մենք ապրում ենք գաղափարով ու գործում ենք միմիայն գաղափարի համար, մեզ համար ուրիշ դրոշիչ պատճառներ չկան. ահա այդ ժամանակն է, որ մենք թեև առած կը թռչենք ետքներորդ երկինք եւ կը զգանք, որ մենք երջանիկների երջանիկն ենք. երջանկություն՝ որ պատճառում է ոչ մի երեխայի ժպիտը կամ մի կնոջ գուրգուրանքը, այլ մի ամբողջ տառապած ժողովրդի վերածնության կարելիության իտեալը..»:*

Արամ Մանուկեան  
«Օրագիր»

Գաղափարական շարժումները իրենց աշխարհայեացքը կենդանի պահելու համար կը դիմեն բանաւոր եւ գրաւոր միջոցներու, որպէսզի տարածեն ու ամուր պահեն իրենց տեսլականները հանրութեան եւ ընկերութեան զանազան մասներու մէջ: Յատկապէս իրենց անմիջական համակիրներուն եւ երկրպագուներուն համար կը ստեղծեն յատուկ կառոյցներ, որպէսզի կարենան մօտիկ պահել եւ թրծել այդ անդամները՝ իրենց գաղափարաբանութեան ակունքներով, անոնց տեսաբանական եւ գործնական դաստիարակութիւն ջամբելով:

Նման շարժումներ յատկապէս կարելորութիւն կու տան պատանի-պարմանուհի հատուածին, հաշուի առնելով գաղափարներու հեշտ ներմուծումը անոնց դեռատի հոգեմտաւոր ներաշխարհէն ներս, որոնք ծծումբի նման կը սնանին եւ կ'առաջնորդուին մատակարարուած նիւթերով, գաղափարական հարթակը հիմ ունենալով՝ կը մղուին շարժումին հաւատամքի նշաձողին:

Այդ իմաստով, կարելի է յիշատակել գաղափարական շարժումներու պատմական օրինակներ: Արդ, կոմունիստական պիոներներու շարժումը ցայտուն օրինակներէն է, ուր ոչ միայն պատանիներուն կը հրամցուէր շողշողուն համայնավարական լոզունգներ, «պրոլետարիատի յաղթանակի» մասին, այլ անոնց կ'ուղղորդէին մարտական ուղղորդութեամբ միանալու համաշխարհային ստուար յար եւ նման զանգուածի մը, ապահովելու պրոլետարիատի արդար համակարգի փառաւոր յաղթանակը: Այդ կարգի պատանիները կը մասնակցէին թաղային պատնէշներու կառուցման, թռուցիկներու ցրումին, կոմունիստական քարոզչութեան տարածման:

Երկրորդ օրինակը համաշխարհային պատմութեան մէջ նացիական German Youngsters in the Hitler Youth 10-14 տարեկան պատանիներու կազմակերպութիւնն էր, որ յաջողեցաւ համախմբել համաշխարհային առաջին պատերազմի աւարտով կրօնական եւ քաղաքական կողմնորոշումներով ստուար զանգուած մը պարմանուհիներէ եւ պատանիներէ, որոնք սնանեցան արիական ցեղի եւ նացիական վարդապետութեան գերակայութեամբ: Այդ շարժումը օրինականացուեցաւ 1933-էն ետք,



Երբ Հիթլերի կուսակցությունը իշխանութեան հասավ եւ 1940-ի աւարտին ունեցավ հինգ միլիոն պատանիներու համախմբում: Իսկ եթէ պատահէր, որ ծնողներ ընդդիմանային եւ արգելք հանդիսանային իրենց զաւակներուն անդամակցութեան, կը հարցաքննուէին եւ իրենց զաւակներուն կը զլացուէր գործի եւ ուսման պատեհ առիթներ:

Աւելի ուշ, 1945-ին, բոլոր պատանիները զինուորագրեցին բանակին մէջ, անոնց առաւելաբար անձնասպանական գործողութիւններ վստահելով:

Ինչ կը վերաբերի հայկական օրինակին, պետք է ընդգծել, որ հայկական դիցաբանութիւնը կարելոր դէր վստահած է պատանիին, ուր Վահագնի ձօնուած ծնունդը նկարագրած է որպէս՝ երկինքէն, երկրէն, ծիրանի ծովէն եւ ծիրակարմիր եղեգնի երկունքէն ծնած «խարտեաշ պատանի»: Կրակածել վարսերով եւ արեգակնային աչքերով Վահագնը պայքարեցաւ խաւարին դէմ, չար ոգին մարմնաւորող վիշապներու դէմ: Իրողապէս, ապագայ պատմութիւնը հայ ժողովուրդի, արդարացուց «Պատանի Վահագնի» շուրջ հիւսուած առասպելները ու անոր մէջ մարմնաւորուած խիզախ պատանիի կերպարը, որպէս չարի դէմ պայքարող եւ արդարութեան յաղթանակին հաւատացող մարտիկ:

Հայկական արդի պատմութեան շրջագծին մէջ դէմ յանդիման կու գանք մարտունակ պատանիի կերպարին, ուր մատղաշ տարիքին պատանիները ներառուեցան ժողովրդային ինքնապաշտպանութեան մէջ եւ անոնց վերապահուեցաւ իրենց ազգային գերիւնդիրներուն մասնակցելու ճակատագրական պահեր: Այսպէս օրինակ յեղափոխական պատմութեան մէջ կը տեսնենք, որ 1915-ի Վանի ինքնապաշտպանութեան հերոսամարտին հայ պատանիներու կամաւոր դերը օգտակար դարձաւ ինքնապաշտպանութեան ընթացքին թուրք զաւթիներու յառաջխաղացքը կասեցնելու: Անոնք ինքնակամ ձեռք երակարեցին խրամատներու մէջ պայքարող հայ ժողովրդային ուժերուն, առանցքային դէր խաղալով ընդհարումներու ճակատագիրը բարուրդ ու յաղթական աւարտի հասցնելուն մէջ:

Այդ պատանիները կեանքերնին վտանգեցին եւ արիւթեամբ չեզոքացուցին թշնամիին կողմէ նետուած ռումբերը: Այդ խիզախ հերոսներու կարգին կարելի է յիշատակել Ասլան Ասլանեան՝ 14 տարեկան, Ոստան (Անուշի տղան)՝ 14 տարեկան, Բաբգէն Իսաջանեան՝ 12 տարեկան, Մարտիրոս Գիւլօղլեան, Արամ Թովմասեան եւ ապագայ գրագետ Լեռ Կամսարը:

Այս փաղանգի ռահվիրաները նախակարապետներ են վեհ գաղափարի համար մարտնչող հայ պատանիի տեսակին, որոնք Վահագնի օրինակով, ի տարբերութիւն վերեւ յիշուած եւրոպական գերպետութիւններու պատանեկան շարժումներու օրինակներէն, կամաւոր եւ առանց պարտադրանքի, ազգային գաղափարախօսութիւնը մղիչ ուժ նկատելով, իրենց լուման ներդրեցին ազատագրական պայքարին, երբ «Մահ կամ Ազատութիւն» կանչը հնչեց:



Ցեղասպանության օրհասական երեւոյթներէն մէկը՝ ահաւորագոյնը, հայ մանուկի ու պատանիի հայկական դիմագիծի աղաւաղումն էր, իրմէ հայեցի ինքնութեան խլումը, բռնի կրօնափոխութեամբ եւ օտարամուտ կենցաղներու ջամբումով՝ օտարազգի որբանոցներու եւ թրքացումի բռնի պարտադրանքի ցմրուրը ճաշակեցնելով անոնց: Հոս է, որ հայկական կազմակերպութիւններ կարելոր համարեցին արտադպրոցական կեանքէն դուրս պատանի զանգուածները կազմակերպ եւ դաստիարակչական ապահով միջավայրերու մէջ համախմբելը, ստեղծելով զուգահեռ կառոյցներ, ուր հայ պատանին կրնայ ձեռք բերել հայերէնով արտայայտուելու պատեհութիւն: Նման կառոյցներու մէջ կարելի կ'ըլլայ հայ գրականութեան հանդէպ սեր ու ճաշակ հրամցնել, ազգային հերոսապատումներու ընդմէջէն պայքարունակ ոգիով սերունդ կերտել եւ պատանիին նկարագրին մէջ առաքինի վարժութիւններ ու սովորութիւններ ամրագրել, ինչպէս ճշդապահութիւն, ակնածանք՝ երեցի հանդէպ, յարգանք՝ ընտանիքի եւ շրջապատի հարազատներուն եւ այդ ամէնը թագադրել ազգային արժէքներուն հանդէպ ուղղափառ հաւատարմութեամբ:

Օտարամուտ բարքերու հարթիչ գլանի առաջըրդ ամնելու առաջին փորձերէն մէկը եղաւ 30-ականներուն՝ երբ սփիւռքի մէջ հասակ առնող սերունդին համար ստեղծուեցաւ համապատասխան կառոյց, ծանօթ Ցեղակրօնութիւն հռչակով, որ սկսաւ Գարեգին Նժդեհով: Այս կը նպատակադրէր հայ մատղաշ սերունդները փրկել օտարացումի ճիրաններէն, ստեղծելով յատուկ կազմակերպ կառոյց եւ դաւանանք: Արեւմտեան ափերու մէջ ստուար թիւով հայ ծնողներ հաւատալով այս հոսանքի փիլիսոփայութեան՝ անդամագրեցին իրենց զաւակները ու քաջալերեցին այդ կազմակերպութեան յառաջխաղացը, ցեղակրօնութեան ճամբով ցեղային արժէքներու կառչելու կոչերով, ամբօրէն փարելով հայկական ցեղի իւրայատկութիւններուն ու ջանալով տեսնել անոր մէջ այն բոլոր գործօնները, որոնք կ'երաշխաւորեն ազգի մշտնջենականութիւնն ու յաւերժի երթը:

Աւելի ուշ խամրեցաւ այդ շարժումին ճրագը, առաւելաբար երբ առաջատար դէմքը՝ Նժդեհը, կալանաւորուեցաւ խորհրդային-համայնավար մեկուսարաններուն մէջ, ուր հոն ալ մահացաւ:

Յիշատակելով Հայ Ցեղափոխական Դաշնակցութեան այս իմաստով փորձը, պէտք է ընդգծել որ Հ.Յ.Դ.-ն կարելորութիւն տուած է պատանի-պարմանուհիներու կազմակերպ աշխատանքին, անոնց ջամբելով մտաւոր եւ բարոյական զարգացման յատուկ դաստիարակչական նիւթեր, փոխանցելով քաղաքացիական կրթութիւն եւ ազգային դաստիարակութիւն, յեղափոխական դրուագներու եւ յեղափոխական դէմքերու կենսագրական հերոսապատումներու ընդմէջէն:

Առաջին հանգրուաններուն գաղափարական-կուսակցական գիծը չէր շեշտադրուած դաստիարակչական ընդհանուր մթնոլորտին մէջ: Ազգային երգերու եւ յեղափոխական դրուագներու պատումներով եւ պարտադիր ընթերցանութեան ընդմէջէն կը փորձուէր Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարաբանութեամբ թրծել անոնց միտքերը:

Մ. ԻՇԽԱՆ գեղեցկորեն կը բնութագրե հետեւեալը.

**«Պատանեկան միութիւնները չեն աւարտած իրենց դերն ու առաքելութիւնը: Որքան ալ պայմանները փոխուած ըլլան, որքան ալ տոր սերունդը դաստիարակութեան աւելի լայն դաշտեր ունենայ, այսօր պատանեկան միութեան ակումբները պետք է մնան ազգային ապրումի ներշնչարաններ եւ մաքուր ու գաղափարական նկարագիրներու կերտիչները»:**

40-ական թուակներէն ասդին կուսակցական շեշտադրումը աւելի աչքառու դարձաւ պատանեկան դաստիարակութեան մէջ, ուր Յ.Յ.Դաշնակցութեան կազմակերպութեան համար հիմնական նշանակութիւն ունեցաւ անոնց գործունէութիւնը, պատրաստելու ապագայի ՇԱՐՔԱՅԻՆ դաշնակցականները: Այդ գործը վստահուեցաւ փորձառու աւագ դաշնակցական դէմքերու, որպէսզի իրենց ուղղակի շունչով եւ գաղափարական ամրութեամբ դաստիարակչական գործընթացը առաջ մղուի, այն հեռանկարով, որ այդ շարքերուն մէջ պիտի թրծուին վաղուան Յ.Յ.Դաշնակցութեան երիտասարդները, որոնք ինքնակամ յանձն պիտի առնեն շարունակելու Յ.Յ.Դ.-ի առաքելութիւնը: Դետեւաբար, այդ միութեանականներուն մէջ պետք էր խտացուած տեսնել շինչ բարոյականի ու ամրակուռ գաղափարի տեր, Ֆիզիքական կարողութիւններով օժտուած հայրորդիներ, որոնք լիցքաւորուած ազգային, կուսակցական եւ քաղաքացիական կրթութեամբ՝ Յ.Յ.Դ.-ի շարքերուն ընդմէջէն պիտի ծառայեն ազգին ու հայրենիքին:

Դժուարութիւնը կը կայանար հոն, որ այդ գանգուածին մէջ կը տարբերէին 12-20 տարեկան պատանիներու եւ աւագ պատանի-երիտասարդներու ներկայութիւն մը, որոնց հետ Նոյնանման դաստիարակչական ծրագիրներով խօսիլը նպատակաւսաց չէր ըլլար, ամբողջական կուսակցական նպատակաւորուածութիւն չէր ապահովեր այդ մէկը: Առաւել, պետք է ընդունիք, որ ընդհանրապէս անդամակցութիւնը վերապահուած էր այրերու եւ կանայք կը բացակայէին այդ մասսայէն:

Այս հանգրուանին յաջորդեց 70-ականներու հասարակ յայտարարը՝ «Յեղափոխականացում-Քաղաքականացում»ի առթած գաղափարական զարթօնքը, որ տոր խանդավառութիւն յառաջացուց ատենոյ երիտասարդական լայն խաւերու մէջ: Ատոր արդիւնքով կառուցային տոր համակարգի մը հրամայականը միս ու ոսկոր ստացաւ, ապահովելով այսօրուան տարագով պատանեկան-երիտասարդական միութիւններու արդի օրերու պահանջքին յարմարող բրգային անկախ կառոյց, որ փոխարինեց տեղական կոմիտէներու լիազօրութիւններու ներքեւ գործելու տարբերակին, ուր սահմանափակ ծլարձակումի առիթներ կը ներկայանար պատանիին: Ինքնադաստիարակութեան եւ ինքնակերտումի գործօնները եւ տարեկից վարիչ պատասխանատուներու ներկայութիւնը ժայթքեցուց պատանիին մէջ անթեղուած կազմակերպական եւ անհատական կարողականութիւնները: Գարեգին Նժդեհ հետեւեալ տարագին մէջ ամփոփած է այդ թաքուն հարստութեան ցայտումի անհրաժեշտութիւնը՝ «Ինքնաճանաչումը».

**«Ծանի՛ր զքեզ, հա՛յ երիտասարդ: Զո մէջ մի գանձ արկը կայ անբաւ ու անհաշիւ հարստութեամբ, բայց դու չես օգտուում նրանից, որովհետեւ քեզ պակասում է այդ արկղի ոսկէ բանալին՝ ինքնաճանաչութիւնը:**

**Ծանի՛ր զքեզ ...Նոյնացի՛ր քո ներքին մարդուն հետ եւ դու պիտի զգաս քո մէջ ծովացումը հոգեկան նորանոր ուժերի, դու պիտի դառնաս աւելի քան զօրեղ...»:**



Յիշողութեանս մէջ ամրագրուած է պատանեկան միութեան առաքելութեան հետ կապուած նաեւ այլ փորձ մը: Արդ, 1979-80-ականներուն սկիզբը դաշնակցական շրջանի մը շարքերուն մէջ գտնուեցաւ հոսանք մը, որ փորձեց այլ մօտեցում կիրառել պատանեկանի դաստիարակչական աշխատանքին մէջ, աւելի ազատական Liberal մօտեցումներով հունաւորելով այդ աշխատանքը: Այդ թռիչքներուն ներքեւ կը փորձուէր ուղղորդել նուազ դաշնակցական ուղղակի դաստիարակութիւն, ներմուծելով աւելի ընդհանրական ազգային շունչ, այն դիտաւորութեամբ, որ կանուխէն չկաշկանդուի եւ չկաղապարուի պատանիի մտածելակերպը: Այդ համոզումներով զինուած ընկերները կը կարծէին, որ հասունութեան տարիքին աւելի՛ գիտակից աւագ պատանին կրնայ ճիշդ կողմնորոշուիլ եւ յառել այն քաղաքական աշխարհահայեացքին, որ իր համոզումներուն հետ աւելի կը համընկնի: Պատմութեան համար կ'արձանագրեմ այս ամէնը, որ ամբողջական պատկերացում ունենանք բոլոր խմորումներէն, որոնք արգասաբերեցին այս օրերու կազմակերպական տարազը՝ իր ամէն ստորագելիներով:

Անձնապէս վերել յիշատակուած խոտոր ձեւը ընդունելու եւ մարսելու «դժուարութիւնը» ապրած եմ Յալէպի Զ.Ո.Մ.ի շարքերուն մէջ եւ զօրաւոր ընդդիմութիւն ցուցաբերած՝ վիժեցնելու համար այդ ուղղուածութիւնը, հաւատալով, որ ուղղորդուած եւ կէտ նպատակին ուղղակի դաստիարակութիւնն է, որ կ'ապահովէ գաղափարական ամրութիւն եւ ճիշդ սերնդափոխութեան դրօշաբեր կ'երաշխաւորուի միայն այդ միջոցով: Պէտք է հաստատել, որ կարճ ժամանակ ետք, իր սաղմին մէջ խեղդուեցաւ այդ փորձը՝ «մտքի մարգանքը»: Նոյն օրերուն էր, որ Սուրիոյ մէջ պատանեկաներիտասարդական կառոյցը երկսեռացաւ, ինչ որ իր բարերար ներգործօն ազդեցութիւնը ունեցաւ Յ.Յ.Դ.-ի անդամական ընկերական շարքերուն վրայ, թէ որակական արկղի հարստացման տեսակետէն եւ միեւնոյն ժամանակ թուական ուռճացումի իմաստով:

Պէտք է հաստատել, որ իւրաքանչիւր վարդապետութիւն, կուսակցական միաւոր, նոյնիսկ կրօնական հաւաքականութիւն, կ'աշխատի կանուխէն ներգրաւել իր համակիր զանգուածները (նոյնիսկ քրիստոնէութիւնը այդ ոճին կը հաւատայ մեր պարագային վկայ կիրակնօրեայ դպրոցները), ապահովելու համար իր վարդապետութեան մշտնջենականութիւնը, որովհետեւ պատանին այդ տարիքին ի՛նչ ունակութիւն ունի հասկնալու ու հաղորդուելու խօսքի իմացականութեան ու տարողութեան հետ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան աւանդած դաստիարակութիւնը հեռու է Շօվինիզմէ եւ գերակայութենէ: Դաշնակցութիւնը ամենեւին չէ՛ յոխորտած, թէ ի՛նքն է լաւագոյնը եւ անմրցելին եւ գինովցած իր ազգային-յեղափոխական անյողողող ձեռքբերումներով, առաւել մեծամտութիւնը եւ յաւակնոտութիւնը որպէս դեղատոմս չէ գործածած իր աշխարհայեացքը եւ պատմափիլիսոփայութիւնը հրամցնելու հայ զանգուածներուն:

Անձնդիր ծառայութեան կոչուած հսկայ բանակ մը կամաւորաբար զինուորագրուած է դաշնակցական մատղաշ հայ պատանի-պարմանուհիներու դաստիարակութեան վեհանձն ու բժախնդիր աշխատանքին: Այլը ընդունելով, յեղափոխական եւ հանրային գործը կարեւորելով, կուսակցա-

կան սեփական եւ հարազատ գիտելիքներուն ամբօրէն կառչելով, ուրոյն դաշնակցական գաղափարախօսութիւնը ներկայացնելով խնդրոյ առարկայ դաստիարակները, իսլաւարի ասպետները, կ'աշխատին ամրացնելու Յ.Յ.Դ.-ի պատուանդանը եւ ամրագրելու անոր անխափան երթը:

Վստահ ենք, որ այդ դրօշին ներքեւ դեռ ե՛ւս պիտի համախմբուին մարտունակ սերունդներ, գօտեպնդուած ազգային գաղափարախօսութեամբ, տոգորուած Հայ Դատի պայքարի անժամանցելիութեամբ, սելեռակետ ունենալով՝ Ազատ, Անկախ, Միացեալ Հայաստանի տեսլականը:

Ընկ. Տոքթ. Բարգէն Փափագեան առիթով մը կը խրախուսէր Յ.Յ. Դաշնակցութեան պատանիները ըսելով.

«Դաշնակցական անուշ պատանիներ, Դաշնակցութեան դպրոցին մէջ թրծուեցէ՛ք, թրծեցէ՛ք ձեր հոգին՝ ծանօթանալով մեր պանթոնի հարստութիւնը կազմող անուններու կեանքին, անսահման նուիրումին: Մոռցէ՛ք վայրկեան մը առօրեան, նայեցէ՛ք ապագային, որովհետեւ ապագան դուք է՛ք: Իսկ Դաշնակցութեան ապագային ուժը, կախում ունի ձեր հզօրութենէն»:

Դաշնակցական պատանիին արծազանգը մէկ է այդ կոչին՝ «միշտ պատրաստ, յանուն ազգի ու հայրենիքի»:



**Ընկ.Ժան Հալլաճեան**

*Ծնեալ Հալլէպ 1959-ին: Երկրորդական ուսումը ստացած է Հալլէպի Ազգային Զարէն Եփփէ ճեմարանէն, իսկ համալսարանական ուսումը՝ Հալլէպի պետական համալսարանի Electronics երկրաչափական ճիւղէն: Ամուսնացած է Խոնարի Ղազարեանի հետ, ունի երկու մանչ զաւակ:*

*Որպէս երկրաչափ պաշտօնավարած է Սուրիոյ պետական կառոյցներուն մէջ, ապա ունեցած է իր սեփական երկրաչափական գրասենեակը:*

*Անդամակցած է Սուրիոյ Զրիտաւիրոր Պատանեկան եւ Յ.Յ.Դ. Զրիտաւիրոր Ուսանողական Միութիւններուն: Հիմնադիր անդամ եղած է Յ.Յ.Դ. Սուրիոյ Երիտասարդական Միութեան: Նպաստած է Յ.Յ.Դ. երիտասարդական-պատանեկան միութիւններու երկսեռացման շարժման: Մաս կազմած է Սուրիոյ իրերյաջորդ կեդրոնական կոմիտէներուն 1988-1997:*

*90-ականներու սկիզբը գործօն մասնկցութիւն բերած է Արցախի օժանդակութեան նախաձեռնութիւններուն:*

*Մասնակցած է «Գանձասար» շաբաթաթերթի հիմնադրութեան աշխատանքներուն: Վարած է Հալլէպի «Արեւելք» հրատարակչական հաստատութեան տնօրէնի պաշտօնը:*

*Հրապարակախօս է հայկական կուսակցական մամուլին նաեւ հայկական լրատուամիջոցներու մէջ՝ հանդէս գալով հայկական-միջազգային առօրեայ նիւթերու մեկնաբանութիւններով:*

*2000 թուականէն ի վեր հաստատուած է Գանատա-Թորոնթօ:*

*Գանատայի մէջ ղեկավարած է Սուրիոյ օժանդակութեան շտապի աշխատանքները:*

*Կ'աշխատի գանատական երկրաչափական հաստատութեան մը մէջ:*

## ՄԱՐԴԸ, ՆԱՅԸ, ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆԸ

*Ընկհ.Սեւան Ճահայազեան  
Սուրիա*



Բոլորս մտահոգուած ենք մեր պատանիներու ազգային դաստիարակութեամբ: Իւրաքանչիւրը իր ամպիոնէն կը բարձրաձայնէ այս յոյժ կարեւոր եւ հրատապ հարցը, որովհետեւ կը գիտակցինք, որ առանց ազգային դաստիարակութեան պիտի չունենանք յանձնառու սերունդ, որ պատրաստ ըլլայ մեր ազգային նպատակներու իրականացման համար ամէն ինչ զոհելու: Յետեւաբար մեր իսկական պայքարը նախ ներազգային ճակատի վրայ պետք է մղուի, որովհետեւ հիմնականին մէջ ինքնութեան խնդիր ունինք որ պետք է ջամբուի բոլորին ջանքերով սկսեալ տունէն, անցնելով դպրոցէն, եկեղեցիէն եւ միութենէն:


Այս պարունակին մէջ գերխնդիր են մարդկային արժեքները, սկզբունքներն ու ըմբռնումները, այլ խօսքով մարդ Էակին բարձրագոյն տիպարը իր վսեմ յատկանիշներով եւ ազնիւ կեցուածքներով, առանց որուն մարդ կը դադրի մարդ ըլլալէ՝ անկախ իր ճակտին դաջուած ազգային պիտակէն:

Մարդկային եւ բարոյական վսեմ արժեքները բաղադրիչներ են, որ մարդավարի ապրելու եղանակը կը ստեղծեն, կրթութիւն մը, որ կապ չունի ստացած ուսումիդ եւ ամբարած գիտելիքիդ հետ, այլեւ կը կառավարէ անհատին մտածողութիւնը, կը չափէ հարցերու նկատմամբ անոր արդար մօտեցումը, կը գատորոշէ առաջնահերթութիւններու եւ կեցուածքներու ճշդումը, Նոյնիսկ անոր նիստն ու կացը, որ հիմնականապէս կու գայ ընտանիքէն եւ ապա ամենօրեայ շրջապատէն՝ այս պարագային պատանեկան միութենէն:

Յատկապէս սփիւռքի մէջ այս մարդու տեսակն է, որ պետք է պատրաստենք, որ բնականաբար պիտի դիմագրաւէ երկութեան խնդիրներ՝ մէկ կողմէն իր ապրած երկրի ապրելակերպն ու բարքերը պահելու, միւս կողմէն իր ազգային ինքնութիւնը պահելու եւ հզօրացնելու, որ անկասկած պիտի պահանջէ յատուկ ճիգ եւ խնամք: Այս երկպատկանելիութեան զգացումը եւ երկուստեք յագուրդ տալու գիտակցութիւնը ինքնին առանձնայատկութիւններ են, որ խարխիսը պիտի կազմեն ազգային ինքնութեան:

Իսկ այդ իսկական մարդ հայու տիպարը մէկ օրէն միւսը չէ, որ կը պատրաստուի, այլեւ կը կարօտի ամենօրեայ հոգածութեան եւ գուրգուրանքի: Հայօրէն շնչելու դաստիարակութիւնը պետք է վերածենք ապրելակերպի՝ տան պատերէն, դպրոցական գրասեղաններէն եւ միութենական լոգունգներէն անդին... Հայը, հայերէնը, հայութիւնն ու հայրենիքը պետք է դարձնենք ապրելու եղանակ:

Հասկնալի է, որ շատ են ճնշող իրադրութիւնները՝ օտար ամուսնութիւններ, արհեստագիտութեան արագընթաց սլացք, համաշխարհայնացման ազդեցութիւն, միջավայրի անմիջական դերակատարութիւն, սա-





կայն հայ մնալու եւ հայօրէն ապրելու համար պայքար ունինք մղելու, իսկ այս պայքարին յառաջամարտիկները բոլորս ենք անխտիր՝ ծնողք, ուսուցիչ, միութենական պատասխանատու: Գիտակցութիւն սերմանելը կը դըրսեւորուի հայ լեզուի հանդէպ մեր հոգատարութեամբ, մշակոյթի պահպանման առնչութեամբ մեր բժախնդրութեամբ, մեր բարքերն ու սովորութիւնները փոխանցելու զգաստութեամբ, պատմութիւնը հաղորդելու պարկեշտութեամբ:

Այս արժեքային համակարգը որդեգրելով է, որ իսկական մարդու կողքին պիտի պատրաստենք իսկական հայը, որոնք զուգահեռաբար փրկարար դեր պիտի կատարեն դաստարակելու անբիժ դաշնակցականներ, ականաւոր յաջորդներ եւ ապագայի ջահակիրներ մեր գալիք իսկայ աշխատանքներուն:

Պատանեկան միութիւնները պետք չէ մտահան ընեն Ս.Վրացեանի այն միտքը «...Ինչ եւ լինի, ժամանակն ու միջավայրը, գաղափարական ու բարոյական ենթահողը չեն կարող փոխուիլ, որովհետեւ տուեալ պայմաններում դաշնակցականը պետք է լինի բարոյական անհատ, որ ձգտում է անձնուիրաբար հայրենիքի ազատութեան եւ ընկերային արդարութեան պայմանների ստեղծման, որոնք իբրեւ փարոս, պէտք է լուսաւորեն դաշնակցական պատանիի կեանքի ուղին»:

Յետեւաբար որպէսզի արդարացնենք պատանեկան միութիւններու գոյութիւնը եւ կուսակցական այդ դպրոցէն շրջանաւարտներուն համար Դաշնակցութիւնը դարձնենք ներքին համոզում եւ ապրելակերպ, ապա ուրեմն մեր պարտքն է դաստիարակել մարդասիրական արժանիքներով մարդը եւ ազգային հարստութեան հաւատարիմ հայրենասէրը եւ այսպիսով միայն հաստատած կ'ըլլանք Բուբէն Տէր Մինասեանի այն խօսքը, որ «Դաշնակցականին երբ Յայաստան ըսես, ան կը տկարանայ»:




**Ընկի.Սեան Շահպազեան**

*Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Զարէն Եփփէ Ճեմարանէն, իսկ բարձրագոյն կրթութիւնը՝ Յալէպի պետական համալսարանի անգլերէն գրականութեան բաժանմունքէն: Անդամակցած է Դ.Յ.Դ. պատանեկան, երիտասարդական եւ ուսանողական միութիւններուն: Վարած է ՍԵՄ-ի կեդրոնական վարչութեան քարտուղարի եւ Պ.Ս.Ընդի.Վարիչ մարմնի ատենապետի պաշտօնները: Մաս կազմած է «Գանձասար» շաբաթաթերթի խմբագրակազմին: Պաշտօնավարած է Ազգային Չաւարեան վարժարանի եւ Ազգ.Զարէն Եփփէ Ճեմարանի մէջ: Ստանձնած է նաեւ կազմակերպական աշխատանքներ:*



Ֆելիքս Խաչատրյանի  
Ֆրանսա



Արման Դանիելյանի  
Նայասրան





Մելինա Մանուկեան  
Զարախը

**Գտիր Բառերը**

Գտիր 14 բառեր՝ նիւթն է «Բանակում»:

ա	թ	բ	տ	է	ա	ե	ո	ր	լ	վ	ն	փ	ծ	ղ	ո	հ
ժ	ո	դ	ա	պ	զ	ղ	տ	ա	յ	լ	ն	ր	գ	ե	կ	խ
ղ	պ	յ	ծ	ն	փ	թ	հ	ջ	բ	ա	դ	պ	զ	ծ	օ	ն
ն	ա	գ	դ	ի	ա	զ	ր	ծ	ն	ա	ղ	ա	լ	ծ	զ	
զ	հ	ա	ն	ծ	ի	յ	զ	ժ	օ	թ	զ	լ	ջ	խ	լ	ի
խ	ա	ղ	ն	ր	լ	ո	ա	ջ	բ	զ	ն	ն	յ	դ	ղ	ղ
ա	յ	խ	յ	ն	ն	դ	լ	վ	տ	ն	ա	զ	ո	ա	ժ	օ
ղ	ո	ն	ա	զ	փ	ա	պ	ի	ա	ե	տ	ի	ն	զ	ծ	խ
յ	լ	դ	ղ	պ	ժ	թ	ա	ժ	յ	յ	ժ	տ	վ	ե	պ	պ
ի	թ	բ	օ	խ	ժ	դ	խ	վ	ժ	լ	ր	ջ	ն	տ	լ	ա
ժ	ի	յ	ր	ջ	ո	պ	ա	ջ	ի	դ	օ	ծ	լ	ի	ն	դ
յ	լ	ժ	դ	պ	զ	ր	ն	է	տ	լ	ր	ժ	խ	ն	ա	ժ
ա	ն	ղ	դ	տ	ի	թ	վ	պ	ա	ծ	ջ	ն	ի	ն	տ	ն
ծ	դ	ժ	ջ	է	ր	զ	ր	յ	լ	ժ	գ	ծ	ա	դ	ղ	ի
տ	ե	ջ	ա	ժ	փ	զ	ա	դ	ո	ն	լ	լ	ջ	ե	յ	վ
ա	ժ	ա	ո	յ	թ	ր	ն	ա	ր	բ	դ	բ	ա	ա	լ	փ
ղ	դ	ղ	պ	փ	գ	ա	լ	ժ	ա	ժ	լ	ժ	պ	զ	յ	ո
ո	յ	խ	ժ	տ	ծ	պ	դ	ն	բ	ա	ն	ա	յ	ո	լ	ժ


**Օգնութիւն**

- |                |               |
|----------------|---------------|
| 1. Մարգանք     | 8. Պատանի     |
| 2. Սողալ       | 9. Բանակավայր |
| 3. Պահակութիւն | 10. Բանակում  |
| 4. Վրան        | 11. Ամառ      |
| 5. Օրակարգ     | 12. Զայլերգ   |
| 6. Դրօշակ      | 13. Վարիչ     |
| 7. Հանդես      | 14. Խաղեր     |



Սիլվա Ոսկերիչեան  
Ռիթա Մահտեսեան  
Յունաստան

## Հայկական խաչբառ



### Across

3. Եւրոպայի հայկական միակ ամէնօրեայ թերթը
4. Ո՞ր էր հիմնադրուեցաւ ՀՅԴ-ան
6. Աշխարհի ամենամեծ կղզին
9. Հայաստանի ամենամեծ մարզը

### Down

1. Արքայից Արքա
2. Երեւանի հին անունը
3. Հագար ու մէկ եկեղեցիներու քաղաքը
5. Ճերմակ
6. Ամերիկայի ամենամեծ նահանգը
7. Սոսէի ամուսինը
8. ....Չաւարեան

